

9(47.925)

4-18

Պր. Հարությունյանը

ՆԱՅԱՍՏԱՆԻ

ՕԳՆՈՒԹՅԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ե

(Կ 0 4)

«ՆԱՅԱՍՏԱՆ»

9(7)
Վ-30

См. а. г. в.

Ա. Վ. ՎԱՐԳՍՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

(1921—1937) -

529



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ

204-ն իր նպատակներով և կազմակերպական սիստեմով, անկախ իր անդամների քաղաքական դավանանքից և կուսակցական հանգամանքից, հասարակական մարմին է և, իբրև այդպիսին, նա իրեն հայտարարում է շեղո՞ք՝ քաղաքական և կուսակցական պայքարի հանդեպ:

204-ի «Ստատուտ»-ից

ВАРДАПЕТЯН АРШАК ВАРДОВИЧ
КОМИТЕТ ПОМОЩИ АРМЕНИИ

1—6—1

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван, 1966

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Ք

Հայաստանի օգնության կոմիտեն (204) կազմակերպվեց 1921 թվականի աշնանը:

204-ը հասարակական կազմակերպություն է, որը սրտագին ընդունելության արժանացավ աշխարհով մեկ ցրված հայ աշխատավորների կողմից: 204-ի ստեղծմամբ արտասահմանի հայ գաղթավայրերում սկսվեց հասարակական լայն շարժում՝ հօգուտ հայ ժողովրդի և սովետական կառավարության:

Երևանում 204-ի գլխավոր վարչության կազմակերպումից հետո, ինչպես ՍՍՌՄ-ի տերիտորիայի հայաբնակ կենտրոններում, այնպես էլ արտասահմանի գաղութահայ օջախներում ստեղծվեցին 204-ի բաղմաթիվ ճյուղեր: Մինչև 1936 թվականը Եվրոպայում, Ամերիկայում, Աֆրիկայում կազմակերպվեցին 204-ի ավելի քան 200 մասնաճյուղեր, շուրջ 10.000 անդամներով: 204-երի առաջացումը պայմանավորված էր Հայաստանի այն ժամանակվա տնտեսական վիճակով: Ուրեմն, Հայաստանի սովյալ բնակչությանն օգնելու գործը եղել է 204-ի անմիջական նպատակը, իսկ 204-ի հիմնական խնդիրն էր՝ օժանդակել Սովետական Հայաստանի կառավարությանը երկրի վերաշինության և ներգաղթի կազմակերպման գործում, պրոպագանդել սիյուռքահայության մեջ Հայաստանի նվաճումները, ճշգրիտ տեղեկություններ տալ արտասահմանի հայ աշխատավորներին սովետական իշխանության մասին և, վերջապես, սիյուռքահայ աշխատավորներին մասնակից դարձնել Հայաստանում ծավալվող շինարարությանը:

204-ի կողմից հայ ժողովրդին ցույց տված նյութական օժանդակությունը մեծ չէր: Սովետական Հայաստանն այն ժամանակ բազմակողմանի անշահախնդիր եղբայրական վիթխարի օգնություն էր ստանում Սովետական Ռուսաստանից: Ուրեմն՝ 204-ի կողմից Հայկական ՍՍՌ-ին ցույց տված օգնությունը եղել է որպես մի օժանդակ միջոց, որը, իհարկե, մեծ բան չէր այն հսկայական կապիտալ ներդրումների համեմատությամբ, որ կատարվում էր սովետական կառավարության կողմից:

Սակայն մեծ էր 204-ի դերն ու նշանակությունը բարոյաքաղաքական տեսակետից:

Ռուսաստանում և Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ կանոնավորելու իր հարաբերությունները հարևան երկրների հետ:

Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության կենսագործումով միայն հնարավոր եղավ Անդրկովկասի ժողովուրդների միջև ստեղծել ազգային այնպիսի խաղաղություն և բարեկամություն, տնտեսական, քաղաքական, կուլտուրական այնպիսի համագործակցություն, որպիսին, ինչպես գրում էր Վ. Ի. Լենինը, «չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»:

Սովետական իշխանության տարիներին արմատական փոփոխություններ տեղի ունեցան Հայկական ՍՍՌ-ի էկոնոմիկայի և կուլտուրայի մեջ, որոնք հայ ժողովրդի նոր, իսկական ծաղկումն ու բարգավաճումն են նշանավորում:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին Հայաստանում հսկայական կապիտալ ծախսումներ են կատարվել գյուղատնտեսության, արդյունաբերության և կուլտուրական շինարարության զարգացման համար: Այսպես, օրինակ, ռեսպուբլիկայի քայքայված այգեգործությունը վերականգնելու և զարգացնելու համար 1921 թվականի աշնանը բաց թողնվեց 15 միլիարդ ռուբլի (հայկական շեկերով) վարկ: Այնուհետև կապիտալ ներդրումների ծավալը գյուղատնտեսության մեջ տարեց-տարի ավելացավ:

Կապիտալ ներդրումների ծավալը հատկապես աճեց ինդուստրացման բնագավառում: Հասկանալի է, առանց բարձր կազմակերպված խոշոր արդյունաբերության, ինչպես սովորեցնում էր Վ. Ի. Լենինը, չի կարող նույնիսկ խոսք լինել սոցիալիզմի մասին՝ ընդհանրապես, և է՛լ ավելի քիչ խոսք կարող է լինել սոցիալիզմի մասին գյուղացիական երկրի նկատմամբ:

Կոմունիստական պարտիայի և կառավարության ջերմ հոգատարության շնորհիվ Հայկական ՍՍՌ-ն, մինչև երկրորդ հնգամյակի վերջը, ստեղծեց զարգացած ծանր ինդուստրիա, որի համար բաց թողնված կապիտալ ներդրումները տարեց-տարի աճում են: Այսպես, եթե առաջին հնգամյակում կապիտալ ներդրումների ծախսումները, գլխավորապես արդյունաբերական շինարարության, կազմել են 384 միլիոն ռուբլի, ապա երկրորդ հնգամյակում այն կազմեց ավելի քան մեկ միլիարդ ռուբլի:

Հայկական ՍՍՌ-ում արագ կերպով զարգացան գիտությունը, արվեստը, գրականությունը: Ժողովուրդը մեծ հաջողությունների հասավ կուլտուրական շինարարության բնագավառում: Մի խոսքով, հայ ժողովուրդը երջանկություն ունեցավ սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում բարգավաճել և իր երկրում կառուցել սոցիալիզմ:

1937 թ. Հայաստանի օգնության կոմիտեի լուծարքի պահին Սովետական Հայաստանը դարձել էր անճանաչելի՝ իր հսկայական նվաճումներով հանդերձ:

Այս գրքում ցույց է տրվում, թե ինչպիսի կարեկից և ուշադիր վերաբերմունք են ցույց տվել ՍՍՌ-ի տերիտորիայում և արտասահմանում բնակություն հաստատած հայ աշխատավորները Սովետական Հայաստանի նկատմամբ, որը հսկայական ջանքեր էր գործադրում տասնյակ հազարավոր գաղթականներին ու որբերին խնամելու, երկիրը սովից ու ավերվածությունից դուրս բերելու և տնտեսությունը զարգացնելու համար:

Գրքում հիմնականում լուսաբանվում է 204-ի գլխավոր վարչության և նրա սովետական ու արտասահմանյան ճյուղերի գործունեությունը:

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ
ՎԻՃԱԿԸ 1921—1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Քաղաքացիական պատերազմը ավարտվելուց հետո սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ ծայր աստիճանի քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման գործին: Երկարամյա պատերազմները հիմնովին ավերել էին երկիրը: Դրությունը ծանր էր ոչ միայն արդյունաբերության, այլև պարենային բնագավառում: Վ. Ի. Լենինը, բնութագրելով Ռուսաստանի արդյունաբերության վիճակը, գրում էր. «1920 թվականի աշնանն ու ձմռանը մեր խոշոր արդյունաբերության կարևոր ճյուղերից մի քանիսը գործարկվեցին, բայց հարկ եղավ նրանց աշխատանքը ընդհատել... որովհետև մեզանում պարենի և վառելիքի բավարար ֆոնդ չգտնվեց»¹:

Իրոք, 1920 թվականին Ռուսաստանում չէին գործում բազմաթիվ ածխահորեր, ֆաբրիկաներ և գործարաններ: Արդյունաբերության համախառն արտադրանքը, 1913 թվականի համեմատությամբ, 1921 թվականին կրճատվել էր 7 անգամ, իսկ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը կազմում էր մինչպատերազմյան արտադրանքի կեսը:

Ծանր վիճակ գոյություն ուներ գյուղատնտեսության բնագավառում. զգալիորեն կրճատվել էին ցանքատարածությունները, ցածր էր բերքատվությունը: Բացի այդ, վրա հասավ 1920 թվականի երաշտը, որն աներևակայելի չափով վատացրեց բնակչության դրությունը:

Այդ դժվարությունները հաղթահարելու համար կոմունիստական պարտիան անցկացրեց մի շարք միջոցառումներ: Պետության առաջին անհետաձգելի գործը եղավ բնակչության համար սննդամթերք, իսկ արդյունաբերությանը՝ հումք հայթայթելը:

Սովետական կառավարությունը արտասահմանից ներմուծեց հումքի կարևոր տեսակներ: Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը պարտիայի X համագումարում ասաց. «Այսօր լուր է ստացված, որ Լոնդոնում ստորագրված է 18½ միլիոն փուլի ածխի գործարք, որը մենք որոշեցինք գնել Պետրոգրադի ու տեքստիլ արդյունաբերությունը կենդանացնելու համար»¹:

1921 թվականին Սովետական Ռուսաստանը գտնվում էր պարենային և վառելիքային ճգնաժամի մեջ: Ժողովրդի զգալի մասը ապրեց կարճատև սով, որը հետևանք էր Ռուսաստանի հետամնացության և երկարատև աչք պատերազմների, որոնք աշխատավորների վզին փաթաթեցին օտարերկրյա իմպերիալիստները: Սովը հաղթահարելու համար կոմունիստական պարտիան և կառավարությունը ստեղծեցին «Սովյալների օգնության կենտրոնական հանձնաժողով»՝ Մ. Ի. Կալինինի գլխավորությամբ:

Պետությունը սովի ենթակա շրջանների գյուղացիությանը ազատեց բնահարկից, միաժամանակ միլիոնավոր փուլի հաց բաց թողեց նրանց հասարակական սննդի համար և սերմ՝ ցանքի համար:

Սովյալ բնակչությանն օգնություն կազմակերպելու համար ստեղծվեցին «սովյալների օգնության կոմիտեներ»: Այդ կապակցությամբ լայն շարժում առաջ եկավ նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասի աշխատավորների մեջ:

Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորները, չնայած գտնվում էին պարենային վատ պայմաններում, բայց և այնպես որոշ օգնություն ցույց տվեցին Ռուսաստանի սովյալներին:

ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1921 թվականի օգոստոսի 27-ի

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 524—525:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 277:

որոշմամբ ստեղծվեց «Սովետական Ռուսաստանի սովյալնե-րին օգնող կենտրոնական հանձնաժողով», որի միջոցով ռես-պուբլիկայի զանազան շրջաններում կազմակերպվում են նվիրատվություններ՝ հօգուտ Ռուսաստանի սովյալների:

Սովետական Ռուսաստանի սովյալներին օգնության հա-սավ նաև միջազգային պրոլետարիատը՝ Կոմունիստական ինտերնացիոնալի ղեկավարությունները: 1921 թվականի հուլի-սի 6-ին Ա. Մ. Գորկին հատուկ կոչով դիմեց արտասահմանի աշխատավորներին և նրանցից օգնություն խնդրեց: «Խնդրում եմ Եվրոպայի և Ամերիկայի բոլոր ազնիվ մարդկանց,— գրում է Մ. Գորկին,— արագ կերպով օգնության հասնել ռուս ժողովրդին, սովեթ հաց և բժշկական օգնություն»¹:

1921 թվականի օգոստոսի 6-ին «Պրավդա» թերթում տպա-գրվեց Վ. Ի. Լենինի կոչ-դիմումը՝ ուղղված միջազգային բան-վոր դասակարգին: «Ռուսաստանի մի քանի նահանգներում,— ասված է դիմումում,— սով է, որը, ըստ երևույթին, միայն մի քիչ է պակաս 1891 թվականի աղետից:

Գա ծանր հետևանքն է Ռուսաստանի հետամնացության և յոթնամյա՝ սկզբում իմպերիալիստական, հետո փաղաքացի-ական պատերազմի, որը բանվորների ու գյուղացիների վզին փաթաթեցին բոլոր երկրների կալվածատերերն ու կապիտա-լիստները:

Պահանջվում է օգնություն: Բանվորների և գյուղացիների Սովետական ռեսպուբլիկան սպասում է այդ օգնությունը աշխատավորությունից, արդյունաբերական բանվորներից և մանր հողագործներից»²:

Եվրոպայի և Ամերիկայի աշխատավորները մեծ սիրով ընդունեցին Վ. Ի. Լենինի և Մ. Գորկու կոչ-դիմումները և պատրաստակամություն հայտնեցին մասնակցել սովյալ բնակչությանը օգնություն ցույց տալու գործին:

Կոմինտերնի նախաձեռնությամբ ստեղծվեց «Բանվորների օգնության միջազգային կոմիտե»: Այնուհետև, արտասահ-մանյան մի շարք երկրներում կոմունիստական պարտիանե-

րի, արհմիությունների և հասարակական այլ կազմակերպու-թյունների կողմից ստեղծվեցին հատուկ ֆոնդեր՝ հօգուտ Ռուսաստանի սովյալների:

Վ. Ի. Լենինը խոշոր նշանակություն էր տալիս Եվրոպայի և Ամերիկայի աշխատավորների կողմից Ռուսաստանի սով-յալներին օգնություն կազմակերպելու գործին: Քանի որ դը-րանով իսկ կրկին անգամ հանդես էր գալիս միջազգային բանվոր դասակարգի սերն ու համերաշխությունը դեպի սո-վետների երկիրը:

Սովի դժվարին տարիներին սովետական կառավարությու-նը արտակարգ միջոցների դիմեց արտասահմանից հացի պա-շարներ ձեռք բերելու համար: Վ. Ի. Լենինը սովետական առևտրական օրգաններին և արտասահման մեկնած սովե-տական առևտրական պատվիրակության անդամներին ա-ռաջարկեց կատարել հացի և անհրաժեշտ ապրանքների գը-նումներ: Այսպես, օրինակ, Լոնդոն մեկնած պատվիրակու-թյանը նա գրել է. «Ձեզ տրված է 2 միլիոն փուլթ հացահա-տիկի կարգագիր: Հարկավոր է շտապ կարգով ստանալ, գը-նումներ կատարեք որտեղից հարմար է, գնի համար շնեղ-վել»¹:

Արտաքին առևտրի ժողկոմատին հասցեագրված նամակ-ներից մեկում Վ. Ի. Լենինը գրել է. «Բոլոր տեսակի փո-խառությունները մեզ համար շատ կարևոր են, զլխավորն այն է, որ ստանանք»²:

Սովետական կառավարությունը սովյալ բնակչությանը և երեսիաներին օգնություն կազմակերպելու հարցը մինչև ան-գամ բարձրացրեց Ազգերի լիգայի և կապիտալիստական խո-շոր պետությունների կառավարությունների առջև: Սակայն կապիտալիստական կառավարող շրջանները Ռուսաստանում ծագած սովը և պարենային դժվարությունները դիտեցին որ-պես մի միջոց՝ սովետների երկրի հետ իրենց հաշիվները մարրելու համար: Այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի կառավարության նկատմամբ թշնամական դիրք բռնեցին

1 ЦГАОР СССР, ф. 1064, оп. 6, д. 1, л. 15.

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 649:

¹ «Ленинский сборник», XXV, стр. 246.

² նույն տեղը, էջ 254:

կապիտալիստական խոշոր պետությունները, հատկապես ԱՄՆ-ը:

Ռուսաստանում բռնկված սովը ԱՄՆ-ը փորձեց օգտագործել որպես մի առիթ սովետական երիտասարդ սեպագուբլիկացի դեմ տնտեսական ու դիվանագիտական նոր հարձակում կազմակերպելու համար: Սովի թշվառությունները հակառուսացիություն նպատակով էին ուզում օգտագործել նաև երկրի ներսի թշնամական տարրերը՝ կադետները, մենշևիկները, էսէները և այլն: Ռուս ժողովրդի հետ պատահած ժամանակավոր դժբախտությունը՝ սովը, փորձեց չար նպատակով օգտագործել ԱՐԱ-ն (Ամերիկյան օգնության ադմինիստրացիա), որն ստեղծվել է 1919 թվականին, իբրև «մասնավոր», «մարդասիրական», «քաղաքականությունից դուրս» կազմակերպություն: Նրա խնդիրն էր տնտեսական օգնություն ցույց տալ առաջին համաշխարհային պատերազմից տուժած երկրներին: Բայց փաստորեն դա չէր ԱՐԱ-ի բուն նպատակը: Իրականում ԱՄՆ-ը ԱՐԱ-ն դիտում էր որպես մի գործիք, մի միջոց՝ իմպերիալիստական սեպագիտուն սեփմը պաշտպանելու և ուղղուցիտ շարժումների դեմ պայքարելու գործում:

1921 թվականի ամռանը ԱՐԱ-ն պատրաստակամություն հայտնեց Ռուսաստանի սովյալներին օգնություն ցույց տալու համար: Ինչպես հետագայում պարզվեց, ԱՐԱ-ի գործունեությունը Սովետական Ռուսաստանում և Անդրկովկասում հաճախ շատ հեռու էր բարեգործական նպատակներից: Բավական է ասել, որ ԱՐԱ-ի ղեկավարության գլուխ էին կանգնած Գ. Հովվերի և Հասկելի նման մարդիկ, որոնք կատաղի թշնամի էին Սովետական իշխանությանը: Գաղտնիք չէ նաև այն, որ Ռուսաստանում տեղի ունեցած օտարերկրյա ուղղման ինտերվենցիայի և քաղաքացիական կոռիվների ժամանակ ԱՐԱ-ն շուրջ օգնություն էր ցույց տալիս սպիտակգլարդիական բանակներին: Այսպիսով, ԱՄՆ-ի կառավարությունը ԱՐԱ-ի միջոցով փորձում էր իր տնտեսական և քաղաքական դիրքերն ամրապնդել Եվրոպայում, Մերձավոր և Միջին Արևելքում:

1921 թվականի օգոստոսին Ռիգայում ԱՐԱ-ի և ՌՍՖՍՌ-ի ներկայացուցիչների միջև բանակցություններ սկսվեցին

Ռուսաստանի սովյալ բնակչությանը օգնություն ցույց տալու մասին:

Բանակցությունների ժամանակ պարզ նկատվում է ԱՐԱ-ի պատվիրակության ավանտյուրիստական դիրքը: Այսպես, Ու. Բոուանը սովետական կառավարությանն առաջարկում է.

ա) ԱՐԱ-ին թույլատրել բացելու իր կոմիտեները, բ) ԱՐԱ-ի ներկայացուցիչներին և արտասահմանյան թղթակիցներին թույլ տալ ազատ շրջագայելու սովահար շրջանները, գ) օգնության ֆոնդի բաշխումը պետք է կատարվի միմիայն ԱՐԱ-ի կոմիտեների միջոցով:

Այստեղից դժվար չէ կռահել, թե ինչ էին ուզում ԱՐԱ-ի ղեկավարները: Փաստորեն նրանք սովետական կառավարությունից պահանջում էին ճանաչել ԱՐԱ-ի «էքստերիտորիալ իրավունքը» Ռուսաստանում:

Սովետական պատվիրակությունը Վ. Ի. Լենինից ցուցում ուներ չընդունել իմպերիալիստների ավանտյուրիստական և ո՛չ մի առաջարկ: Մ. Լիտվինովը կատեգորիկ կերպով մերժեց Ու. Բոուանին, հայտարարելով՝ «Սովետական կառավարությունը երբեք չի համաձայնվի, որ ԱՐԱ-ն սովետական պետության մեջ կազմակերպի իր պետությունը»¹:

Վ. Ի. Լենինը ուշադիր հետևում էր բանակցությունների ընթացքին. նրա աչքից չէին վրիպում նույնիսկ ամենամանր հարցերը: Այդ կապակցությամբ Գ. Չիչերինը իր հուշերում գրել է. «Վ. Ի. Լենինը շատ ջերմ մասնակցություն ուներ, ի միջի այլոց, սովյալներին օգնություն ցույց տալու համար «ԱՐԱ-ի» և Նանսենի հետ սկսած բանակցություններին»²:

Եվ պետք է ասել, որ ԱՐԱ-ի հետ կնքվելիք համաձայնագրի նախագիծը, Վ. Ի. Լենինի դիտողություններով հանդերձ, բնովել և հաստատվել է ՌԿ(Բ)Պ Կենտկոմի քաղբյուրոյի նիստում³:

1921 թվականի օգոստոսի 20-ին ԱՐԱ-ի և սովետական

¹ «Документы внешней политики СССР». т. IV, стр. 279.

² Г. В. Чичерин. Статьи и речи, стр. 284, 1961, Москва.

³ См. «Ленинский сборник», т. XXXVI, стр. 340.

կառավարության միջև համաձայնագիր կնքվեց սովյալների օգնություն ցույց տալու մասին: Սովետական կառավարությանը պարտավորվում էր անհրաժեշտ պայմաններ ստեղծել ԱՐԱ-ի համար՝ իր աշխատանքները կատարելու: ԱՐԱ-ին իրավունք էր վերապահվում բացել իր կոմիտեները, առանց որևիցե կառավարական կամ այլ օրգանների միջամտության: Կենտրոնական կամ տեղական սովետների ներկայացուցիչներին իրավունք էր վերապահվում մտնելու կոմիտեների մեջ: Համաձայնագիրը կնքվելուց անմիջապես հետո ԱՐԱ-ի ներկայացուցիչները մեկնեցին Ռուսաստան:

Ինչպես պարզվել է, ԱՐԱ-ի կոմիտեների մեջ էին խցկվել բազմաթիվ հակաժողովրդական տարրեր, որոնք զբաղվում էին հակասովետական, հետախուզական աշխատանքով: Տեղին է նշել, որ ԱՐԱ-ի կողմից բաշխված ապրանքները հաճախ ընկնում էին այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք դրա կարիքը չունեին և կապված էին ԱՐԱ-ի աշխատակիցների հետ: Դա, իհարկե, որոշ դժգոհություն առաջացրեց սովյալ բնակչության մեջ: 1922 թվականի սկզբին ՌՍՖՍՐ-ի կառավարությունը ԱՐԱ-ի ղեկավարությունից պահանջում է վերջ տալ քայքայիչ գործունեությանը և զբաղվել սովյալներին օգնություն ցույց տալու աշխատանքով:

ԱՐԱ-ի ղեկավար Հասկելը հարկադրված է լինում առերես համաձայնվել, սակայն, ինչպես հետագայում պարզվում է, ԱՐԱ-ի որոշ աշխատակիցներ չդադարեցրին իրենց հակասովետական աշխատանքը: ԱՐԱ-ի ներկայացուցիչները զբաղվում էին հակասովետական ագիտացիայով բնակչության մեջ, կազմակերպում էին հակառեյտցիոն տարրերի՝ սովետական իշխանության դեմ պայքարելու համար, կեղծ սովյալներ էին հավաքում և զբաղվում սովետական իշխանությանը: Սովետական կառավարությունը շուտով արգելեց ԱՐԱ-ի գործունեությունը և վճռեց երկրից:

1921 թվականի օգոստոսի 27-ին սովետական կառավարությունը համաձայնագիր կնքեց Ֆ. Նանսենի հետ: Նանսենը հանդես էր գալիս որպես հասարակական կազմակերպությունների ժնեկ կոնֆերանսի (հրավիրվել էր Կ. Խաչի ընկերության կողմից) ներկայացուցիչ: Նանսենի կոմիտեն, իհարկե,

տարբերվում էր ԱՐԱ-ից թե՛ իր միջոցներով, թե՛ էությունով: Ֆ. Նանսենը միանգամայն բարյացակամ էր տրամադրված դեպի սովետական իշխանությունը: Տեսնելով նրա անկեղծ աշխատանքը՝ հօգուտ սովյալ բնակչության, սովետական կառավարությունը երաշխավորում է Նանսենին, որպեսզի նա եվրոպական կառավարությունների առջև բարձրացնի Ռուսաստանին 10 միլիոն ֆունտ ստեռլինգ վարկ բաց թողնելու հարցը¹: Ֆ. Նանսենը այդ հանձնարարությունը կատարեց ազնվորեն: Այդ հարցը առաջ քաշվեց Ազգերի լիգայում և մի շարք կոնֆերանսներում: Սակայն Նանսենին չհաջողվեց դրանում համոզել կապիտալիստական պետությունների կառավարող շրջաններին:

Սովետական ժողովուրդը բարձր գնահատեց «Նանսենի կոմիտեի», անձամբ Նանսենի գործունեությունը, ինչպես և այն պրոգրեսիվ գործիչներին, որոնք անկեղծ էին դեպի սովետական Ռուսաստանը և պայքարում էին սովի դեմ: Բավական է ասել, որ Նանսենը, որի անունը քաջ հայտնի է նաև հայ ժողովրդին, ընտրվեց Մոսկվայի սովետի պատվավոր անդամ: 1921 թվականի դեկտեմբերին գումարված սովետների համառուսաստանյան համագումարը սովետական միլիոնավոր մարդկանց անունից Նանսենին շնորհակալություն հայտնեց սովյալ բնակչությանը օգնություն կազմակերպելու իր մեծ ջանքերի համար: «Սովետական ժողովուրդը, — ասված է համագումարի կողմից Նանսենին ուղղված դիմումում, — իր հիշողության մեջ վառ կպահի մեծ գիտնական, հետազոտող և քաղաքացի Նանսենի անունը...»²:

Ռուսաստանի սովյալ բնակչության օգտին գնահատելի աշխատանք կատարեցին Արևմուտքի առաջադեմ հասարակական կազմակերպությունները և ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները (Հ. Բարբյուս, Ա. Ֆրանս և ուրիշներ):

Սովյալներին օգնություն կազմակերպելու շարժումը լայն ծավալ ստացավ ոչ միայն Եվրոպայում, այլև Ամերիկայում: Միջազգային պրոլետարիատը Կոմիտեների միջոցով դիմեց

¹ Մ. «Документы внешней политики СССР», т. IV, стр. 294.

² ЦГАОР СССР, ф. 1064, оп. 1, д. 47.

մեծ գոհաբերություններէ, հավաքեցին դրամ, դեղորայք և ուղարկեցին Ռուսաստան:

Այն շրջանում օտարերկրյա իմպերիալիստները գործադրեցին բոլոր միջոցները, որպեսզի խանգարեն միջազգային բանվոր դասակարգին՝ օգնելու Ռուսաստանի սովյալ բընակչութեանը, և դա անում էին այն ժամանակ, երբ սովյան զոհ էին դառնում տասնյակ հազարավոր մարդիկ: Ռուսաստանի համար ստեղծված այդպիսի կրիտիկական պահին բուրժուական ռեակցիոն շատ թերթեր տպագրում էին, որ իբր թէ «Սովը Ռուսաստանում սարսափելի չէ, այն կոտորել է վիզը և կարիք չկա ծախսել դոլլարներ»¹: Հակառակ բուրժուական պրոպագանդային, միջազգային պրոլետարիատը շարունակում էր օգնություն ցույց տալ սովյալներին: Այդ ժամանակ Կ. Յետկինը, Ֆ. Նանսենը, Ա. Ֆրանսը և շատ ուրիշներ հանդես էին գալիս Սովետական Ռուսաստանին անկեղծ օգնություն ցույց տալու առաջարկներով: Այսպես, Նանսենը գրել է. «Ռուսաստանի սովյալ բնակչութեանը հարկավոր է ցույց տալ շտապ օգնություն, որը չի կարելի ո՛չ կրճատել և ո՛չ էլ դադարեցնել նույնիսկ լավ բերք լինելու դեպքում»²: 1921 թվականի նոյեմբերի 13-ին Ազգերի լիգայում արտասանած իր ճառում Կ. Յետկինն ասաց. «Սովյալներին օգնելու գործը յուրաքանչյուրի գործն է՝ մասնավորապես, և ամբողջ մարդկության գործը՝ ընդհանրապես»³:

Միջազգային աշխատավորութեան համերաշխությունը և բեկյի Ռուսաստանը նրանց համակրանքը, ինչպես նաև եվրոպական երկրներում տիրող այն ժամանակվա քաղաքական պայմանները իմպերիալիստական խոշոր պետություններին հարկադրեցին վերանայելու Ռուսաստանի սովյալներին օգնություն ցույց տալու իրենց նախկին պլանները: Այդ նպատակով դաշնակից պետությունների Գերագույն խորհուրդը խորհրդակցություն հրավիրեց՝ Ռուսաստանի սովյալներին օգնություն ցույց տալու ձևերն ու մեթոդները որոշելու համար:

¹ ЦГАОР СССР, ф. 1064, оп. 6, д. 8, л. 25.

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

խորհուրդը որոշեց ժնկում ստեղծել «Միջազգային հանձնաժողով»՝ բաղկացած հասարակական ներկայացուցիչներից: Այդ հանձնաժողովի ղեկավարն էր Ժ. Նուլանսը, որը, ինչպես հայտնի է, եղել է Սովետական Ռուսաստանի դեմ ռազմական ինտերվենցիայի ակտիվ կազմակերպիչներից մեկը:

Հանձնաժողովը, կազմված լինելով Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված մարդկանցից, հանդես բերեց խիստ դանդաղկոտություն և շահադիտական նպատակներ: Նա սովյալներին օգնելու գործը ռեալ էր համարում միայն մի պայմանով, այն է՝ եթե սովետական կառավարությունը թույլատրեր օտարերկրյա էքսպերտ հանձնաժողովների և թղթակիցների ազատ գործունեությունը սովի ենթակա շրջաններում:

1921 թվականի օգոստոսի 10-ին Փարիզում հրավիրվեց այդ հանձնաժողովի առաջին խորհրդակցությունը, որը քրննարկեց Ռուսաստանին վարկեր և փոխառություններ տրամադրելու հարցը: Սակայն խորհրդակցությունում գործնական ոչ մի որոշում չընդունվեց: Այնուհետև, ժնկում նույն նպատակով բացվեց հասարակական կազմակերպությունների կոնֆերանս, որին մասնակցում էին 100 պատգամավոր՝ 22 երկրներից: 1921 թվականի սեպտեմբերի 5-ին Ազգերի լիգան հասարակական խավերի ճնշման տակ լսեց «Ռուսաստանին 2 միլիոն փուլի հացահատիկ վաճառելու և վարկեր տրամադրելու հարցը»: Սակայն կոնկրետ որոշում չընդունեց այդ հարցի մասին: Ազգերի լիգայի գործը եղավ միայն այն, որ որոշեց այդ հարցը տեղափոխել Բրյուսելի կոնֆերանս: 1921 թվականի հոկտեմբերի 6-ին գումարվեց Բրյուսելի կոնֆերանսը, որտեղ մասնակցում էին 19 երկրների ներկայացուցիչներ: Կոնֆերանսը պահանջ է ներկայացնում սովետական պատվիրակությանը, նախ՝ ճանաչել ցարական Ռուսաստանի նախկին բոլոր պարտքերը, ապա՝ թույլատրել արտասահմանյան հսկիչ հանձնաժողովներին ազատ կերպով աշխատելու սովի ենթակա շրջաններում: Դեռ ավելին, կոնֆերանսում եղան նույնիսկ ցինիկ ճառեր: Այսպես, օրինակ, մի ոմն Սպալախովիչ (Հարավսլավիայի ներկայացուցիչը) ասաց. «Ես կգերադասեի ամբողջ ռուս ժողովրդի կործանումը,

քան թե ուսկ անել օժանդակել սովետական կառավարութեանը¹: Սովետական Ռուսաստանին հացահատիկ և փոխառութիւն բաց թողնելու հարցը կապիտալիստական ղեկավար շրջաններում բնարկվել է մի շարք անգամ, մինչև 1921 թվականի երկրորդ կեսը: Միայն այն ժամանակ, երբ սովը առավել ուժեղացավ, որը, ինչպես ասվեց, խիստ բացասաբար էր ազդում եվրոպական պրոլետարիատի վրա, անասանտի պետութիւնները որոշեցին առևտրական գործարքներ կնքել Սովետական Ռուսաստանի կառավարութեան հետ:

Հակառակ իմպերիալիստական կառավարող ղեկավար շրջանների կամքի, միջազգային աշխատավորութիւնը սովյալ բնակչութեանը օգնութիւն հասցրեց, որը շնայած մեծ չէր այն ժամանակվա մեծ կարիքների դիմաց, սակայն շահագանց կարևոր էր բարոյա-քաղաքական տեսակետից:

Ինչու՞մն է արտահայտվել այդ օգնութիւնը:

1922 թվականին միայն մեքսիկյան բանվորները հավաքեցին 4,5 միլիոն դոլար: Բոլոր երկրների բանվորների օգնութիւնը կազմում էր մեկ միլիարդ մարկ, որով Բանվորների օգնութեան միջազգային կոմիտեի կողմից գնվեց և Ռուսաստան ուղարկվեց 20 հազար տոննա պարենային ապրանք և ղեղորայք²:

Սովետական կառավարութիւնը շատ բարձր գնահատեց միջազգային աշխատավորութեան կողմից ցույց տրված օգնութեան բարոյա-քաղաքական նշանակութիւնը:

Ուշադրութեան արժանացավ նաև ԱՐԱ-ի որոշ օգնութիւնները, այսպես, սովետների IX համառուսաստանյան համագումարում Ա. Օվսենկոն, անդրադառնալով ԱՐԱ-ի կողմից ցույց տրված օգնութեանը, ասաց. «Օգնութիւն էր ցույց տրվում նաև ամերիկացիների կողմից, բայց դա շատ շնչին էր, այն եղել է միայն երեխաների համար»³:

1921—1922 թվականներին Ռուսաստանին անկեղծ օգնութիւն ցույց տվին «Սովետական Ռուսաստանի տեխնիկական օգնութեան ընկերութիւնը» և «Սովետական Ռուսաստանի

նի բարեկամների ընկերութիւնը», որոնց կատարած աշխատանքը արժանացավ Վ. Ի. Լենինի ուշադրութեանը¹:

Սովյալներին օգնութիւն կազմակերպելու ուղղութեամբ շնորհակալ աշխատանք կատարեցին ռեւոլյուցիոն արհմիութիւնները, ռուսանդական և կարմիր խաչի ընկերութիւնները²:

Ռուսաստանի սովյալներին անկեղծ օգնութիւն ցույց տրվեցին «Սովետական Ռուսաստանի բարեկամների ընկերութիւնը» (ստեղծվել է 1921 թվականին ԱՄՆ-ում, ռուս էմիգրանտներից) և Կոմիտեիներին կից գործող Արհմիութիւնների միջազգային ֆեդերացիան: Վերջինիս օգնութեան շնորհիվ մահից փրկվեցին ավելի քան 24 հազար մարդ:

Կոմունիստական պարտիայի և կառավարութեան ձեռնարկած լուրջ միջոցառումների շնորհիվ Ռուսաստանի գյուղացիութեան վիճակը սկսեց աստիճանաբար լավանալ: 1921 թվականի գարնան և աշնան ցանքը հաջող կատարվեց, իսկ 1922 թվականին երկրում ստացվեց լավ բերք և սովը հաղթահարվեց:

Պաշտակների օրոք Հայաստանի ժողովրդական տնտեսութիւնը խիստ քայքայվեց, Հայաստանը վերածվեց որբերի, սովի, բռնութիւնների երկրի, աշխատավորների ճնշումն ու շահագործումը աննկարագրելի չափեր ընդունեցին: 1913 թվականի հոկտեմբերին Վ. Ի. Լենինին ուղարկած Գ. Կ. Օրշոնիկիձեի հեռագրում կարդում ենք. «Հայաստանի դրութիւնը ողբերգական է: Երևանի նահանգի երկու գավառների փոքրիկ պատահիկի վրա կուտակվել են ավելի քան 600 հազար գաղթականներ, որոնք մասսայաբար զոհվում են քաղցից և խոլերայից: Գրաված գավառներում թուրքերը կոտորել են բնակչութեան կեսը: Շուշու և Զանգեզուրի երկու գավառներն էլ զավթված են թուրքերի կողմից: Բնակչութիւնը հա-

¹ ЦГАОР СССР, ф. 1064, оп. 6, д. 47, л. 8.

² См. «История дипломатия», т. III, стр. 232. 1965.

³ ЦГАОР СССР, ф. 1318, оп. 1, д. 713, л. 6.

¹ «См. «Ленинский сборник», т. XXIII, стр. 38.

² ЦГАОР СССР, ф. 1064, оп. 6, д. 1. л. 15.

մառ դիմադրություն է ցույց տալիս... Հայ բնակչությունն զգնություն է սպասում Սովետական Ռուսաստանից»¹:

Տնտեսական ծանր պայմանների և հիվանդությունների հետևանքով հազարավոր մարդիկ մահանում էին: Հայաստանում 1919 թվականի առաջին կեսին սովից և զանազան վարակիչ հիվանդություններից մեռել են 180 հազար մարդ, որը կազմում էր երկրի այն ժամանակվա բնակչության մեկ երրորդը: 1919 թվականին միայն Երևանի փողոցներից հավաքվել է 9055 դիակ²:

Գաշնակցական կառավարությունն ի վիճակի չէր փրկել ժողովրդին կործանումից, սովից և հիվանդություններից: Իսկ Անտանտի պետությունները միայն ափսոսանք էին հայտնում դաշնակներին՝ ժողովրդի դառը վիճակի ու զոհերի առթիվ, և ուրիշ ոչինչ:

Գաշնակների տիրապետության ժամանակ հիմնովին քայքայվեցին գյուղացիությունն ու արդյունաբերությունը: Այսպես, եթե գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունը 1913 թվականին հասնում էր 308 հազար հեկտարի, ապա 1919 թվականին այն իջավ 82,5 հազար հեկտարի: Միանգամայն անմխիթարական էր վիճակը այգեգործության, հատկապես խաղողագործության բնագավառում, լրիվ անկում ապրեց բամբակագործությունը: Ծանր էր անասնապահության վիճակը: 1919 թվականին 1914 թվականի համեմատությամբ խիստ կերպով կրճատվեց մանր և խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1919 թվականին, նախապատերազմյան 1913 թվականի համեմատությամբ, պակասել էր մոտ 83 տոկոսով³:

Վատ էր վիճակը երկրի ֆինանսական, առողջապահական, սոցիալական և կուլտուրական կյանքի բնագավառներում:

1920 թվականի վերջերին քեմալական թուրքիայի արշավանքների հետևանքով Հայաստանի տնտեսական փլուզումը ավելի խորացավ:

Թե ինչպիսի տառապանքներ և զոհեր են պատճառել թուրքական օկուպանտները Հայաստանին և նրա բնակչությանը, երևում է հետևյալից: Միայն Ալեքսանդրապոլի գավառում օկուպանտները կոտորեցին տասնյակ հազարավոր հայերի: Չբավականանալով կատարած ոճիրներից, թուրքերը գերի տարան ավելի քան 8000 մարդու, որոնց գաղանաբար ոչնչացրին⁴: Այդ ժամանակ Հայաստանում հազարներով թափառում էին գաղթականները, քաղցն ու բժավոր տիֆը հնձում էին մարդկանց:

Այդ օրհասական պահին Սովետական Ռուսաստանը, կոմունիստական պարտիան անկեղծ, անշահախնդիր եղբայրական օգնություն ցույց տվեցին հայ աշխատավորությանը: Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր երկրում գրկաբաց ընդունեց այն 600 հազար հայերին, որոնք մեծ դժվարությամբ փրկվել էին թուրքական յաթաղանից:

1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորությունը Ռուսաստանի օգնությամբ տապալեց դաշնակցական ատելի կառավարությունը և երկրում հռչակեց սովետական իշխանություն:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո հայ ժողովուրդը կոմպարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարական աշխատանքի:

1921 թվականին Հայաստանում, նախորդ տարիների համեմատ, ցանք քիչ էր եղել, վատ բերք ստացվեց: Եթե 1914 թվականին Երևանի նահանգում ցանքատարածությունները կազմում էին 600 հազար դեսյատին, ապա 1921—1922 թվականներին՝ 250 հազար դեսյատին: Աշնանացանը և գարնանացանը մի շարք գավառներում բոլորովին վնասվել էր ուժեղ երաշտից: Զանգեզուրի գավառում մեծ վնաս էր պատճառել մորեխը, իսկ Երևանի և կոռու գավառներում՝ կարկուտը և մոլախոտը: 1921 թվականի հունվարին երկիրն ընկավ

¹ См. Г. К. Орджоникидзе, Статьи и речи, в двух томах, т. 1, Москва, 1956, стр. 45.

² ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 200, գ. 132, թ. 470:

³ См. «Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 гг.)». Ереван, 1940, стр. 79.

⁴ ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 114, գ. 56, թ. 4:

չափազանց ծանր պարենային վիճակի մեջ: Սովի էին մատնելով 250 հազար մարդ՝ բնակչության մոտ 1/4 մասը: Սովը հատկապես ուժեղ արտահայտվեց Ալեքսանդրապոլի և Զանգեզուրի գավառներում: Պահանջվում էր 1750000 փութ հացահատիկ և 700000 փութ սերմացու՝ գյուղացիներին բաժանելու համար:

1921 թվականին Հայկական ՍՍՌ պարենային ժողովրդական կոմիտարիատին հաջողվեց հավաքել 160 հազար ուրբլու հացահատիկ: Յանքը քիչ էր կատարվել, գյուղացիները սոսկալի դրուժյան մեջ էին գտնվում, շունեին լծկան անասուններ և սերմացու: 1921 թվականի աշնանը և 1922 թվականի գարնանը համահայաստանյան մասշտաբով կազմակերպվեց վարի շաբաթ: Կայն ագիտացիա ծավալեցին ցանքսերը մեծացնելու օգտին, պետությունը սերմացուով և անհրաժեշտ գործիքներով օգնեց չքավոր գյուղացիական տնտեսություններին: 1921 թվականի գյուղատնտեսական կամպանիայի ժամանակ ստացվեց 14260 փութ հացահատիկ, հողժողովումատի պահեստից՝ 14600 փութ, պարենժողովումատի պահեստից՝ 76000 փութ: Արտասահմանից գնվեց 135240 փութ հացահատիկ, Սովետական Ռուսաստանից ստացվեց 100 հազար փութ: Այսպիսով, Հայաստանի կառավարության տրամադրության տակ կար ընդամենը 325 հազար փութ հացահատիկ:

Սովը և տնտեսական մյուս դժվարությունները հաղթահարելու համար Հայաստանի կոմպարտիան և կառավարությունը ձեռք առան կտրուկ միջոցներ: Շտապ պատվերների համաձայն ՀՍՍՌ պարենժողովումատը Փոթիից և Բաթումիից ձեռք բերեց 70 հազար փութ հացահատիկ և բաժանեց բնակչությանը: Օգնությունը մեծ էր Սովետական Ռուսաստանի կողմից, որի շնորհիվ Հայաստանի բնակչությունը կարողացավ փրկվել սովի ճիրաններից:

Սովետական իշխանության գոյության սկզբից երևան եկավ բանվորի և գյուղացու ստեղծագործական մեծ ուժը: Հայ ժողովուրդը հանդես բերեց իր տնտեսությունը և կուլտուրան բարձրացնելու շտեպնված մեծ ուժ ու եռանդ: Այդ մեծ ու պատվավոր գործում ՀՍՍՌ-ի միջոցով ակտիվ մասնակցություն ունեցան աշխարհով մեկ ցրված հայ աշխատավորները:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ազատագրեց ցարական Ռուսաստանի տիրապետության տակ կեղեքվող բոլոր ժողովուրդներին: Ցարիզմի գաղութային ուժի մին ենթակա ժողովուրդների բախտը անվերապահորեն կապված էր մեծ Հոկտեմբերի հետ:

Ռուսաստանում բանվորների ու գյուղացիների իշխանությունը հաստատվելուց հետո կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը ճանաչեցին ճնշված ժողովուրդների անկախության և ինքնորոշման իրավունքը: «Նվաճելով իշխանությունը, — գրում է Վ. Ի. Լենինը, — մենք անպայման, իսկույն ևեթ կճանաչենք այդ իրավունքը և՛ Ֆինլանդիայի համար, և՛ Ուկրաինայի համար, և՛ Հայաստանի համար, և՛ ցարիզմի (ու վելիկոռուսական բուրժուազիայի) կողմից ճնշված ամեն մի ժողովրդի համար»¹:

Ցարիզմի վարած գաղութային դաժան քաղաքականությունը կաշկանդել էր Ռուսաստանի գերիշխանության տակ ապրող ժողովուրդների քաղաքական ու տնտեսական, ինչպես և կուլտուրական զարգացումը, ուստի սովետական կարգեր հաստատվելուց հետո ՌՍՖՍՌ-ն, շնայած իր ծանր տնտեսական վիճակին, օգնության ձեռք մեկնեց կապիտալիզմի ճիրաններից ազատագրված փոքր ժողովուրդներին՝ նրանց քայքայված տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու համար:

Ժողովումովետը մեծ հոգատարություն հանդես բերեց ազգային սովետական բոլոր ռեսպուբլիկաների տնտեսական ու քաղաքական ամրապնդման, նրանց պաշտպանությունը կազմակերպելու և նոր կյանքի սկիզբը դնելու համար:

Կոմունիստական պարտիայի X համագումարը (1921 թ. մարտ) տնտեսական, քաղաքական և կուլտուրական գործունեությունների հաստատուն պլան մշակեց, որի նպատակն էր վերացնել սովետական ժողովուրդները միջև անցյալից մընացած տնտեսական անհավասարությունները: Այդ նպատակի

¹ Վ. Ի. Լենին, հատ. 26, էջ 206:

իրագործման համար պարտիան և կառավարութիւնը ամենից առաջ ձեռնամուխ եղան պլանաշարութիւն մտցնելու տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում, ինչպես, օրինակ, ծայրամասերում գործարանները հումքի աղբյուրների մոտ փոխադրելու միջոցով երկրի արևելյան և հարավային ծայրամասերը տեղափոխեց արդյունաբերական մի շարք կարևոր ձեռնարկութիւններ:

Այսպիսով, եթե ցարական Ռուսաստանի կառավարութիւնը դիտավորյալ կերպով խանգարում էր ազգային փոքրամասնութիւնների սեփական տնտեսութիւն և արդյունաբերութիւն ստեղծելու գործին, ապա ՌՍՖՍՌ-ի կառավարութիւնը, ընդհակառակը, բոլոր հնարավոր պայմաններն ըստեղծեց և օգնութիւն ցույց տվեց փոքր, նախկինում ճնշված և հետամնաց ժողովուրդներին՝ ունենալու զարգացած արդյունաբերութիւն, առաջավոր գյուղատնտեսութիւն և կուլտուրա: Ահա այդպես է վարվել ՌՍՖՍՌ-ի կառավարութիւնը նաև Հայկական ՍՍՌ-ի նկատմամբ:

1920 թվականի դեկտեմբերի 13-ին Վ. Ի. Լենինը կրեմլում ընդունում է Հայաստանի Ռեկոմի պատվիրակութիւնի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանին և Ա. Մոսվյանին: Նրանք Վ. Ի. Լենինին զեկուցում են Հայաստանի տնտեսական ծանր վիճակի, Ալեքսանդրապոլում գտնվող քեմալական Թուրքիայի զինվորների գազանութիւնների և այլ հարցերի մասին: Վ. Ի. Լենինը, ուշադիր լսելով Ս. Տեր-Գաբրիելյանի հաղորդումը Հայաստանի ֆինանսական, սլարենային ծանր վիճակի և ՀՍՍՌ Ռեկոմի առաջին միջոցառումների մասին, ընդգրծում է հետևյալը, որ Հայաստանը ուղղուցիւն ճակատներից մեկն է, Ռուսաստանը անպայման կօգնի նրան: «Մենք ինքներս, — ասել է Վ. Ի. Լենինը, — դժվարին գրութիւն մեջ ենք, բայց Խորհրդային Հայաստանին ամեն կերպ կօգնենք»¹:

Իրոք, շտապ կերպով Հայաստանին օգնութիւն ցույց տալու հարցը մտցվում է ՌԿ(Բ)Պ Կենտկոմ և ՌՍՖՍՌ-ի ժողկոմսովետ, այդ մասին ընդունվում է համապատասխան որոշում, որտեղ ասված է. «Ֆինանսների ժողովրդական կոմիսարիա-

տի կենտրոնական գրասենյակի նախահաշվով որպես լրացուցիչ վարկ բաց թողնել երեք միլիարդ (3.000.000.000) ռուբլի՝ Հայաստանի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկային նպաստ տալու համար:

Ժողովրդական կոմիսարների Սովետի նախագահ՝ Վ. Ուլյանով Լենին»¹:

Մեծ առաջնորդի հետ տեսակցելու հաջորդ օրը Ա. Մոսվյանը ՌՍՖՍՌ-ի ֆինանսական ժողովրդական կոմիսարիատից ստանում է 2 միլիարդ ռուբլի թղթադրամ, որը ոսկու հաշվով հավասար է մոտ 600 հազար ռուբլու: Դեկտեմբերի 15-ին Ա. Մոսվյանը Մոսկվայից մեկնում է Երևան և դրամը հասցնում Հայաստանի կառավարութիւնը, բնակչութիւնի առաջին անհրաժեշտութիւն սուր կարիքները բավարարելու համար:

Սովետական Ռուսաստանի կառավարութիւնը մեծ ջանքեր գործադրեց, որպեսզի Վրաստանի մենշևիկյան կառավարութիւնը արգելքներ չհարուցեր Ռուսաստանից Թբիլիսիի վրայով Հայաստան ուղարկվող մարշրուտային գնացքների դեմ: Նույն թվականի դեկտեմբերի 18-ին Ռուսաստանից ուղարկված ապրանքները (35 վագոն ցորեն, 5 վագոն դարի, 5 ցիստեռն նավթ) անարգել հասան Երևան. դա մեծ ոգևորութիւն առաջացրեց հայ աշխատավորների մեջ:

1921 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը ՌՍՖՍՌ պարենժողկոմատից պահանջում է վճռական միջոցներ ձեռք առնել Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաներին շտապ կարգով պարենային ապրանքներ մատակարարելու համար:

Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները միայն 1921 թվականին ՌՍՖՍՌ-ից ստացել են մեկ միլիոն փութ հացահատիկ, որը բաշխվել է հետևյալ կերպ՝ Վրացական ՍՍՌ-ին յուրաքանչյուր ամիս՝ 50 հազար փութ, Ադրբեջանական ՍՍՌ-ին՝ 50 հազար փութ, Հայկական ՍՍՌ-ին՝ 25 հազար փութ, Անդրերկաթուղուն՝ 50 հազար փութ, Կովկասյան հատուկ բանակին՝ 50 հազար փութ: Այդ թվականին Ռու-

¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի, 1925 թ.:

¹ ЦГАОР СССР, ф. 2281, оп. 2, д. 2000, л. 3.

սաստանից ստացվել է 6,5 միլիոն ռուբլու (ոսկով) փոխա-
ռուծվում:

1921 թվականի գարնանացան և աշնանացան կամպանիա-
ները անցկացնելու համար ՌՍՖՍՌ հողօրհրկումատը բաց է
թողնում 100 հազար փուլ սերմացու, որը խոշոր օգնութուն
էր Հայաստանի գյուղացիութւյանը: Անդրկովկասի ռեսպուբ-
լիկաներում ժողովրդական տնտեսութւյան զարգացումն ապա-
հովելու և պարենային դրութւյունը որոշ շափով բարելավելու
համար Վ. Ի. Լենինը պահանջում էր միավորել տնտեսական
միջոցները, ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մեկ
մարդային տնտեսական օրգան, զարկ տալ ապրանքափո-
խանակութւյանը արտասահմանի հետ, առաջ մղել ոռոգման
աշխատանքները Հայաստանում և Ադրբեջանում:

1921 թվականի գարնանից բարելավվում է ապրանքա-
շրջանառութւյան գործը Պարսկաստանի հետ, որտեղից Հա-
յաստանի համար գնվում են 30 հազար փուլ հացահատիկ և
այլ ապրանքներ: Այդ ժամանակ կարգավորվում է ապրան-
քափոխանակութւյունը նաև Անդրկովկասի ռեսպուբլիկաների
ու Ռուսաստանի միջև:

Սովետական իշխանութւյան առաջին տարիներին՝ 1920—
1922 թթ., ՌՍՖՍՌ ժողովմասովետը Հայաստանին տվել է հրս-
կայական գումարներ, դոտացիաներ, վարկեր և այլն:

ՌՍՖՍՌ ժողովմասովետի 1921 թվականի ապրիլի 4-ի
որոշմամբ Հայաստանին լրացուցիչ բաց է թողնվում
1.125.000.000 ռուբլու վարկ¹: Հայաստանը ֆինանսական
ճգնաժամից դուրս բերելու համար 1921 թվականի սեպտեմ-
բերի 30-ին, Մոսկվայում, Հայաստանի և Ռուսաստանի մի-
ջև կնքվում է ֆինանսական համաձայնութւյուն, որով թույ-
լատրվում է Հայաստանի տերիտորիայի վրա բացելու
ՌՍՖՍՌ-ի պետքանկի մի շարք գրասենյակներ:

Հայաստանը ամուր կապերի մեջ է մտնում Ռուսաստանի
և մյուս եղբայրական ռեսպուբլիկաների հետ: Աշխուժա-
նում է պետական առևտուրը Ռուսաստանի հետ, ընդարձակ-
վում է ապրանքաշրջանառութւյան ծավալը: Հայաստանը

դուրս է գալիս այն մեկուսացած վիճակից, որի մեջ գտնվում
էր նախկինում:

Սովետական Ռուսաստանը անկեղծ բարեկամական օգ-
նութւյուն է ցույց տալիս հայ ժողովրդին սովի դժվարին
դրութւյունից դուրս գալու համար: 1921 թվականի փետր-
վարի վերջերին—1922 թվականի սկզբներին պարենային
ժողովրդական կոմիսարիատի տրամադրութւյան տակ է դըր-
վում 300 հազար ռուբլի ոսկի փող՝ արտաքին շուկաներում
հաց փնելու համար¹:

ՌՍՖՍՌ Կենտգործկոմի որոշմամբ բնակչութւյան համար
տրվում է մեծ քանակութւյամբ հաց, պարենային մթերքներ,
100 հազար ռուբլի (ոսկով)²:

1921 թվականի հոկտեմբերին ՌՍՖՍՌ պարենօրհրկումա-
տը Հայաստանին բաց է թողնում 200 հազար փուլ ալյուր,
260 փուլ ծխախոտ, 200 դյուժին օճառ, 134 վագոն զանազան
տեսակի ապրանքներ³:

Հայաստանի կառավարութւյունն իր սուղ միջոցներից
գյուղացիներին է տալիս 350 հազար փուլ սերմացու, որի
մեծ մասն ստացվում է Ռուսաստանից:

1921 թվականի հոկտեմբերի վերջերին Ռուսաստանից
ուղարկվում է 2000 փուլ շաքար, 150 փուլ կակաո, 150
փուլ շոկոլադ:

Նույն թվականի դեկտեմբերին Ռուսաստանը բաց է թող-
նում 5 վագոն հնդկացորեն, 1 վագոն վարսակ, իսկ Ուկրաինայի
պարենօրհրկումատից տրվում է կարգադիր՝ 3790 փուլ
շաքարի և 15 վագոն հացահատիկի համար, 700 փուլ շա-
քարը ստացվում է դեկտեմբերի 20-ին, իսկ հացահատիկը՝
հունվարի վերջերին: 1921 թվականի դեկտեմբերի վերջերին
Հյուսիսային Կովկասից և Ադրբեջանից Հայաստան է ուղարկ-
վում 39 հազար փուլ բրինձ⁴:

1921 թվականի մայիսից մինչև նոյեմբեր Սովետական
Ռուսաստանը Հայաստանին տվել է.

¹ «Նորհրդային Հայաստան», № 51, 5 մարտի 1922 թ.:

² ЦГАОР СССР, ф. 2281, оп. 2, д. 2000, л. 197.

³ «Նորհրդային Հայաստան», № 191, 12 հոկտեմբերի, 1921 թ.:

⁴ շՍՍՌ ՊԿՍ, ֆ. 102, գ. 71, թ. 50:

¹ ЦГАОР СССР, ф. 2281, оп. 2, д. 2000, л. 8.

1. Ռուսական ոսկեդրամ՝ 1 միլիոն 500 հազար ուրբլի, արծաթե դրամ՝ 100 հազար ուրբլի, թղթադրամ՝ 945 հազար ուրբլի: Ընդամենը՝ 2 միլիոն 545 հազար ուրբլի՝ ոսկով:

2. Սև վառելանյութ — մազութ՝ 1 միլիոն 65 հազար փուլթ, 90 հազար փուլթ նավթ, 12 հազար փուլթ բենզին, 5 հազար փուլթ մեքենայի քսայուղ:

3. Մանուֆակտուրա՝ 1 միլիոն 500 հազար արշին, զինվորական զգեստներ՝ վերարկու, կոշիկ, վերնաշապիկ, վարտիք, գլխարկ—18 հազար մարդու համար:

4. Ալյուր՝ 326 հազար փուլթ, շաքար՝ 5 հազար փուլթ, ձուկ՝ 50 հազար փուլթ, աղ՝ 7 հազար փուլթ:

5. Անասուն, գլխավորապես ձի, 1500 հատ:

6. Ինքնաթիռներ, ավտոմեքենաներ և այլն¹:

Հետագա տարիներին խոշոր աշխատանքներ են տարվում դաշնակցական կառավարության ժամանակ հիմնովին քայքայված գյուղատնտեսությունը վերականգնելու գործում:

Սովետական իշխանությունը և կոմունիստական պարտիան լուրջ միջոցառումներ են մշակում և իրականացնում գյուղատնտեսության զանազան ճյուղերի վերականգնման ուղղությամբ: Գարերի ընթացքում ընչազուրկ հայ գյուղացին դառնում է հողի լիակատար տերը, հողն առհավեհ հանձնվում է նրան առանց որևէ հատուցման:

Հայաստանի աշխատավորները, առաջնորդվելով վ. Ի. Լենինի հայտնի ցուցումներով, եռանդուն աշխատանք են սկսում երկրի ոռոգման սիստեմի ընդարձակման ուղղությամբ: Հայ ժողովուրդը ձեռնամուխ է լինում ջրանցքների վերանորոգման և կառուցման աշխատանքներին, այդ գործում նյութական խոշոր օգնություն ստանալով Ռուսաստանից:

Հայաստանի տնտեսության համար կարևոր նշանակություն ունեն արդեգործությունը և բամբակագործությունը,

որոնց զարգացման համար ՌՍՖՍՌ-ը տալիս է 620 հազար ուրբլի (ոսկով):

Բամբակագործության զարգացմանը խոշոր շահով նրպաստում է ՌՍՖՍՌ-ի բամբակեղմուխ և ՀՍՍՌ ժողովրդականության 1923 թվականի հունվարի 18-ին կնքված պայմանագիրը, որով կազմակերպվում է ռուս-հայկական պետական բամբակագործական ընկերությունը (ԳՐԱԽՏ): Այդ պայմանագրի համաձայն ընկերության պահեստային կապիտալը կազմում էր 500 հազար ուրբլի (ոսկով)²:

ԳՐԱԽՏ-ի ֆունկցիաների մեջ էին մտնում բամբակի առևտրի կազմակերպման գործը, ինչպես նաև Ռուսաստանի ու Հայաստանի տեքստիլ արդյունաբերությունը բամբակի հումք մատակարարելու աշխատանքը:

Վերականգնման տարիներին զգալի շահով ընդարձակվում են ցանքային տարածությունները, ավելանում է հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը, աճում է գյուղատնտեսության ընդհանուր բերքատվությունը, բարելավվում է գյուղացիների նյութական վիճակը:

Գյուղատնտեսական կարիքների համար անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ ձեռք բերելու համար ՌՍՖՍՌ-ն մինչև 1924 թվականը ՀՍՍՌ-ին բաց է թողել 10 միլիոն ուրբլու վարկ²:

Գյուղատնտեսության զարգացման բազայի վրա հնարավորություններ են ստեղծվում սկսելու նաև արդյունաբերության վերականգնման աշխատանքները:

Սովետական իշխանությունը դաշնակցական կառավարությունից ժառանգել էր արդյունաբերական մի քանի փոքր ձեռնարկություններ, որոնք գտնվում էին բարձիթողի վիճակում:

Ամբողջապես քայքայված վիճակի մեջ էին գտնվում Ալավերդու պղնձաձուլական գործարանը, Ղափանի հանքերը, որոնք կորցրել էին իրենց նշանակությունը և երկրին տալիս էին աննշան քանակությամբ արտադրանք:

¹ ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184, թ. 71:

² ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 146, թ. 32:

² Տե՛ս «Սորհրդային Հայաստան», № 203, 1924 թ.:

ՌՍՖՍՌ-ի կողմից ցույց տրվող մշտական օգնության և երկրի տնտեսական կյանքի աշխուժացման շնորհիվ որոշ բարենպաստ պայմաններ են ստեղծվում արդյունաբերության կարևոր ճյուղերի վերականգնման համար:

Կաշվի, պոլիգրաֆ արդյունաբերության, մանվածքագործվածքային արտադրության և գինու-կոնյակի արդյունաբերության զարգացման համար Սովետական Ռուսաստանը տալիս է տեխնիկական սարքավորումներ, մեքենաներ ու ֆինանսական միջոցներ:

Իվանով-Վոզնեսենսկու բանվորների կողմից 1922 թվականին որպես նվեր ուղարկված տեքստիլ ֆաբրիկան դարձավ ՀՍՍՌ արդյունաբերության առաջնեկներից մեկը:

Հայաստանի տնտեսության համար տեքստիլ գործարանը կատարյալ նորություն էր: Սկզբնական շրջանում գործարանը հիմնվում է 456 գործվածքային հաստոցներով և 18000 իլիկով: Գործարանի ընդարձակման և արտադրանքի բարձրացման համար Ռուսաստանը 1924 թվականին նվիրում է ևս 12 հազար իլիկ և 400 հաստոց:

1925 թվականի մայիսի 1-ից սկսում է աշխատել նաև գործարանի մանվածքային արտադրամասը՝ 2170 իլիկով: Նույն թվականի հոկտեմբերին աշխատանքի է անցնում նաև գործվածքային արտադրամասը:

Լենինականի տեքստիլ արդյունաբերության հետագա վերելքի համար 1925 թվականին ՌՍՖՍՌ-ն բաց է թողնում 860 հազար ռուբլի¹:

Կաշվի արդյունաբերության զարգացման համար ՌՍՖՍՌ-ի ժողովրդամտվետի կողմից մինչև 1925 թվականը տրվել է 600 հազար ռուբլի:

Վերականգնման տարիներին ՀՍՍՌ կաշվի արդյունաբերությունը զգալի չափով ընդարձակում է իր արտադրանքի ծավալը:

Միանգամայն քայքայված վիճակի մեջ էր գտնվում պոլիգրաֆ արդյունաբերությունը: Հայաստանի կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում պոլիգրաֆ արդյունա-

բերության վերականգնման ու ստեղծման գործին, որը կարևոր նշանակություն ուներ ռեսպուբլիկայում կուլտուրայի զարգացման համար:

1922—1923 թվականներին Սովետական Ռուսաստանից ստացվում են վիմագրական, գծագրական, կազմարարական, ցինկոգրաֆիական մեքենաներ և ձուլարան:

Հայկական ՍՍՌ կառավարության հոգատարության և ՌՍՖՍՌ-ի կողմից ցույց տրվող օժանդակության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում բարելավվում են տպագրական աշխատանքները, ավելանում է տպաքանակը, որը խոշոր նշանակություն ուներ կուլտուրական կյանքի հետագա առաջընթացի համար:

Հայաստանի տնտեսության մեջ խոշոր նշանակություն ուներ Երևանի մեխանիկական գործարանը: Այդ գործարանը ոտքի կանգնեց Ռուսաստանից որպես նվեր ուղարկված 12 վագոն մեքենաների և այլ սարքավորումների շնորհիվ: Ռուսաստանից ստացված մեքենաները տեղադրելու համար Բաքվից օգնության են գալիս որակյալ բանվորներ:

Նոր կառուցվող մեխանիկական գործարանի սարքավորումը մեկ ձուլարանով և 30-ից ավելի հաստոցներով որպես նվեր ստացվում է ՌՍՖՍՌ ժողովրդամտնորհից: Գործարանի համար նոր շենք կառուցելու և սարքավորում ձեռք բերելու համար ՌՍՖՍՌ-ն լրացուցիչ բաց էր թողնում 250.000 ռուբլի:

Լենինգրադի բանվորները 1924 թվականին որպես նվեր գործարանին տալիս են 32 մետաղահատ հաստոց, որոնք տեղադրում են ռուս մեխանիկներ Վ. Ս. Ֆյոդորովը և Ա. Ս. Լյուբանովը: Այդ նույն թվականին օգնության կարգով Ռուսաստանը գործարանին տալիս է 110 հազար ռուբլի²:

Վերականգնման տարիներին Հայաստանում առաջացան արդյունաբերական նոր ճյուղեր: Կարբիտ-կալցիի արդյունաբերությունը զարգացնելու համար Ռուսաստանը բաց է թողնում 40 հազար ռուբլի, իսկ ծխախոտի ֆաբրիկայի ընդարձակման համար՝ 15 հազար ռուբլի:

¹ ՀՍՍՌ ՊԿՍ, ֆ. 115, գ. 942, թ. 136:

² ՀՍՍՌ ՊԿՍ, ֆ. 115, գ. 965, թ. 18:

¹ ՀՍՍՌ ՊԿՍ, ֆ. 115, գ. 942, թ. 136:

Սովետական Ռուսաստանը խոշոր օգնություն ցույց տվեց նաև ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացման գործին:

Վերականգնման տարիներին Սովետական Ռուսաստանը Ալավերդու և Ղափանի հանքերի ու գործարանների համար բաց է թողել 2 միլիոն ռուբլի, որից 1 միլիոնը տվել է անվերազարձ: Այդ գումարից 560 հազար ռուբլին հատկացվել է Ձանգեզուրի հանքերի վերականգնման աշխատանքներին:

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը մեծ ուշադրություն դարձրին ռեսպուբլիկայի կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

Սովետական կառավարությունը կուլտուրական շինարարության գործը համարեց սոցիալիստական տնտեսության անբաժանելի սեկտորներից մեկը:

Հայ ժողովուրդը կուլտուրական շինարարության բնագավառում հաղթահարեց խոշոր դժվարություններ ու խոչընդոտներ:

Երկրի էկոնոմիկայի մեջ տեղի ունեցող աստիճանական փոփոխությունները, գյուղատնտեսության և արդյունաբերության բնագավառում ձեռք բերված հաջողությունները խոշոր շափով նպաստեցին կուլտուրական կյանքի զարգացման գործին:

1921—1925 թվականներին ՌՍՖՍՌ-ի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը մեծ օգնություն ցույց տվեց Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատին՝ դպրոցաշինությունը, ժողովրդական կրթությունը, կուլտուրան նոր աստիճանի բարձրացնելու համար:

Սովետական Ռուսաստանը օժանդակեց Հայկական ՍՍՌ-ին՝ դպրոցների, տեխնիկումների, հանրային գրադարանի, թանգարանի, բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատությունների և կուլտուրական այլ հիմնարկ-ձեռնարկների բացման ու սարքավորման գործում:

Այդ տարիներին ՌՍՖՍՌ-ը Հայաստանին տվել է գրենանական պիտույքներ, մեծ քանակով գրականություն, թանգարանային էքսպոնատներ, թուղթ և այլն:

Վերականգնման տարիներին հարյուրավոր հայ երիտասարդներ սովորելու են մեկնում Ռուսաստանի զանազան քաղաքները:

Սովետական իշխանությունը բոլոր պայմաններն ստեղծում է հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման և հետագա բարգավաճման համար: ՌՍՖՍՌ-ն վերականգնման տարիներին հսկայական օգնություն է ցույց տալիս նաև Հայաստանի առողջապահության ժողովրդական կոմիսարիատի աշխատանքներին: ՌՍՖՍՌ-ի առժողովմատի օգնությամբ Երեվանում կազմակերպվում է սանիտարա-համաճարակային բաժին, որի աշխատանքները կարգավորելու նպատակով Մոսկվայից ուղարկվում են մեծ քանակությամբ դեղորայք, վիրակապային նյութեր, մահճակալներ, սպիտակեղեն և այլն: Տարածված համաճարակային հիվանդությունները վերացնելու համար Երևան են գործուղվում բազմաթիվ բժիշկներ և միջին բուժաշխատողներ: Նրանց օգնությամբ 1923 թվականին Երևանում հիմնվում է տրոպիկական ինստիտուտը, 1924 թվականին Մոսկվայից որպես նվեր Երևան են ուղարկվում ռենտգենյան ապարատ և այլ բժշկական իրեր:

Ահա այդպիսի բազմակողմանի, անշահախնդիր եղբայրական օգնություն է ցույց տվել ռուս մեծ ժողովուրդը հայ ժողովրդին՝ տնտեսության վերականգնման տարիներին:

Այսպիսով, Հայաստանը Ռուսաստանից 1921—1925 թվականներին ստացել է՝ գյուղատնտեսության վերականգնման համար՝ 59 միլիոն ռուբլի, տրանսպորտի համար՝ 13 միլիոն ռուբլի, էլեկտրիֆիկացիայի՝ 22 միլիոն ռուբլի, բնակարանային շինարարության՝ 28 միլիոն ռուբլի, ճարտարվեստի՝ 24 միլիոն ռուբլի, հասարակական շինարարության՝ 10 միլիոն ռուբլի, փոստ-հեռագրական շինարարության՝ 1 միլիոն ռուբլի և կառավարության ծախսերի համար՝ 11 միլիոն ռուբլի¹:

¹ Տե՛ս Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 49, գ. 60, թ. 34:

* * *

Սովետական Միության բազմազգ ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը սոցիալիստական շինարարության տարիներին ուսումնասիրելի և սովետական մյուս ժողովուրդների եղբայրական աջակցությունը ստանալով, նրանց հետ ակտիվ մասնակցություն է ունենում մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործին:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԳՐՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՕԿ-ի հիմնադիր ժողովը բացվեց 1921 թվականի սեպտեմբերի 13-ին՝ Ա. Երզնկյանի նախագահությամբ: Ժողովին մասնակցում էին ռեսպուբլիկայի հասարակական-բաղաբական, գիտության և կուլտուրայի աչքի ընկնող ներկայացուցիչներ: Դրանց թվում էին Հ. Թումանյանը, Ս. Տեր-Պաբրիկյանը, Ս. Համբարձումյանը, Ա. Կարինյանը, Գ. Վարդանյանը, Լեոն, Գ. Դեմիրճյանը, Պ. Աբելյանը, Կ. Միքայելյանը, Յ. Խանդաղյանը, Մ. Սարյանը և ուրիշներ:

Բացելով ՀՕԿ-ի հիմնադիր ժողովի առաջին նիստը, Ա. Երզնկյանն ասաց. «Ընկերներ, հասարակական գործիչների մի խմբի մեջ միտք է հղացել օգնության հասնել հորհրդալին Հայաստանի կառավարության այն բոլոր ձեռնարկումներին, որոնք ուղղված են բնակչության տնտեսական դրության բարելավման և երկրի տնտեսական վերաշինության գործին: Ահա այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ համարվեց հայ ժողովրդի բոլոր կենսունակ ուժերը համախմբել և կազմել մի այնպիսի կոմիտե, որն ի վիճակի լինի իրագործել այդ խնդիրները»¹:

Ժողովն ընտրեց մի հանձնաժողով, որին հանձնարարվեց հետևյալ նիստի համար պատրաստել կոմիտեի կանոնադրության նախագիծը: Նախագիծը մշակող հանձնաժողովի կազմի մեջ էին Ա. Երզնկյանը, Ալ. Պապոյանը, Գ. Տեր-Ռուբինյանը, Լ. Թումանյանը, Ալ. Տեր-Վարդանյանը:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 28:

ՀՕԿ-ի կանոնադրութեան նախագիծը քննարկվեց ժողովի երկրորդ նիստում սեպտեմբերի 14-ին: Ժողովը որոշեց այն ներկայացնել ՀՍՍՌ Ժողովմասովեաի նախագահութեանը՝ ի հաստատման:

Հիմնադիր ժողովի որոշմամբ կոմիտեն անվանվեց «Հայաստանի օգնութեան կոմիտե», որի անմիջական խնդիրն էր օգնութեան հասնել Հայաստանի սովյալ բնակչութեանը և այդ գործունեութեան ընթացքում նաև օժանդակել երկրի ընդհանուր շինարարութեան գործին¹:

Հայաստանի օգնութեան կոմիտեի առաջնահերթ և կարեւոր խնդիրներէն էին գաղութահայ աշխատավորներին և Սովետական Հայաստանի միջև ամուր կապ հաստատելը, արտասահմանի հայ աշխատավորներին լծակից դարձնելը Հայաստանում լայն թափ ստացած սոցիալիստական շինարարութեանը, Սովետական Հայաստանի մասին ճիշտ տեղեկութիւններ հաղորդելը արտասահմանյան հայ աշխատավորութեանը:

Սեպտեմբերի 15-ին Հայկական ՍՍՌ Ժողովմասովեաի նախագահ Ա. Մյասնիկյանն ընդունեց կոմիտեի պատգամավորութեան անդամներ Հովհաննես Թումանյանին, Լեոյին, Ա. Պապովյանին, Ա. Տեր-Վարդանյանին: Ծանոթանալու համար Ա. Մյասնիկյանին հանձնեցին Հայաստանի օգնութեան կոմիտեի կանոնադրութեանը: ՀՍՍՌ Ժողովմասովետը հավանութիւն տվեց ՀՕԿ-ի կանոնադրութեանը և այն վերադարձրեց ժողովին՝ ի հաստատման: Սեպտեմբերի 18-ին հրավիրվեց հիմնադիր ժողովի վերջին նիստը, որը հաստատեց ՀՕԿ-ի կանոնադրութեանը և ընտրեց ՀՕԿ-ի նախագահութիւնը՝ 9 հոգուց, անձնափոխանորդներ՝ 5 հոգուց և վերստուգիչ հանձնաժողով՝ 5 հոգուց:

Հայաստանի օգնութեան կոմիտեի առաջին կազմը բաղկացած էր 77 հոգուց: Նրանք էլ փաստորեն հանդիսանում են ՀՕԿ-ի հիմնադիրները:

ՀՕԿ-ի կենտրոնական վարչութեան նախագահութեան անդամ ընտրվեցին Հ. Թումանյանը, Ա. Երզնկյանը, Երվ. Թա-

դիանոսյանը, Դր. Տեր-Սիմոնյանը, Ա. Պապովյանը, Հով. Մելիքյանը, Կ. Տեր-Օհանյանը, Գ. Վարդանյանը և Լեոն:

Վերստուգիչ հանձնաժողովի կազմում ընտրվեցին Ս. Կանայանը, Գ. Պիճիկյանը, Գ. Եվանգուլյանը, Պ. Աբելյանը, Լ. Թումանյանը¹:

ՀՕԿ-ի հիմնադիր ժողովի 5-րդ նիստում հաստատվեց նախագահութեան կողմից ընդունված կոչ՝ ուղղված «Աշխարհի ամեն կողմը ցրված հայերին»²: Ժողովը որոշեց կոչը հրապարակել կոմիտեի անունից և բոլոր անդամներին ստորագրութեամբ:

1921 թվականի սեպտեմբերի 15-ին ՀՍՍՌ Ժողովմասովետը ընդունեց դեկրետ՝ Հայաստանի օգնութեան կոմիտեի (ՀՕԿ) հիմնադրման մասին, որը մեծ ոգևորութիւն առաջացրեց կոմիտեի կազմի մեջ: Նույն թվականի հոկտեմբերի 16-ին լույս տեսավ «Հայաստանի օգնութեան կոմիտե» օրաթերթը, միայն մեկ համարով, որտեղ գետեղվեցին ՀՍՍՌ Ժողովմասովետի դեկրետը՝ Հայաստանի օգնութեան կոմիտեի հիմնադրման մասին, և մի շարք այլ հոգովածներ՝ նվիրված ՀՕԿ-ի խնդիրներին և նպատակին:

Շուտով Հայաստանի օգնութեան կոմիտեն մշակեց և ՀՍՍՌ Ժողովմասովետին ներկայացրեց իր ստատուտը, որի մեջ նշված էին կոմիտեի խնդիրները, նպատակը և անելիքները: 1922 թվականի հունվարին ՀՍՍՌ Ժողովմասովետի նախագահութիւնը հաստատեց այն:

Ստատուտով առաջադրված նպատակներին հասնելու համար կոմիտեին իրավունք էր վերապահված՝ դրամական, իրերով և մթերքներով նվիրատվութիւններ հավաքելու ինչպես Հայաստանում, նույնպես և արտասահմանյան հայ գաղութներում: Կոմիտեն այս ամենը փոխադրում էր և բաշխում թե՛ կառավարական և թե՛ իր մարմինների միջոցով: Բացի դրանից, կոմիտեին իրավունք էր վերապահվում գրավոր և բանավոր պրոպագանդա մղել (հրատարակութիւններով, հրապարակային ժողովներում և այլն), հատուկ նվիրակներ և պատգամավորներ ուղարկել արտասահման,

¹ ՀՍՍՌ ՀՌՍԾՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 28:

¹ ՀՍՍՌ ՀՌՍԾՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 28:

² Նույն տեղը, գ. 5, թ. 1:

հարաբերությունն պահպանել արտասահմանի հասարակական այն օրգանների հետ, որոնք կարող էին իր նպատակների համար օգտակար լինել:

204-ը թե իր նպատակներով և թե իր կազմակերպական սխտեմով, անկախ իր անդամների քաղաքական դավանանքից, հանդես եկավ որպես հասարակական մարմին և իբրև այդպիսին նա իրեն շեղոք հայտարարեց քաղաքական և պարտիական պայքարի հանդեպ:

204-ը ենթակա էր բացառապես ժողկոմսովետի հսկողությանը: Նա ազատ էր առանձին ժողկոմների, ինչպես նաև տեղական իշխանությունների իրավասությունից:

Կոմիտեի անդամները իրենց գործունեության միջոցին կատարած հանցանքների համար պատասխանատու էին միայն ժողովրդական դատարանների առաջ:

204-ը իրավաբանական անձ ճանաչվեց: Կոմիտեի հասցեով ուղարկված դրամները, իրերը և ընդհանրապես ամբողջ գույքը ազատ էին պետականացումից, բռնագրավումից ու այլ սահմանափակիչ օրենքներից և օգտվում էին պետական գույքերի տեղափոխման համար սահմանված արտոնություններով:

Կոմիտեն իր ունեցած գույքը և դրամական գումարը կարող էր օգտագործել միայն ստատուտով նախատեսված նպատակների սահմաններում, իսկ իր նպատակներին համապատասխան հատուկ նվերները կարող էր օգտագործել ըստ նվիրատուի կամքի:

Կոմիտեն իրավազոր էր գրավոր ու բանավոր զեկուցումներ ներկայացնել, դիմել ՀՍՍՌ ժողկոմսովետի նախագահին և առանձին ժողկոմներին՝ իր գործունեության հետ կապված և նրանից բխող հարցերի կապակցությամբ աչակցություն ու օգնություն ստանալու համար:

Ստատուտի համաձայն, Հայաստանի օգնության կոմիտեի կենտրոնական վարչությունը հաստատվեց Երևան քաղաքում:

204-ի կենտրոնական վարչության կազմում մեծ աշխատանք կատարեց նրա նախագահ Հ. Թումանյանը: Նրա նախաձեռնությամբ 204-ի կենտրոնական վարչությունը մա-

մուլի միջոցով, կոչերով ու հեռագրերով Սովետական Միության և արտասահմանի հայ հասարակության մեջ սկսեց պրոպագանդել 204-ի մասնաճյուղեր կազմակերպելու, նրան նպատակների և խնդիրների մասին: Բացի դրանից, վարչության անդամներից մի քանիսը գրեցին հոդվածներ, նամակներ և դրանք ուղարկեցին արտասահմանի հայկական «գաղութները»:

204-ի վարչության՝ «Աշխարհի ամեն կողմը ցրված հայ ժողովրդին» կոչում ասված է. «Աշխարհի ամեն կողմը ցրված հայ ժողովուրդ, լսի՛ր, քե՛զ է կանչում Հայաստանի օգնության կոմիտեն, քեզ է կանչում Հայաստանի մայրաքաղաքում գումարված ամեն հոսանքի հայ գործիչների և գրականագետների ժողովը և գուցե երբեք դու չես լսել նրանց ձայնը այսպես միացած և միահամուռ: Եվ այնքան մեծախորհուրդ մի վայրկյանի մաքառումներից հետո, համաշխարհային թոհոբոհից, լայնածավալ ալեկոծությունների և ազետների ծովից գերագույն ճիգերով բարձրանում է ազատ ու անկախ Հայաստանը:

Լսի՛ր քեզ կանչող հայրենիքի ձայնը և շտապիր օգնության ամեն բանով, ինչով կարող ես...»

Հայրենակիցներ, շուտափույթ հասցրեք Հայաստանի օգնության կոմիտեին առաջին հերթին հաց, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, զգեստ, դեղորայք և դրամ, ապահովելու բնակչությանը սովամահության վտանգից, բնդունելու այն գաղթականներին, որոնք հոգնած և ընչազուրկ՝ դառնում են իրնց հայրենիքը...»¹:

1921 թվականի նոյեմբերին 204-ի վարչությունը գաղթահայությանը դիմեց երկրորդ կոչով, որտեղ ասված է. «...Ձմեռ է գալիս, ցուրտ է: Հայ գաղութներից մեր կոմիտեն մինչև այժմ չի ստացել և ոչ մի օգնություն: Դեռ դա բավական չէ, մեր ունեցած տեղեկությունների համաձայն, Հայաստանին օգնություն հասցնելու խնդիրը, մասնավորապես Պոլսո հայ շրջաններում, դառնում է նույնիսկ կուսակցական պայքարի և քաղաքական շահախնդրության առարկա: Եվ

ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, դ. 5, թ. 1:

այս բոլորը կատարվում է այն ժամանակ, երբ Ալեքսանդրապոլի և Ղազախի շրջանի հայ գյուղացիությունը ենթակա է սովամահության, երբ Զանգեզուրի հայր սովի ճիրաններից փախչում է թուրքեստան, երբ մեր գաղթականները և մասնավորապես մեր անմեղ որբուկները իրենց ոչ միայն դողդոջուն մարմնով են բողբոջում անհամբույր բնության դեմ, այլև հավիտենական անեծքի կոթող գերեզմաններով լցնում հարազատ երկիրը...

Ռուսաստանը, շնայած իր համատարած սովին, իրապես եղբայրաբար կտրում է իր ժողովրդի բերանից հացը և տասնյակ հազարավոր փթերով պարբերաբար ալյուր և այլ մթերքներ է մատուցում հայ ժողովրդին:

Օգնություն ցույց տվեք հայ ժողովրդին»¹:

Այդ ժամանակ 204-ի հիմնադիր անդամներից շատերը հատուկ կոչերի և նամակների միջոցով գաղթահայ օջախների հայ աշխատավորներին խնդրում էին շուտափույթ օգնության հասնել հայ ժողովրդին:

«Կամենում եք օգնության հասնել հայ ժողովրդին,— գրում էր այդ օրերին Գ. Դեմիրճյանը,— իր հասարակ, բայց խսկապես վսեմ գործի մեջ ուզո՞ւմ եք, որ նա ապրի և վերաշինի իր տունը՝ պարզապես շտապեք օգնության և ընդհատեք ճառերը»²:

204-ի կոչերին արտասահմանի հայ «գաղութները» արձագանքեցին գործնական աշխատանքով, որի կենդանի արտահայտությունը եղան նվիրատվությունները: 1922 թվին արտասահմանի հայ գաղութներից ստացվեցին, որպես նվերներ, գրենական պիտույքներ, դեղորայք, կոշիկ, շորեր՝ տղամարդկանց, երեխաների ու կանանց համար, կտորեղեն, սերմացու, ալյուր, ատաղձագործական գործիքներ, խրտացրած կաթ, օճառ, բրինձ, լոբի և այլն: Զանգեզուրի բնակչության համար ուղարկվեց 10000 փութ սերմացու և մեծ քանակությամբ հագուստեղեն, գրենական պիտույքներ, օճառ, դեղորայք և այլն: Ղամարլուի շրջանում Միջագետ-

քից եկած գաղթականներին տրվեց բժշկական օգնություն, դեղորայք: Աշտարակի շրջանում տեղավորված գաղթականներին հատկացվեց 2000 փութ ցորեն: Էջմիածնի շրջանի Յեզլի, Ագարակ և Բախչա գյուղերում վերաբնակված 100 սասունցիներին տրվեց 500 փութ ցորեն: Էջմիածնի շրջանի Կոչ գյուղի դպրոցի շենքը կառուցող բանվորներին տրվեց հագուստեղեն, գրենական պիտույքներ և 100 փութ ալյուր: Շիրակի ջրանցքը կառուցողներին որպես նվեր տրվեց 16000 փութ ցորեն, հանրային գրադարանի շինարարներին իբրև նպաստ բաց թողնվեց 38000 փութ ալյուր և դրամ՝ 1411 ուրբլի:

204-ը Էջմիածնի գավառի էվջիլարի տափաստանը ոռոգելու համար նախաձեռնեց ջրանցքի կառուցմանը, որը պահանջում էր մոտավորապես 50000 ուրբլի՝ ոսկով: Զրանցքը պետք է ոռոգեր 1500 դեսյատին հող: Կառուցման ամբողջ գումարը հանձն առավ մուծել Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեն:

204-ի գլխավոր վարչության գործունեության առաջին շրջանում՝ 1921—1923 թթ., երբ Հայաստանի տնտեսական վիճակը ծանր էր, գլխավոր վարչությունը մեծ աշխատանք տարավ ՍՍՍՄ տերիտորիայի հայաբնակ կենտրոններում 204-եր կազմակերպելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ առաջին հերթին մեծ շարժում սկսվեց Վրաստանի և Ադրբեջանի հայաբնակ վայրերում, Մոսկվայում, Լենինգրադում, Ռոստովում, Միջին Ասիայում և այլն:

Երևանից Հ. Թումանյանը մեկնում է Թբիլիսի: Նրա նախաձեռնությամբ 1921 թվի հոկտեմբերի 31-ին գումարվեց մի մեծ ժողով: Հ. Թումանյանը բացման խոսքում անդրադառնալով 204-ի գլխավոր վարչության կազմակերպմանը և նրա խնդիրներին, միաժամանակ ժողովականներին հայտնեց Հայաստանում տիրող սովի և ժամանակավոր դժվարությունների մասին: Նա վստահություն հայտնեց, որ հայ ստեղծագործ ժողովուրդն իր լավ բարեկամների, առաջին հերթին ՌՍՖՍՌ-ի աջակցությամբ, կհաղթահարի դժվարությունները, կլիկվիդացնի սովը և հիվանդությունները:

Հ. Թումանյանը Վրաստանի հայ բնակչությանը կոչ

¹ ՀՍՍՌ ՀՌՄԾՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 1—9:

² ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 4/114, գ. 184, թ. 50:

արեց միավորվել 204-ի Վրաստանի կոմիտեաների մեջ և մասնակցել Հայաստանի վերաշինութեանը: Ժողովում բովանդակալից, հուզիչ ճառերով հանդես եկան Լեոն, Գ. Գեմիբճյանը, Հ. Թումանյանը, Գ. Լեոնյանը և ուրիշներ:

Ժամանակավոր հանձնաժողովի աջակցութեամբ ժողովը որոշեց «Թիֆլիսի կոմիտեն» կոչել «Հայաստանի օգնութեան կենտրոնական կոմիտե Վրաստանում», որի նախագահութեան մեջ ընտրվեցին 9 անդամ և 3 անձնափոխանորդներ: Նույն թվականի նոյեմբերի 2-ին տեղի ունեցավ Հայաստանի օգնութեան Վրաստանի կոմիտեի նախագահութեան անդամիկ նիստը, որն ընտրեց կոմիտեի ժամանակավոր նախագահներ՝ Ս. Կասյան, Ս. Հարությունյան¹, փոխնախագահներ՝ Լ. Թումանյան, Վ. Վարդանյան, բարտուղար՝ Ան. Ստամբուլցյան²:

ՌԿ(Բ)Պ Կովկասյան բյուրոյի դեկտեմբերի 31-ի որոշմամբ թույլատրվեց Հայաստանի օգնութեան կոմիտեի գործունեությունը Վրաստանում:

Վրաստանի կոմիտեն իր գործունեության հենց առաջին օրերին կոմիտեաներ ստեղծելու մասին հատուկ գրություններով դիմեց Վրաստանի զանազան քաղաքներում ապրող հայ գործիչներին: Այդ նպատակով Թիֆլիսի կոմիտեից տեղերը մեկնեցին ներկայացուցիչներ:

204-ի Վրաստանի կոմիտեի առաջին կազմը բաղկացած էր 142 անդամից: Կոմիտեն ուներ հետևյալ հանձնաժողովները՝ վերստուգիչ, ֆինանսական, գյուղատնտեսական և հագուստեղեն մատակարարող:

Սովետական Վրաստանի Կենտգործկոմը միանգամայն ազատ պայմաններ ստեղծեց Հայաստանի օգնութեան Վրաստանի կոմիտեի բարեհաջող աշխատանքների համար և հատուկ դեկրետով ճանաչեց նրա գոյությունը:

Կոմիտեի իրավական դրությունը նրա կազմակերպման

¹ Սամսոն Հարությունյան — Ժողովրդական ազատություն կուսակցության անդամ: Աշխատել է 204-ի կենտրոնական վարչության կազմում և 204-ի Վրաստանի ճյուղի նախագահ և փոխ-նախագահ:

² Տե՛ս «Հրավիրակ» № 1, էջ 4—5, 1925 թ. (204-ի կենտ. վարչության օրգան):

պահին եղել է հետևյալը. կոմիտեն իրեն ճանաչեց որպես Երևանի բաժանմունք և ղեկավարվում էր 204-ի մշակած հիմունքներով: Որոշ ժամանակ անց կոմիտեն կատարեց ստատուտի մի շարք փոփոխություններ և ներկայացրեց ընդհանուր ժողովին՝ ի հաստատություն: Այդ ժամանակ Թիֆլիսում և Վրաստանի այլ քաղաքներում կային մեծ թվով գաղթականներ և անգործներ: Չափազանց մեծ կարիքի մեջ էր գտնվում նաև Թիֆլիսում ապրող մտավորականությունը: Կոմիտեն մեծ ուշադրություն դարձրեց այդ հանգամանքին և կազմակերպեց հագուստեղեն, մանուֆակտուրա ձեռք բերելու ու մատչելի գներով այն վաճառելու գործը: Այդ ուղղությամբ հատկապես գովելի է կոմիտեին կից գործող «Հագուստեղեն մատակարարող հանձնաժողովի» աշխատանքը: Կոմիտեն իր վրա վերցրեց նաև հիվանդ գաղթականներին բուժելու և Հայաստան տեղափոխելու գործը:

Կոմիտեի բուն նպատակը երկրի վերաշինությունն էր. այս ուղղությամբ կոմիտեի աշխատանքն արտահայտվեց Հայաստանի գյուղացիությանն օգնություն կազմակերպելու գործում: Այդ նպատակով կոմիտեն հիմնում է «գյուղատնտեսական ֆոնդ», բայց քանի որ ինքը բավականաչափ միջոցներ չուներ, ապա բանակցություններ է սկսում Ամերկոմի հետ՝ ընդհանուր ուժերով այդ գործը կազմակերպելու համար: 1922 թվականի մարտի 20-ին նրանք համաձայնվում են «գյուղատնտեսական ֆոնդը» մուծել 5000-ական դոլար¹: Հիմնական կապիտալի ավելացումը կախված էր 204-ից, որը և վարում էր ամբողջ գործն իր հայեցողությամբ:

Վրաստանի կոմիտեն Ալեքսանդրապոլում և Զալալօղլիում հիմնում է արտոնյալ պայմաններով գյուղատնտեսական գործիքներ, շինանյութեր և այլ անհրաժեշտ ապրանքներ հայթայթող պահեստներ:

Հայաստանի գյուղատնտեսությունը կոմիտեի միջոցով խոշոր օգնություն ստացավ Ռոստովի համապատասխան

¹ Վրաստանի կոմիտեի դրամագլուխը առ 1-ը սեպտեմբերի 1923 թվականի եղել է 10797 ռուբլի 21 կոպեկ (ոսկով):

գործարաններից: Այսպես, Աքսայի գործարանի բանվորների ուղարկեցին 300 գութան և գերանդի: 204-ի Մոսկվայի կոմիտեն ձեռք բերեց և Հայաստան ուղարկեց 10000 ավտորիական գերանդի, անդրպետառը՝ 65000 գերանդի:

Կոմիտեի գյուղատնտեսական ֆոնդի ընդարձակման համար 1922—1924 թթ. տեղի ունեցան մի քանի խորհրդակցություններ, որտեղ մասնակցել են ՀՍՍՌ հողօրոգիներ և գյուղբանկի նախագահը: Համաձայնություն է կայացվել՝ միասնական ձևով Հայաստանի գյուղացիությունը մատակարարել գյուղատնտեսական գործիքներ¹:

Կոմիտեի գյուղատնտեսական գործիքների և շինարարական նյութերի պահեստների գործունեությունը զարգացավ և լայնացավ հատկապես 1923—1924 թթ. ընթացքում: Գծվարությունը՝ շինարարական նյութի պակասն էր, բայց կոմիտեն հաղթահարեց այն, Հայաստան ուղարկելով երկաթ, տանիքի թիթեղ, ներկեր, գերան, փայտեղեն, տախտակ և այլն: Գարնանը կոմիտեն պատվիրեց և Հայաստան ուղարկեց գութաններ:

Կաթնատնտեսության և մեղվաբուծության համար նոր պատվերներ մտանալուց հետո կոմիտեն նոր պահեստներ հիմնեց Ղարաքիլիսայում, Շամշադինում, Դիլիջանում:

Ղարաքիլիսայի գյուղատնտեսական գործիքների պահեստը էժան գներով գյուղատնտեսական գործիքներ մատակարարեց գյուղացիներին: Երեք ամսվա ընթացքում պահեստը վաճառեց 72 գութան, 1100 գերանդի, 450 քլունգ և այլն: Գյուղատնտեսական ֆոնդի միջոցները մեծացնելու նպատակով կոմիտեն փետրվարի 13-ին կազմակերպեց երեկույթ-ներկայացում:

Կոմիտեն Դիլիջանում հիմնեց գյուղատնտեսական ֆոնդ, կազմակերպեց բժշկական, իրավաբանական, տեխնիկական և ագրոնոմիական սեկցիաներ:

Ժողովրդի առողջապահությանը նպաստելու համար կոմիտեն դիմեց զանազան հիմնարկությունների աջակցությանը և իբրև նվեր՝ Եզրիպոսի բարեգործական ընկերությունից

ստացավ խինին ու այն տրամադրեց Հայաստանում մալարիայի դեմ պայքարող հանձնաժողովին:

Հայ ժողովրդի համար օգտակար աշխատանք կատարեցին նաև Վրաստանի մյուս քաղաքներում կազմակերպված 204-ի ճյուղերը, հատկապես Բաթումի կոմիտեն, որը կազմակերպվեց 1921 թվականի դեկտեմբերի 25-ին, զանազան հիմնարկությունների ներկայացուցիչների հասարակական ժողովի կողմից: Ժողովի որոշմամբ Աջարիայում հիմնվեց Հայաստանի սովյալների կոմիտե 75 հոգուց, ընտրվեց կոմիտեի նախագահություն և վերստուգիչ հանձնաժողովի կազմ. նախագահ ընտրվեց Վ. Կարապետյանը, փոխնախագահ՝ Տ. Մխչյանը, գանձապահ՝ Ղ. Թերզյանը¹:

Աջարիայի 204-ի կոմիտեն պարտավորվեց օգնել Հայաստանի կառավարությանը՝ արտասահմանից ներգաղթը հաջող կատարելու համար, ցուցակագրում էր գաղթականներին, նրանց հասցնում նյութական և բժշկական օգնություն. բազմաթիվ հիվանդ գաղթականների տեղավորում է քաղաքային հիվանդանոցում: Այդ ուղղությամբ շնորհակալ աշխատանք կատարեց բժիշկ Ռանսկին²:

Գաղթականներին օգնելու նպատակով կոմիտեն որոշեց բացել «Աշխատանքի բյուրո»: Միջագետքից այդ ժամանակ Հայաստան եկան մոտ 7000 մարդ, կոմիտեն նրանց օգնեց պարենով: Բացի դրանից, կոմիտեն Պոլսից ուղարկած սերմացուն, ալյուրը և այլ մթերքներ, ընդամենը 25000 փուլ, Հայաստան փոխադրեց իր տնտեսական ներկայացուցչի վագոններով, ծախսերը կատարելով կառավարության կամ ուղարկող հիմնարկի հաշվին: Եկամտի մշտական աղբյուր ունենալու նպատակով կոմիտեն որոշեց բացել «Մի բաժակ թեյ» սրճարան, որի համար շենք ստացավ սոցալ-ժողկոմատից:

Հայաստանի օգնության Աջարիայի կոմիտեն մինչև 1924 թվականի ապրիլը ՀՍՍՌ պարենժողկոմատի միջոցով Երևան ուղարկեց 13 վագոն զանազան մթերքներ, այդ թվում՝

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 245, թ. 6—7:

² Նույն տեղը, գ. 295, թ. 6—7:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 74, թ. 1—3:

30.000 կիլոգրամ ալյուր, 15.800 կիլոգրամ գարի և այլն¹: Հիշյալ բոլոր ապրանքները ստացվել էր Կ. Պոլսո շուկայում: 1923 թվականի սեպտեմբերի 10-ին հրավիրվեց Աբխազիայի հայերի համագումար. որոշում ընդունվեց կազմակերպել «Հայաստանի օգնության Աբխազիայի կոմիտե»:

1925 թվականի փետրվարի 7-ին Քիֆլիսում հրավիրվեց 204-ի Վրաստանի մասնաճյուղի ընդհանուր ժողով, որը լրացյալ վարչության նախագահի ղեկավարությամբ կոմիտեի աշխատանքների մասին: Ժողովում նշվեց վարչության կատարած լավ աշխատանքը՝ Հայաստանի գյուղատնտեսության վերականգնման օգնություն ցույց տալու գործում: Միայն մեկ սարում (1924 թվական) կոմիտեի ակտիվը եղել է 28101 ուրբի²:

Ժողովը հատուկ բանաձև ընդունեց երկրի սոցիալիստական շինարարության գործում կոմիտեի դերի ու նշանակության մասին և նշեց նրա հետագա խնդիրները:

204-ի Վրաստանի կոմիտեն բարձր գնահատելով Ա. Ֆ. Մյասնիկյանի դերը Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադրման և ամրապնդման գործում, նպատակահարմար գրտավ ստեղծել «Մյասնիկյանի անվան հատուկ ֆոնդ», որը կազմակերպվեց 1925 թվականի մայիսին: Այդ ֆոնդի օգտին կոմիտեն առաջինը մուծեց 1000 ուրբի և կոչ արեց հավաքել նվիրատվություններ:

Անդրկովկասում գործող Հայաստանի օգնության կոմիտեների գործունեության համար կարևոր իրադարձություն էր 1925 թվականի փետրվարի 21—24-ը Երևանում տեղի ունեցած 204-ի պլենումը՝ Բաքվի, Քիֆլիսի ճյուղերի ներկայացուցիչների և Երևանում ապրող 204-ի բոլոր հիմնադիր անդամների մասնակցությամբ: Պլենումը քննարկեց այնպիսի հարցեր, որոնք նպատեցին 204-ի Անդրկովկասի ճյուղերի հետագա աշխատանքների բարելավմանը: Օրակարգի հարցերի մեջ կարևոր էին 204-ի կենտրոնական վարչության նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարումները:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 343, թ. 75:

² Նույն տեղը, գ. 243, թ. 75:

Պլենումը լսելով տեղերից եկած մի շարք ներկայացուցիչների ղեկավարումները, որոշեց 204-ի բոլոր ճյուղերի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրել ընդհանուր համագումար. քննարկեց 204-ի ճյուղերի ներքին կանոնադրության նախագիծը և հաստատեց այն:

Պլենումի ընդունած բանաձևում ասված է. «1923—1924 թթ. մեր առաջին գործը եղավ ամրապնդել կապը արտասահմանյան հայ գաղութների հետ և իմանալ գաղթահայության տրամադրության մասին: 1924 թվականին արտասահմանյան մի շարք երկրներում ստեղծվեցին 204-ի ճյուղեր: Այդպիսիները կազմակերպվեցին Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլն: Մինչև 1925 թ. 204-եր կազմակերպվեցին Ֆրանսիայում, Անգլիայում, Ամերիկայում, Պարսկաստանում, Գերմանիայում, Ալժիրում և այլուր: Արդեն կազմակերպվել ու գործում էին Միջին Ասիայի և Ադրբեջանի 204-երը»¹:

Հայաստանի օգնության կոմիտեի Բաքվի ճյուղը կազմակերպվեց 1922 թվականի փետրվարի 27-ին քաղաքային ընդհանուր ժողովում: 204-ի Բաքվի ճյուղի հիմնադրման գործում մեծ է Ադրբեջանում Հայկական ՍՍՌ տնտեսական ներկայացուցիչ Դովլաթյանի դերը: Այդ ժողովին ներկա էր և ճառով հանդես եկավ Հայաստանի Կենտրոնական կոմիտեի նախագահ Ա. Համբարձումյանը:

Ժողովն ընտրեց 11 հոգուց բաղկացած վարչություն՝ Դովլաթյանի նախագահությամբ: Վարչությունը, որը և հանդիսացավ 204-ի Բաքվի մասնաճյուղի հիմնադրող կազմը, հրատարակեց հատուկ կոչ, ապա ձեռնարկեց միանվագ հանգանակություն և գումարը ուղարկեց Երևան՝ 204-ին: Սակայն Բաքվի 204-ի աշխատանքում դեռևս կային լուրջ թերություններ, որի վերացման համար 1922 թվականի դեկտեմբերի վերջերին Բաքու է մեկնում Ա. Երզնկյանը: Այնուհետև, 1924 թվականի առաջին կեսին, Բաքու մեկնեցին 204-ի կենտրոնական վարչության լիազոր ներկայացուցիչ Գ. Վարդանյանը և Կոնստանտին Գյուլնազարյանը: Նրանք տեղում ծանոթացան 204-ի նախկին վարչության աշխա-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 109, թ. 89—95:

տանքները հետ և օգնեցին նորընտիր վարչութիւնը: Կոմիտեի աշխատանքները ուժեղացնելու նպատակով ստեղծվեց մի օժանդակ մարմին՝ 8 հոգուց:

1924 թվականի հուլիսի 10-ին Բաքվում գումարվեց հայ հասարակայնութիւնը և արհեստավորական խավերի ներկայացուցիչների ժողով, որը քննարկեց կազմակերպական հարցեր և կոնկրետ միջոցառումներ մշակեց կոմիտեի հետագա գործունեութիւնը համար:

1922 թվականին ՀՊԿ-ը կազմակերպվեցին Կ. Պոլսում (այստեղ ստեղծվեց ՀՊԿ-ի բաժանմունք) և Պարսկաստանի մի շարք քաղաքներում ու շրջաններում:

Հայաստանի ձգնութիւնը Թավրիզի կոմիտեն կազմակերպվել է 1922 թվականի ապրիլի 21-ին Թավրիզի հայ գաղութի զանազան խավերի ներկայացուցիչների բազմամարդ ժողովում: Այս կոմիտեն գործի անցավ շատ վստահ՝ Ատրպատականի հայութիւնը ջերմ հայրենասիրութիւնը անկախութիւնը պայմաններում: 1922 թվականի ապրիլի 30-ին Թավրիզի ՀՊԿ-ը բաց թողեց հատուկ կոչ: «... Նորակազմ կոմիտեն,— ասված է այդ կոչում,— լի հավատով... դեպի հայ ժողովրդի ապագան, անցնում է գործի և վստահ է, որ Թավրիզի հայը, շնայած տնտեսական իր աննախընթաց քայքայմանը, ոչ մի միջոց և ջանք չի խնայի նպատակու Հայաստանի վերաշինութիւնը մեծ գործին»¹:

Հայաստանի օգնութիւնը Թավրիզի կոմիտեի առաջին կազմում աշխատել են Հ. Ավագյանը (նախագահ), Ստ. Նոյնազարյանը (փոխնախագահ), Ս. Բաղդասարյանը (գանձապահ), Եր. Հարութչյունյանը (քարտուղար)²:

Թավրիզի և Թեհրանի ՀՊԿ-ներում սկզբում որոշ վեճ տեղի ունեցավ այն մասին, թե ՀՊԿ-ի Թավրիզի՞ ճյուղը պետք է ենթարկվի Թեհրանի ճյուղին, թե՞ ընդհանրապէս, բայց շուտով վեճը լուծվեց ՀՊԿ-ի գլխավոր վարչութիւնը միջոցով: Վեճը լուծվեց այսպէս՝ Ատրպատականը պետք է ենթարկվեր Թավրիզի ճյուղին, իսկ Քիրման-շահը, Ռաշտը և էնզելին՝ Թեհրանի ճյուղին:

1925 թվականին Պարսկաստանում ընդամենը գործում էր ՀՊԿ-ի 6 ճյուղ, Հոնաստանում՝ 18, Բուլղարիայում՝ 4 ճյուղ: Բարկանյան երկրների ՀՊԿ-ի մասնաճյուղերում աչքի ընկնող աշխատանք են կատարել ՀՊԿ-ի լիազոր-ներկայացուցիչներ Գ. Վարդանյանը և Գ. Շահվերդյանը:

1922—1925 թթ. ՀՊԿ-ը կազմակերպվեցին Եվրոպայի հետևյալ քաղաքներում՝ Փարիզում (Ա. Նրդնիլյանի ակտիվ միջամտութիւնով), Լոնդոնում, Նյու-Յորքում, Մանչեստրում, Բեռլինում (Սաքո Սահակյանի նախաձեռնութիւնով): Չնայած բոլոր այն խոչընդոտներին ու արգելքներին, որ հարուցում էին դաշնակները, այնուամենայնիվ, ամենուրեք աշխատավոր հայութիւնը միավորվում էր ՀՊԿ-երի մեջ:

1922 թվականին բազմաթիվ ՀՊԿ-եր կազմակերպվեցին Թուրքեստանում: Այսպէս, օրինակ, կազմակերպվեց «Հայաստանի Մերձվոլգյան սովյալներին օգնող Թուրքեստանի կենտրոնական հանձնաժողով», որի նպատակն էր օգնել հայ գաղթականներին և մերձվոլգյան սովյալներին, նպատակ էր Հայաստանի վերաշինութիւնը գործին:

Կենտրոնական հանձնաժողովի կազմը (11 անդամ և 5 թեկնածու) ընտրվեց հասարակայնութիւնը ընդհանուր ժողովում: Կենտրոնական հանձնաժողովն իր հերթին կազմակերպեց շրջանային հանձնաժողովներ՝ Անդիջանում, Սամարղանդում, Չարչում, Մերվում, Տաշքենդում, Թեքենում, Չիքմենդում և այլ քաղաքներում:

Թուրքեստանի ՀՊԿ-երի աշխատանքների աշխուժացման գործում մեծ էր ՀՊԿ-ի ներկայացուցիչ Գ. Լեոնյանի դերը:

Այսպիսով, արտասահմանում և Սովետական Միութիւնը տերիտորիայի հայաբնակ շրջաններում բազմաթիվ ՀՊԿ-երի ծնունդը վկայում էր հայ աշխատավորների ջերմ սիրո մասին դեպի հայրենի երկիրը: Այդ բանը վառ կերպով դրսևորվեց ՀՊԿ-ի 2-րդ համագումարում պատգամավորների ելույթներում:

ՀՊԿ-ի վարչութիւնը լուրջ նախապատրաստական աշխատանք կատարեց ՀՊԿ-ի 2-րդ համագումարը հրավիրելու համար: Այդ նպատակով կազմվեց հատուկ հանձնաժողով, որի անդամներն էին Յ. Խանգաղյանը, Պ. Աբելյանը, Գ. Ան-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 247, թ. 40:

² Նույն տեղը:

տելեպլանը, փոխանդամները՝ ժ. Միրզախանյանը և Կ. Գյուլ-նազարյանը¹։

Համագումարում քննարկվելիք օրակարգի մասին հանձնաժողովը մշակեց նախագիծ և այն ներկայացրեց 204-ի գլխավոր վարչությանը։

Հայաստանի օգնության կոմիտեի երկրորդ համագումարը տեղի ունեցավ 1922 թվականի հուլիսի 20—23-ը, Երևանում։

Համագումարին մասնակցում էին 204-ի 22 անդամներ, ինչպես նաև ներկայացուցիչներ՝ Պոլսո 20Մ-ից, Թավրիզի, Տաշքենդի, Մոսկվայի, Խարկովի, Հյուսիսային Կովկասի և Վրաստանի 204-երից։

Համագումարը բացեց 204-ի նախագահ Ա. Երզնկյանը։ Նա շատ սեղմ անդրադարձավ համագումարի նպատակին ու խնդիրներին, բնութագրեց Կոմիտեի և նրա ճյուղերի խնդիրները ժողովրդական տնտեսության զարգացման գործում։ Համագումարն իր առջև խնդիր էր դրել մոբիլիզացնել բոլոր 204-երը և հասարակական կազմակերպությունները՝ հայրենի երկրի վերաշինման գործում։ 204-ի համագումարը հաստատեց հետևյալ օրակարգը. 1) Զեկուցումներ տեղերից։ 2) Հաշվետվություն 204-ի գործունեության մասին։ 3) Զեկուցում Հայաստանի կուլտուրական շինարարության մասին։ 4) Զեկուցում Հայաստանի տնտեսության վերականգնման մասին։ 5) Կազմակերպական հարցեր։ 6) Ընթացիկ հարցեր։ 7) Նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը։

Համագումարում հարակից զեկուցումներով հանդես եկան Բաքվի, Տաշքենդի, Կ. Պոլսո և Թիֆլիսի ներկայացուցիչները, որոնք հանգամանորեն պատմեցին այն աշխատանքների մասին, որ կատարվել էին տեղերում։ Նրանք ընդգրծեցին, որ բոլոր 204-երի և հասարակական ուժերի շաղկապող օղակը հանդիսանում է ավերված հայրենիքը վերաշինելու ցանկությունը։

Այնուհետև, համագումարը քննարկեց Երևանի պետական

համալսարանի դասախոս Մ. Աբեղյանի և ՀՍՍԹ լուսժողովուրդի Պ. Մակինցյանի զեկուցումները՝ կուլտուրական շինարարության խնդիրների մասին։ Նրանք շատ հետաքրքիր փաստեր բերեցին հայ ժողովրդի կրթության և կուլտուրայի զարգացման համար Հայաստանի կառավարության ձեռնարկած միջոցառումներից։

Նշանավոր ազգագրագետ, 204-ի կազմակերպման ակտիվ մասնակից Ե. Կալայանը համագումարին հաղորդեց այն մասին, որ Արևմտյան Հայաստանում հավաքված կան 1000-ից ավելի ժողովրդական հեքիաթներ, որոնց հրատարակման համար անհրաժեշտ է 204-ի օգնությունը։

Համագումարի վերջին նիստում լավեց Ա. Երզնկյանի զեկուցումը. նա նշեց, որ Հայաստանին ցույց տրվող օգնությունը կոմիտեի կողմից զարգանում է և մեծանում։

Համագումարը բոլոր հայ «գաղութներին» կոչ արեց ակտիվորեն մասնակցել Հայաստանի տնտեսության վերականգնման գործին։

Այնուհետև Ե. Թաղիանոսյանը իր ելույթում նշեց հատկապես Թիֆլիսի կոմիտեի և 204-ի Կ. Պոլսի բաժանմունքի շնորհակալ աշխատանքը։ Միաժամանակ քննադատեց այն ճյուղերին, որոնք դեռևս դանդաղկուտության նշաններ էին ցույց տալիս Հայաստանի շինարարությանն օգնելու գործում։

Համագումարը ընտրեց գլխավոր վարչության և վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմ։ 204-ի գլխավոր վարչության կազմում ընտրվեցին Արամայիս Երզնկյանը (որպես նախագահ), Սամսոն Հարությունյանը՝ փոխնախագահ, անդամներ՝ Կոնստանտին Գյուլնազարյանը, Երվանդ Թաղիանոսյանը, Սարգիս Կասյանը, Ալեքսանդր Պապովյանը, Գազիկ Պիճիկյանը, Գրիգոր Վարդանյանը, Դրաստամատ Տեր-Միմոնյանը, Յուլիա Խանդադյանը, Հովհաննես Մելիքյանը, Դանուշ Շահվերդյանը¹։

204-ի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Գեղամ Անտելեպյանը, անդամներ՝ Ֆ. Ավդալյանը, Ս. Կանայանը, Մ. Մանվելյանը։

¹ ՀՍՍԹ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 19։

¹ ՀՍՍԹ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 24, թ. 7։

Համագումարը հաստատեց Հայաստանի օգնության կոմիտեի անդամների նոր կազմ՝ 87 հոգուց¹։

Համագումարից հետո ՀՕԿ-ի վարչությունը հատուկ կոչով դիմեց Ատրպատականի հայությանը. «Այսօր հայ ժողովուրդը երես առ երես կանգնած է սովի և ծայրահեղ շքավորության դեմ։ Օգնություն, տնտեսական ամենալայն օգնություն է հարկավոր Հայաստանին։ Մի՞թե Ատրպատականի հայությունը պետք է զլանա իր եռանդուն աջակցությունը ցույց տալ Հայաստանի վերաշինության գործին։ Մի՞թե Ատրպատականի հայությունը, որը միշտ հաղորդակից է եղել Հայաստանի ցավերին ու ուրախություններին, պիտի այսօր ետ մնա մյուս հարևաններից իր հայրենասիրական պարտքը կատարելու մեջ»²։

ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը, ի նկատի ունենալով, որ արտասահմանյան ճյուղերը կազմակերպման տեսակետից դեռևս թույլ էին և երբեմն ընկնում էին դաշնակների ազդեցության տակ, որոշեց պատվիրակություն ուղարկել արտասահման, տեղերում ծանոթանալու ՀՕԿ-երի աշխատանքներին։ Այդ տեսակետից խրախուսելի գործ կատարեց Հ. Թումանյանի ղեկավարությամբ (1921 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին) Կ. Պոլսում եղած պատվիրակությունը, որը տեղում օգնեց վերացնելու շատ թյուրիմացություններ, վերջ տալու մի շարք անհեթեթ լուրերի և առասպելներին՝ Հայաստանի ներքին դրության մասին³։

Պատվիրակությունը ճշմարիտ տեղեկություններ տվեց Հայաստանի ներքին վիճակի մասին, օգնեց ՀՕՄ-ի⁴ աշխատանքներին, հարթեց ՀՕԿ-ի և ՀՕՄ-ի միջև եղած որոշ տարածայնությունները։ ՀՕՄ-ի ազդեցությունը շէր սահմանափակ-

վում միայն Կ. Պոլսով, նա մեծ ազդեցություն ուներ նաև Ռումինիայի, Բուլղարիայի, Հունաստանի հայության վրա։

ՀՕԿ-ի պատվիրակությունը խորհրդակցեց ՀՕՄ-ի ղեկավարների հետ, նշելով նրա տեղը, խնդիրները և դերը Հայաստանի տնտեսական վիճակի բարելավման գործում։ Պատվիրակությունը կարողացավ մաքրել ՀՕՄ-ի կազմը որոշ արկածախնդիր, անբարեհույս տարրերից։ Շուտով ամրապնդվեց ՀՕԿ-ի և ՀՕՄ-ի կապը և վերջինս պարտավորվեց նյութական ու բարոյական աջակցություն ցույց տալ մայր հայրենիքին։ Իրոք, 1921 թվականի վերջերին Կ. Պոլսի հայությունը Հայաստան՝ ՀՕԿ-ի հասցեով ուղարկեց 9 վազոն հագուստեղեն (հին), դեղորայք, բժշկական գործիքներ և այլն¹։

ՀՕՄ-ի ուղարկած միջոցներից կատարվեցին անհատական և խմբակային բավարարումները։ ՀՍՍԻ լուսժողկոմատին, Կենտգործկոմին, պարենժողկոմատին, Ֆինժողկոմատին և հողժողկոմատին տրվեց որոշ քանակի գրենական պիտույքներ, շորեղեն, կոշիկեղեն։ Հանրային զրադարանի օգտին 500 ռուբլի (ռսկով) նպաստ տրվեց։

1922 թվականին Սովետական Հայաստանում տնտեսական, պարենային դժվարությունները հաղթահարվեցին, սովը լիկվիդացվեց։ Հայաստանի աշխատավորների ջանքերն ուղղվեցին երկրի ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի վերականգնմանը, գյուղատնտեսության և արդյունաբերության հետամնացությունը հաղթահարելուն և զարգացնելուն։ Այդ գործում Հայաստանը, ինչպես ասվեց, մեծ օգնություն ստացավ Սովետական Ռուսաստանից։

Ահա, փոփոխված տնտեսական պայմաններում ՀՕԿ-ի գլխավոր վարչությունն իր աշխատանքներն սկսեց հարմարեցնել երկրի գոյավիճակին։ Արդեն ՀՕԿ-երն իրենց ուշադրությունը բեռեցին տնտեսության վերականգնմանն ու զարգացմանը։ Իրենց այդ գործունեության ընթացքում, իհարկե, մոռացության չտալով նաև օգնությունը բնակչու-

¹ ՀՍՍԻ ՀՌՍՇԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 24, թ. 9։

² Նույն տեղը, գ. 247, թ. 40։

³ ՀՍՍԻ ՀՌՍՇԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 24, թ. 10։

⁴ ՀՕՄ — Հայրենիքի օգնության մարմին, կազմակերպվել է 1920 թ.

Պոլսում։

¹ ՀՍՍԻ ՀՌՍՇԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 247, թ. 40։

Երկրի տնտեսութեան վերականգնման աշխատանքներին բոլոր 204-երի ցույց տված օգնութեան գործում կարևոր քայլ հանդիսացավ 204-ի 3-րդ համագումարը, որը կայացավ 1923 թվականի հոկտեմբերի 14—20-ը Երևանում:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին պատվիրակներ բազմաթիվ 204-երից: Ներկայացուցիչներ էին եկել բարեգործական որոշ միություններից և Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի հայկական գաղթավայրերից: ԱՄՆ-ից մասնակցում էր «Խորհրդային Հայաստանի տեխնիկական ընկերության» ներկայացուցիչը, որն իր ողջ ունեւնի խոսքում ասաց. «Մենք մինչև այժմ զննանք ենք ուրիշների համար, իսկ հիմա սեփական օջախ ունենք, թեև փոքր, բայց մերը, ուր մեր բոլոր մասնագետները խոստանում են ի սպաս բերել իրենց ծառայությունը, նպաստել նրա ամրապնդմանը»¹:

Համագումարը նշեց այն ուղիները, որոնցով 204-ի գլխավոր վարչությունը և նրա ճյուղերը պետք է ղեկավարվեին ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին:

204-ի 3-րդ համագումարի քննարկած ֆինանսական, տնտեսական, շինարարական, գյուղատնտեսության և արդյունաբերության հարցերի մասին ընդունվեցին կոնկրետ որոշումներ: «Հայաստանի տնտեսական շինարարության հարցի մասին» բանաձևում ասված է. «Այսուհետև 204-ն իր ամբողջ ուժերը պետք է լարի և զբաղվի միայն Հայաստանի վերաշինության խնդիրներով, տրամադրելով թե՛ նյութական, թե՛ դրամական և թե՛ բարոյական միջոցներ այդ գործին»²:

Կուլտ-կրթական աշխատանքի բնագավառում համագումարը 204-ի խնդիրը համարեց նորոգել գյուղական մի շարք դպրոցներ, օգնել նրանց գրեթեական արիտուքներով և այլն³:

Համագումարի երկրորդ նիստում զեկուցումներ լսվեցին

¹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 17 հոկտեմբերի 1923 թ.:

² ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 388, թ. 4:

³ Նույն տեղում, գ. 39, թ. 37:

204-ի մի շարք ճյուղերի գործունեության մասին: Առաջինը խոսեց 204-ի Մոսկվայի կոմիտեի ներկայացուցիչ Ա. Քալանթարյանը: Նա պատգամավորներին ծանոթացրեց Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեի կազմակերպման աշխատանքներին և կոմիտեի կազմի հետ: 204-ի Թավրիզի կոմիտեի ներկայացուցիչ Երվանդ Հարությունյանը կանգ առավ Պարսկաստանից Հայաստան վերադարձող սալմաստցիների վիճակի վրա և խնդրեց համագումարին՝ միջնորդություն հարուցել սովետական կառավարության առաջ հայրենադարձությունը արագացնելու համար: 204-ի Փարիզի և Մանչեստրի ներկայացուցիչները իրենց զեկուցումների մեջ նշեցին Սովետական Հայաստանի տեխնիկական դարգացման անհրաժեշտության մասին, խոստանալով օգնել հողի մշակման և ճահիճների շորացման ուղղությամբ Հայաստանի կառավարության խոշոր ձեռնարկումներին:

204-ի Խարկովի ճյուղի պատգամավոր Ա. Բակունցն իր զեկուցման մեջ անդրադարձավ Խարկովի հայ հասարակության կատարած օգտակար աշխատանքներին, նշեց կոմիտեի հետագա խնդիրները Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնման գործում:

204-ի Խարկովի ճյուղը հիմնվել է 1923 թվականի մայիսի վերջին: Նույն թվականի հունիսի 3-ին ընտրվեց 204-ի Խարկովի ճյուղի նորընտիր կոմիտեի կազմ և նախագահություն: 204-ի նախագահ ընտրվեց պրոֆեսոր Ս. Սուրովչին, բարտուղար՝ Ա. Բակունցը, անդամներ ընտրվեցին Հ. Ավդալյանը, Խ. Սամվելյանը, Գ. Տեր-Ղևոնդյանը, Ս. Գաղայանը, Գ. Պապովյանը և Մ. Ազիզյանը:

1925 թվականի մարտին Խարկովի հայության ընդհանուր ժողովը կոմիտեի նախագահ ընտրեց Լ. Մազմանյանին, իսկ տեղակալ՝ Գ. Սուլջանին: Կոմիտեի առաջին գործը եղավ ծանոթացնել Խարկովի հայերին 204-ի խնդիրների հետ: Այդ նպատակով կազմակերպվեցին մի շարք դասախոսություններ, զրույցներ, երեկույթներ և բաց թողնվեցին կոչեր: Խարկովում այդ ժամանակ ապրում էին մեծ թվով հայեր, 1914 թվականից այնտեղ գործում էին հայկական դպրոց, գրադարան, թատրոն և այլն:

204-ի Խարկովի ճյուղը ակտիվ մասնակցություն է հանդես բերում էվչիլարի շրանցքի կառուցման աշխատանքներին: Այդ գործում դրական դեր խաղացին Խարկովում բրնակվող հայ կանայք: 1923 թվականի հուլիսի վերջերին հրավիրված ընդհանուր ժողովը կազմակերպեց Խարկովի հայ կանանց կոմիտե¹:

204-ի 3-րդ համագումարում ինֆորմացիաներով հանդես եկան Բաթումիի, Կրասնոդարի, Նովորոսիյսկի, Աստրախանի 204-երի ներկայացուցիչները:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էր և զեկուցեց Հայաստանի օգնության սեծովյան կոմիտեի ներկայացուցիչ Պողոս Փաշալյանը: Մինչև Նովորոսիյսկի կոմիտեի կազմակերպվելը այստեղ գործում էր Նովորոսիյսկի հայությանն օգնող կոմիտեն, որի նպատակն էր՝ հայ գաղութի շրջանակներում կուլտուր-կրթական և բարեգործական աշխատանքներ կատարելը: Հայաստանի հետ որոշ կապ հաստատելուց հետո Նովորոսիյսկում կազմակերպվեց Հայաստանի օգնության կոմիտե, որի առաջին գործը եղավ օգնել խիստ կարիքավորներին: Այդ ժամանակ Թուրքիայից Նովորոսիյսկ էր մեկնել գաղթականների մի խումբ՝ 80 հոգուց: Կոմիտեն իր հավաքած գումարները ծախսեց նրանց վրա: Չանցած որոշ ժամանակ Թուրքիայից եկան 200 գաղթականներ, որոնք ճանապարհին թալանվել էին թուրք ծովահենների կողմից: Կոմիտեն սրանց նույնպես ցույց տվեց օժանդակություն՝ տեղավորեց սեծովյան շրջանների ծխախոտի պլանտացիաներում:

Նովորոսիյսկում գործում էր Հայաստանի և տեղական հայերի օգնության կոմիտեն, որը 1923 թվականին ընդունեց Բաթումիից 500, իսկ Տաճկաստանից՝ 360 գաղթական և իր միջոցներով տեղավորեց Սև ծովի ափին: Կոմիտեն տեղական հայ ազգաբնակչության համար կատարեց շատ օգտակար գործ: «Հյուսիսաշեն» շրանցքի կառուցման համար հավաքեց և Մոսկվա ուղարկեց 4000 ռուբլի:

1923 թվականի հոկտեմբերին Նովորոսիյսկի 204-ի ճյու-

ղը ձուլվեց Հայ փոխադարձ օգնության կոմիտեի հետ և ստացավ Աստրախանի հայ հասարակության գործերի կոմիտե անունը:

Պյատիգորսկում գործում էր Թերեքի նահանգական 204-ը, որը հավաքեց և 204-ի Մոսկվայի կոմիտեին ուղարկեց 11000 ռուբլի: Պյատիգորսկում այդ ժամանակ բնակվում էին 24836 հայեր: Նույն ժամանակ Ստավրոպոլում տեղավորվել էին 100 հայ գյուղացիներ՝ Կարսի և Բաթումիի շրջաններից: Մեծ թվով հայեր էին բնակվում Արմավիրում, մոտ 20 հազար մարդ: Լուգանսկում նույնպես կազմակերպվեց 204-ի ճյուղ, որի վարչության նախագահն էր Գ. Ս. Թումանյանը, տեղակալը՝ Պ. Տ. Թումանյանը: Լուգանսկի կոմիտեում հաշվվում էր 117 մարդ:

Մեծ թվով գաղթականներ տեղավորվել ու մշտական բրնակություն էին հաստատել Նոր Նախիջևանում, որտեղ 204-ի ճյուղեր կազմակերպվեցին ավելի ուշ: Այդ շրջանում գտնվում էին հայաբնակ շատ գյուղեր, Մեծ Սալայում ապրում էին 4000 հայեր, Փոքր Սալայում՝ 3500, Չալդերում՝ 6000, Թոփթիում՝ 7500, Նիովիթանում՝ 3000, Ս. Խաչում՝ 2000: Նշված գյուղերում գործում էին առաջին աստիճանի հայկական դպրոցներ:

204-ի 3-րդ համագումարի ընդունած բանաձևում նշվեցին այն ուղիները, որոնցով հայկական «գաղութները» պետք է մասնակցեին Սովետական Հայաստանի շինարարության գործին¹:

Համագումարը ընտրեց 204-ի Կենտրոնական կոմիտեի կազմ, նախագահություն և վերստուգիչ հանձնաժողով: Համագումարի վերջին 10-րդ նիստում 204-ի կազմում ընտրվեցին Ա. Թամանյանը, Սարգիս Հովհաննիսյանը, Վահան Թոթովենցը, Էմին Տեր-Գրիգորյանը, Գարեգին Լևոնյանը, Լևոն Յաղուբյանը և ուրիշներ: 204-ի նախկին կազմը ավելացավ 14 նոր անուններով²:

Համագումարը մեծ գոհունակությամբ ընդունեց կոչ-հրա-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 6, թ. 6:

² Նույն տեղը:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 306, թ. 19:

վեր՝ ուղղված աշխարհի բոլոր մասերում ապրող հայ աշխատավորներին: Այդ կոչում ասված է. «Վերջին երկու-երեք տարիներին... շատ բան է արվել Հայաստանում: Ոռոգվում են անջրդի հողերը, խոշոր չափով զարկ է տրվել գյուղատնտեսական թանկարժեք կուլտուրաների և հացաբույսերի ինտենսիվ զարգացմանը, վերաշինվել և բարեկարգվել են քաղաքներ ու գյուղեր, առանձին ուշագրություն առարկա է դարձել գաղթականներին խնամելու գործը: Հսկայական աշխատանքներ են կատարվել ժողովրդի կրթական, ինչպես և առողջապահական ու սանիտարական ասպարեզներում:

Տասնյակ հազարավոր որբ մանուկներ սնուցանելու և դաստիարակելու գործում խոշոր դրամական միջոցներ է տվել խորհրդային կառավարությունը:

Երկրի տնտեսական դրության բարելավման, կուլտուրական կյանքի զարգացման և քաղաքական կացության ամրապնդման գործում խոշոր ազդակ է հանդիսացել Անդրկովկասյան Ֆեդերացիան, որի մի հավասար անդամն է Խորհրդային Հայաստանը:

Կազդերովում է, ոտքի է կանգնում Հայաստանի աշխատավոր ժողովուրդը, սակայն, երկրի ծայր աստիճան չբավորները և միջոցների բացակայությունը արգելք է հանդիսանում օգտագործելու երկրի բնական հարստությունը և զարկ տալու արդյունաբերա-գործարանային կյանքին:

Հասել է պատմական րոպեն, երբ գաղութային հայությունը պետք է հետապնդի մի նպատակ: Մեր հայրենիքի վերաշինության և վերածնության գաղափարը գերազանցորեն այն նվիրական նպատակն է, որի հանդեպ պիտի լուեն ամեն տեսակի կողմնակի հաշիվներ և նկատառումներ: Եվ ահա այս գիտակցությամբ է, որ Հայաստանի օգնության կենտրոնական կոմիտեն, սույն կոչով դիմելով հայրենիքից դուրս գտնվող հայությանը, ջերմորեն պատվիրում է Յ-րդ համագումարի մասնակիցներին՝ լծվել այն աշխատանքներին, որոնք մեր հայրենիքը տանում են դեպի տնտեսական և քաղաքակրթական վերածնություն»¹:

Իրոք, Հայաստանի օգնության կոմիտեն, իր բոլոր ճյուղերով հանդերձ, 1922—1923 թվականներին օգնեց հայ ժողովրդին և մասնակցեց Սովետական Հայաստանի տնտեսական շինարարությանը: Դա արտահայտվեց թե՛ նյութական ու դրամական և թե՛ տեխնիկական ու բարոյական տեսակետից:

Մինչև 1923 թվականի վերջերը ՀՊԿ-ի արտասահմանյան ճյուղերից Երևան՝ ՀՊԿ-ի վարչության հասցեով ստացվում է 42000 փութ սերմացու, 30000 փութ ալյուր, ինչպես նաև հագուստեղեն, դեղորայք, դրամական նվիրատվություններ: ՀՊԿ-ի պարսկական ճյուղերից 1923 թվականին մուտք եղավ 13500 ուրբլի ոսկով և 800 փութ ցորեն: ՀՊԿ-ի ուկրաինական ճյուղերի կողմից հավաքվեց և Հայաստան ուղարկվեց 100 շերվոնեց: Եգիպտոսի ՀՊԿ-ից ստացվեց 100 դոլլար, Անգլիայից՝ հագուստեղեն և խինին, Ամերիկայից և Գերմանիայից՝ հագուստեղեն, դեղորայք: Այդ միջոցներից ՀՊԿ-ը Երևանի հանրային գրադարանին նպաստ տվեց 3800 ուրբլի՝ ոսկով:

ՀՊԿ-ի գործունեության մեջ ուշագրավ է արտասահմանից Հայաստան վերադարձած գաղթականության տեղավորման, ապա՝ նրանց օգնություն կազմակերպելու գործը: Այն ժամանակ մեծ թվով գաղթականներ էին տեղավորվել Բասարգեշարի շրջանում և Ղամարլուում: ՀՊԿ-ի վարչությունը, համապատասխան կառավարական մարմինների միջոցով, նրանց համար կազմակերպեց նյութական և բժշկական օգնություն: Ալեքսանդրապոլի գավառում տարածված զանազան հիվանդությունների դեմ պայքարելու համար ՀՊԿ-ն ՀՄՄԻ առողջապահության ժողկոմատին հատկացրեց դեղորայք: Մեծ օժանդակություն ցույց տվեց նաև մալարիայի դեմ պայքարելու գործում: 1923 թվականին ՀՊԿ-ն իր վրա է վերցնում 3 բժշկական կետերի պահպանման ամբողջ ծախսերը, մոտավորապես 7000 ուրբլի (ոսկով) գումարով: Կոմիտեն ամբողջովին իր վրա վերցրեց նաև Դիլիջանի գավառում մալարիայի դեմ պայքարող շրջիկ խմբի ծախսը, որը կատարեց դեղորայքի ֆոնդից: Բացի դրանից, ՀՊԿ-ի գլխավոր վարչությունը մերձվոլգյան շրջանից Ալեքսանդրապոլ էվա-

¹ ՀՄՄԻ ՀՌՄՇՊԿՍ, ֆ. 178, ց. 1, գ. 76, թ. 5—7

կուսցված բնակչությանը հատկացրեց 100 կոմպլեկտ հագուստեղեն, Գողթանի շրջանի տուժվածներին, Պ. Մակինցյանի միջոցով, ուղարկեց շորեղեն, օճառ և պարենային մթերքներ: Լայն օժանդակություն հասցրեց նաև բազմաթիվ դպրոցների վերանորոգման գործին: Այսպես, էջմիածնի գավառի Կոշ գյուղի դպրոցական շենքի կառուցումն ավարտելու համար բաց թողեց դրամ, բացի այդ, գրենական պիտույքներով և հագուստեղենով օգնեց աշակերտներին:

Շիրակի ջրանցքը կառուցող բանվորներին բաց թողեց 1600 փութ գարի, լուսժողկոմատին՝ 1000 փութ ալյուր, մայրաքաղաքում գործող արտակարգ հանձնաժողովներին՝ հագուստեղեն, կոշիկեղեն և այլն:

Այդ ժամանակ Երևան հասան նաև 204-ի Մոսկվայի կոմիտեի կողմից ուղարկված նվիրատվությունները: Այսպես, 1923 թվականի մարտի 8-ին ՀՍՍՌ ժողտնտխորհի միջոցով ստացվում է 4 արկղ ատաղձագործական գործիքներ: Կ. Պոլսից ստացվեց 4 արկղ հագուստեղեն, 1 արկղ դեղորայք և 3 արկղ դեղորայք էլ Թիֆլիսի 204-ից:

Քաբվի մասնաճյուղը 1922 թվականի հուլիսին ուղարկեց 2 միլիարդ ուրլի՝ Ռուսաստանի Ֆեդերացիայի դրամով, Զանգեզուրի սովյալների համար¹:

204-ը կատարեց նաև բազմաթիվ այլ կարգի անհատական և խմբական բավարարումներ, այդ նպատակով օգտագործելով 1922—1923 թվականներին 204-ից և ՀՕՄ-ից ստացված հագուստեղենը, կոշիկեղենը, դեղորայքը, գրենական պիտույքները, ցորենը, ալյուրը, լոբին, օճառը, բրինձը, ընդամենը՝ 75 վագոն:

Ահա ոչ լրիվ տվյալներով այն զգնությունը, որ եղել է 204-ի կողմից Հայաստանին նրա տնտեսական ծանր ժամանակաշրջանում՝ 1921—1922 թվականներին:

Իր գործունեության երկրորդ շրջանում՝ 1923—1937 թվականներին 204-ի ողջ ուշադրությունն, ինչպես ասվեց, բեռովեց ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության վերականգնմանն ու կուլտուրական շինարարությանն աջակցելու գործին:

3. 204-ԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Հայաստանի օգնության կոմիտեի վարչությունը իր 1923 թվականի հունվարի 29-ի՝ «Հարգելի հայրենակիցներ» կոչով դիմեց բոլոր 204-երին, հայրենակցական և վերաշինաց միություններին, նրանց հրավիրելով մասնակցել երկրի ավերված տնտեսության վերականգնման աշխատանքներին:

«Հայաստանի վերաշինության ընդհանուր գործի մեջ,— ասված է կոչում,— ջրանցքներից և էլեկտրիֆիկացումից հետո առաջին տեղն է զբաղում երկրի առողջացման խնդիրը: Հայաստանի բոլոր գավառների շատ մասերում արգավանդ հողերի ծոցում չափազանց շատ է այն ճահիճների թիվը, որոնք պատճառ են դառնում ծանր հիվանդություններին¹:

Իրոք, ճահիճների տարածությունը Հայաստանում հասնում էր 46395 դեսյատինի, որը ըստ գավառների ներկայացնում էր հետևյալ պատկերը. էջմիածնի գավառում՝ 17170 դեսյատին, Երևանի գավառում՝ 15460 դեսյատին, Նոր-Քաջաղետի գավառում՝ 6420 դեսյատին, Ալեքսանդրապոլի գավառում՝ 3930 դեսյատին, Փամբակ-Լոռու գավառում՝ 1220 դեսյատին, Դարալագյազի գավառում՝ 770 դեսյատին, Զանգեզուրի և Մեղրիի գավառում՝ 350 դեսյատին, Դիլիջանի գավառում՝ 75 դեսյատին:

Ճահիճների չորացումը մեծ նշանակություն ուներ ժողովրդական տնտեսության վերականգնման գործում, որով-

¹ ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 29, թ. 4—6:

¹ ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 89, թ. 29:

հետև նա հետապնդում էր երկու խոշոր նպատակ, նախ՝ ոչնչացնում էր մալարիան, երկրորդ՝ տալիս էր ավելի քան 46 հազար դեսյատին տարածություն մեր ու արգավանդ հողեր: Ելնելով խնդրի կարևորությունից, 204-ի վարչությունն իր աշխատանքներում շատ մեծ տեղ հատկացրեց ճահիճների շորացման գործին, այն համարելով իր ծրագրի հիմնական նպատակներից մեկը: 204-ը 1924 թվականի գարնանը ձեռնարկեց ռեսպուբլիկայի մի շարք ճահիճների շորացման աշխատանքը: Այսպես, օրինակ, իր միջոցներով ավարտեց Ղամարուրի և Գավալուի շրջանների ճահիճների շորացման աշխատանքները: Այս նպատակով Փարիզի հայ բարեգործական միությունը Երևան՝ 204-ին ուղարկեց 1000 ֆունտ ստեռլինգ¹:

1924 թվականի ամռանը 204-ի վարչությունը հատուկ կոչերով դիմեց իր մասնաճյուղերին և օգնություն խնդրեց: Այսպես, Մոսկվայի կոմիտեին ուղղված կոչում ասված է. «Մեծապես հուսով ենք, որ գաղութների մեր բոլոր ճյուղերը շատ մոտ ժամանակներում կավարտեն իրենց կազմակերպական աշխատանքները և միահամուռ ուժերով կփութան օգնել մեզ՝ մեր վերաշինական աշխատանքների մեջ, ջանք չխնայենք, ընկերներ, այդ գործում»²:

1924 թվականին պետական միջոցներով Հայաստանում կատարվեցին հետևյալ աշխատանքները. կառուցվեցին հիդրոէլեկտրակայաններ, զարկ տրվեց մանվածքային արտադրությանը Ալեքսանդրապոլում, շինարարական աշխատանքներ սկսվեցին Ղափանի պղնձահանքերի և գործարանների վերականգնման համար: Ակտիվ աշխատանքներ սկսվեցին նոր գործարանների հիմնադրման համար՝ բամբակագործ, ձիթահան և ձկնորս:

Կառուցողական վիթխարի աշխատանքներ սկսվեցին. շուտով ավարտվեցին Երևանի ու Արարատի երկաթուղային կայարանները: Նշված շինարարական աշխատանքներում ակտիվ մասնակցություն են ունեցել 204-երը: Շիրակի ջը-

րանցքի կառուցողական աշխատանքները ժամանակին և հաջող ավարտելու համար 204-ի կենտրոնական վարչությունը հատուկ շրջաբերականով դիմեց Բաղկանյան թերակղզու, Հաբեշտանի, Արևմտյան Եվրոպայի, Միացյալ Նահանգների, Պարսկաստանի, Միջագետքի, Անդրկասպյան երկրների, Ռուսաստանի և Կովկասի ճյուղերին, խնդրելով իրական օգնություն ցույց տալ Հայաստանին:

Այդ նպատակով հավաքված դրամը և առաքումները արտասահմանից Հայաստան հասցնելու համար մեծ գործ կատարեցին Լոնդոնի ռուսական բանկը և Կ. Պոլսում՝ 204-ի ներկայացուցիչ Գ. Շահվերդյանը¹:

ՀՍՍՌ Ժողովուրդների որոշմամբ 1923 թվականին ստեղծվեց Ալեքսանդրապոլի գավառի ռոտգման ու էլեկտրիֆիկացման կոմիտեն, որը գործնական քայլերի դիմեց Շիրակի ջրանցքի կառուցման համար: Կոմիտեն նախ սկսեց ջրանցքի թունելների բացումը: Կառուցվող ջրանցքը, իրոք, Շիրակի դաշտի համար հսկայական նշանակություն ունեցավ, ջրվեց ավելի քան 15000 դեսյատին վարելահող: Նրա նշանակությունը շատ մեծ էր արդյունաբերության համար: Շիրակի գյուղացիները վաղուց ի վեր երազել են ջրանցքի անցկացման մասին, բայց դա նախկինում՝ ցարիզմի և դաշնակների օրոք, իրագործել հնարավոր չէր: Այդ երազը իրականություն դարձավ միայն սովետական իշխանության ժամանակ: Պետք է ասել, որ ջրանցքի կառուցման համար սկսված աշխատանքներին մասնակցեց նաև սփյուռքահայությունը:

Ալգավառի² ռոտգման և էլեկտրիֆիկացման կոմիտեի 1923 թվականի հունվարի 23-ի կոչում ասված է. «Այժմ խոսքը ձեռն է, Հայաստանի աշխատավորներ, հասցրեք, որքան կարող եք, ձեր օգնությունը, որքան էլ այն քիչ լինի: Հասարակական օգնություն կազմակերպելու համար ջրանցքի կոմիտեն կազմակերպել է «Ջրանցքի շաբաթ»՝ հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 7-ը: Նվիրատվությունը խնդրում

¹ ՀՍՍՌ ՀՌՄԿԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 89, թ. 30:

² Նույն տեղը, գ. 90, թ. 32:

¹ ՀՍՍՌ ՀՌՄԿԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 122, թ. 11:

² Ալեքսանդրապոլի գավառ:

ենք ուղարկել Ալբեպոլ, Շիրակի «Ջրանցքի շաբաթ» կազմակերպող հանձնաժողովին»¹:

Ալեքսանդրապոլի գավառի էլեկտրիֆիկացման և ոռոգման համար տարվող նախապատրաստական աշխատանքներն սկսվեցին 1922 թվականի վերջերին: Սակայն այդ մեծ աշխատանքի արագ ավարտումը հնարավոր չէր իրագործել միայն 204-ի միջոցներով, եթե շիհներ Սովետական Ռուսաստանի օգնությունը: 1922 թվականի աշնանը Ռուսաստանից Հայաստան եկան ինժեներներ ու տեխնիկներ: Մեծ աշխատանք կատարեց 204-ի Մոսկվայի կոմիտեն, որի միջոցով նախօրոք բերվեց 20 վազոն անտառանյութ, 210 փուլի պողպատ, գնվեց 10000 տակառ ցեմենտ²: Սակայն ջրանցքի ավարտման համար պահանջվում էր մեծ օգնություն՝ 800000 ռուբլի (ռսկով)³:

Հայաստանի օգնության կոմիտեն ձեռնարկեց էվչիլարի ջրանցքի կառուցմանը: Ջրանցքի կառուցման համար հետախուզական աշխատանքներ սկսվեցին 1922 թվականի գարնանը, որոնք ավարտվեցին նույն թվականի նոյեմբերին:

Ջրանցքի շինարարական ծախսերը ամբողջովին իր վրա վերցրեց Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեն, որը ջրանցքին տվեց «Հյուսիսաշեն» անունը: «Այդ ջրանցքը, — ասված է Մոսկվայի կոմիտեի կոչում, — Ռուսաստանում ապրող հայերի առաջին նվերը կլինի հայ գյուղացուն»⁴:

Շուտով 204-ի կենտրոնական վարչության գործնական մարմինը ընտրեց էվչիլարի ջրանցքի կառուցման նախագծի քննության և հարակից խնդիրների հատուկ հանձնաժողով: Այդ հանձնաժողովում աշխատել են (1923 թ. մայիսի 10-ից) ինժեներներ Գ. Շիրմազյանը և Ա. Գ. Գասպարյանը: Մասնագետների կողմից կազմվեց կառուցման նախահաշիվ՝ 60000 ռուբլի գումարով:

Մոսկվայի կոմիտեն հանդիսավոր կերպով պարտավոր-

վեց ջրանցքի հետ տարվող կառուցողական աշխատանքները ավարտել և այն շահագործման հանձնել 1923 թվականի վերջերին: Ինչ խոսք, որ Մոսկվայի կոմիտեն իր գործունեության մեջ օժանդակություն ստացավ 204-ի Ռուսաստանի մյուս մասնաճյուղերից:

Հայաստանում ծավալվող տնտեսական-կուլտուրական շինարարությանը ակտիվ մասնակցություն ունեցան 204-երի միջոցով ՍՍՌՄ տերիտորիայում բնակություն հաստատած հայ աշխատավորներն ու ինտելիգենցիան:

Այժմ համառոտակի անդրադառնանք այն մեծ դերին, որ խաղացել է Մոսկվայի կոմիտեն Հայաստանի տնտեսական շինարարության գործում:

ա) Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեի գործունեությունը

Վաղուց ի վեր Մոսկվայում ապրում էին մեծ թվով հայեր: Այստեղ աշխատում էին հայ ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներ, գիտության և կուլտուրայի մեծ գործիչներ: Հենց նրանք էլ առաջինը արձագանքեցին 204-ի գլխավոր վարչության կոչին և իրենց նախաձեռնող խմբի առաջարկությամբ հիմնադրեցին «Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեն»: Այս պատվավոր հասարակական կազմակերպության հիմնադրման գործում մեծ դեր են խաղացել Ս. Տեր-Գաբրիելյանը, Կ. Միքայելյանը (գրող), Ա. Քալանթարը, Դր. Տեր-Սիմոնյանը և ուրիշներ:

204-ի Մոսկվայի կոմիտեի ստեղծման լուրին ջերմորեն արձագանքեցին մայրաքաղաքի, ապա Ռուսաստանի մյուս վայրերում ապրող հայ աշխատավորները:

1922 թվականի փետրվարի 26-ին ինտելիգենցիայի մի նեղ խավի մասնակցությամբ Մոսկվայում հրավիրվեց ժողով, որտեղ լավեց զեկուցում՝ «204-ի գլխավոր վարչության հիմնադրման և նրա խնդիրների մասին»: Հավանություն տալով 204-ի ստեղծման գաղափարին, ժողովը միաձայն որոշեց ստեղծել Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտե: Ժողովը, որին մասնակցում էին 72 հոգի, ընտրեց կոմիտե հետևյալ կազմով՝ Կարեն Միքայելյան (նախագահ),

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 11, թ. 9:

² Նույն տեղը, գ. 29, թ. 9:

³ Նույն տեղը, գ. 20, թ. 12:

⁴ Նույն տեղը, գ. 24, թ. 20:

Ս. Բաղդադյան (փոխնախագահ), Յ. Ս. Ասլանյան (փոխնախագահ), Յ. Բարսեղյան (գանձապահ), Ա. Քալանթար, Ս. Խաչատրյան, Ն. Բաղրամյան և այլն¹:

Ժողովը ընտրեց ֆինանսական և վերստուգիչ հանձնաժողովներ: Կոմիտեի պատվավոր նախագահ ընտրվեց ՌՍՖՍՌ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը:

Նույն թվականի մայիսի 12-ին կայացավ 2-րդ ժողովը, որն ընտրեց կոմիտեի նոր կազմ, նախագահութեամբ ինժեներ Ս. Ասլանյանի: 1922 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած ժողովը ընտրեց կոմիտեի 3-րդ կազմը: Նիստին մասնակցում էին 200 հոգի, որտեղ լսվեց Հայաստանից նոր վերադարձած Կ. Միքայելյանի զեկուցումը՝ «Հայաստանում կատարվող տնտեսական-կուլտուրական շինարարության մասին»: Ժողովը ընտրեց կոմիտեի նոր կազմ, որի մեջ մտան Կ. Միքայելյանը (նախագահ), ինժեներ Ս. Թառայանը (փոխնախագահ), ինժեներ Գ. Գրիգորյանը (փոխնախագահ), Ս. Հախնազարյանը (գանձապահ), Տեր-Մանվելյանը (քարտուղար), անդամներ՝ Ա. Քալանթարը, ինժեներ Տեր-Հովսեփյանը, ինժեներ Գ. Մաղաքյանը, Ստ. Տեր-Մկրտչյանը, Ա. Սիմոնյանը, Մ. Սողոմոնյանը²:

1922 թվականի հոկտեմբերին Մոսկվայում ՀՍՍՌ մշտական լիազոր ներկայացուցչությունը հատուկ վկայականով թույլատրեց Մոսկվայի կոմիտեին՝ «Ունենալ իր ստատուտը և ճյուղեր բանալ ՌՍՖՍՌ-ի բոլոր հայ գաղութներում»:

1922 թվականի աշնանը Մոսկվայի կոմիտեն ստեղծեց իր գավառական բաժինները. 1) Կենտրոնական, կենտրոնը՝ Մոսկվա, 2) Հարավային, կենտրոնը՝ Խարկով, 3) Հարավարևելյան, կենտրոնը՝ Ռոստով, 4) Սիբիր և Հեռավոր Արևելք, կենտրոնը՝ Խարբին, 5) Թուրքեստան, կենտրոնը՝ Տաշքենդ:

Կոմիտեի գավառական բաժինը հատուկ շրջաբերական ուղարկեց գանազան քաղաքների հայ գործիչներին, առա-

ջարկելով ներկայացուցիչներին ժողովների միջոցով ստեղծել ճյուղեր: Այդպիսի հանձնարարություններ տրվեցին ինժեներներ Սաֆարյանին, Թառայանին, Մաղաքյանին, Այդինյանին և Թարիայանին: Սիբիրում ՀՕԿ-ի ճյուղեր կազմակերպելու համար 1922 թվականի դեկտեմբերի 1-ին այնտեղ մեկնեց ինժեներ Լևոն Սաֆարյանը³:

1922 թվականի մարտի 19-ին կայացավ Պետրոգրադի հայ համայնքի ժողովը, որը կազմակերպեց Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեի ճյուղ: Մոսկվայի կոմիտեից այնտեղ մեկնեց Ն. Տեր-Մանվելյանը, որն անցկացրեց ժողովը և զեկուցում կարգաց «Հայաստանի տնտեսական վիճակի մասին» թեմայով: Ժողովը ընտրեց կոմիտեի կազմ և վերստուգիչ հանձնաժողով: Կոմիտեի նախագահ ընտրվեց Ս. Ն. Մարտիրոսյանը²:

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման օգնելու նպատակով Ռուսաստանի հայ «գաղութները» կազմակերպեցին նվիրատվություններ և հանգանակումներ: Այս գործում ակտիվ դեր խաղաց Հայաստանի օգնության Հարավ-արևելյան կոմիտեն, որը «Հյուսիսաշեն» ջրանցքի համար հավաքեց և ՀՕԿ-ին տրամադրեց 15000 ռուբլի (ոսկով), Ուկրաինան և Ղրիմը՝ 5000 ռուբլի, Թուրքեստանը՝ 10000 ռուբլի, Սիբիրը՝ 5000 ռուբլի (ոսկով)³:

Մոսկվայի կոմիտեն 1923 թվականի հունվարի 25-ին Ռուսաստանում ապրող բոլոր հայերին կոչ արեց լծակից լինել «Հյուսիսաշեն» ջրանցքի ոռոգող սխստեմի կառուցման աշխատանքներին:

Ռուսաստանի հայ աշխատավորները, ինտելիգենցիան գործնական քայլերի դիմեցին Հայկական ՍՍՌ-ին օգնություն կազմակերպելու գործում: Շուտով Մոսկվայի հայ ինժեներների նախաձեռնությամբ ձեռք բերվեց դազգահաշինական արհեստանոց և այն ուղարկվեց Երևան՝ ՀՕԿ-ի տրամադրության տակ: Էվջիլարի ջրանցքի կառուցման համար 1924

¹ ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 24, թ. 12:

² Նույն տեղը, թ. 14:

³ Նույն տեղը, թ. 45:

¹ ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 24, թ. 12:

² Նույն տեղը, թ. 1—3:

Թվականին կոմիտեի շանքերով հավաքվեց 95000 ռուբլի և ուղարկվեց ՀՊԿ-ին:

Հայաստանի տնտեսական և կուլտուրական շինարարությունը մասնակցություն ունեցան Մոսկվայի հայ կանայք և ուսանողները: Մոսկվայի կոմիտեին կից, 1922 թվականի վերջերին, կազմակերպվեց և ակտիվ գործունեություն ծավալեց Մոսկվայի կանանց սեկցիան, որը բաղկացած էր 12 հոգուց: Սեկցիան 1923 թվականի փետրվարի 16-ին Միությունների տանը կազմակերպեց հայկական մեծ երեկո և նրանից ստացված ամբողջ եկամուտը ուղարկեց Հայաստան: ՀՊԿ-ի Մոսկվայի կոմիտեն միաժամանակ կազմակերպական լուրջ աշխատանք կատարեց ՌՍՖՍՌ տերիտորիայում ապրող հայ աշխատավորների մեջ՝ նրանց մասնակից դարձնելով Սովետական Հայաստանի տնտեսական շինարարության գործին: Այդ նպատակով Մոսկվայի կոմիտեն բաց թողեց հատուկ կոչ, ուղղված «Ռուսահայ գաղութներին»: Կոչում ասված է. «Հայաստանը այժմ Կովկասյան Ֆեդերացիայի հանրապետություններից մեկն է: Ունի 1300 հազար ազգաբնակչություն, բաժանված է 10 գավառների և ունի 1000 գյուղ: Աղքատ ու ավեր է այդ երկիրը: Նա ունի մոտ 450 հազար գաղթականություն, որից դեռ 150 հազարը չի հաստատվել իր հողի վրա: Միայն երկրի մեջ կա 34000 որբ, գուցե մի այդքան էլ որբեր դրսում կան: Փոքր է այդ երկիրը և նրա դուրդացիությունը նեղվում է սակավահողությունից: Բայց նա գիտե կովել այդ կարիքի դեմ՝ քայլ առ քայլ անջրդի հողերը ջրարբի դարձնել:

Նոյեմբերի 7-ին արդեն ավարտվել է էջմիածնի ջրանցքը: Սկսվել են աշխատանքները Շիրակի ջրանցքի ավարտման համար: ...Ծրագրվում են՝ Սարգարաբաղի, էվջիլարի, Մեղրու և մյուս ջրանցքները:

Հայաստանի կառավարությունը միջոցներ է ձեռք առնում վերականգնելու բամբակի մշակույթը, որը պատերազմից առաջ 44000 դեսյատին տարածություն էր բռնում: Նույն կառավարության աջակցությամբ Հայաստանը կարողացավ սերմանել իր դաշտերը և մոտ 7 մլն փութ ցորեն ստանալ:

Հայաստանն ունի իր արդյունաբերությունը: Դեռ չի կառուցվել Ռուսաստանից նվեր ստացված տեքստիլ գործարանը, որը 18000 իլիկ պիտի ունենա:

Նսկայական է Հայաստանի շինարարական աշխատանքը կրթական և կուլտուրական հողի վրա: Նա այժմ ունի 20 միջնակարգ և 503 տարրական տիպի դպրոցներ՝ 52000 աշակերտներով, ունի իր համալսարանը՝ 50-ից ավելի պրոֆեսորներով: Սակայն տարիների ընթացքում ավերի, արյան, սովի և հիվանդության տարերքների զոհ դարձած Հայաստանն իր այդ հսկայական շինարարական աշխատանքը չի կատարում առանց դրսի օգնության»¹:

Մոսկվայի կոմիտեն իր գավառական հանձնաժողովների միջոցով կազմակերպեց նոր ճյուղեր և ամուր կապ հաստատեց Ն. Նախիջևանի, Խարկովի, Կիևի, Վլադիկավկազի, Աստրախանի, Գրոզնու, Նովոռոսիյսկի, Տաշքենդի, Պետրոգրադի, Աշխաբադի, Կոկանդի, Արմավիրի և այլ ճյուղերի հետ:

1923 թվականի սկզբներին Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեն Միությունների տանը կազմակերպեց մի մեծ երեկույթ, որտեղ զեկուցումներով հանդես եկան Իպոլիտով-Իվանովը և Վ. Բրյուսովը:

Կոմիտեն իր միջոցներով շտապ կերպով ձեռք բերեց արժեքավոր դեղորայք և այն ուղարկեց Հայաստան: Բացի այդ, Ագուլիսի կարոտյալների համար ուղարկեց գրենական պիտույքներ, կատարեց հանգանակություն՝ 5037 ու 88 կ. և այն ուղարկեց Երևան:

1923 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՊԿ-ի Մոսկվայի ճյուղը ձեռնամուխ եղավ կուլտուրական օգնության հանձնաժողովի կազմակերպմանը, որի նպատակն էր ընդառաջել երկրի կուլտուրական շինարարությանը:

Գրահանգանակության և պիտույքներ ձեռք բերելու գործում մեծ ակտիվություն ցուցաբերեց Մոսկվայի տեխնիկական գիտելիքների ընկերությունը, որը գործում էր Հայկական ՍՍՌ կուլտուրայի տանը կից:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿՍ, ֆ. 178, գ. 11, թ. 39:

1925 թվականի նոյեմբերի 1-ին Մոսկվայում հրավիրվեց կոմիտեի ընդհանուր ժողով, որին մասնակցում էին կոմիտեի 157 անդամներ: Ժողովը լսեց կոմիտեի վարչութչյան և վերստուղիչ հանձնաժողովի հաշվետվությունները: ՀՕԿ-ի գործունեության մասին ինֆորմացիաներ տվին Գ. Վարդանյանը, Կ. Միքայելյանը, Ս. Կամսարականը, Գ. Լեոնյանը: Իր աշխատանքների վերջում ժողովը ընտրեց Մոսկվայի կոմիտեի նոր վարչություն:

1923—1924 թվականներին, երբ կոմիտեի կազմը մեծացավ, կոմիտեի գործունեության շրջանակն ընդլայնվեց: Այս անգամ կոմիտեի հիմնական խնդիրը եղավ ոչ թե անհատական բավարարումները, այլ ակտիվ մասնակցություն ունենալը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության վերականգնմանը, որի համար նա դիմեց գործնական քայլերի:

Մոսկվայի կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպվեցին մի շարք տեխնիկական, բժշկական, ինժեներական, գյուղատնտեսական և այլ ընկերություններ: Գրանցից առավել աչքի էր ընկնում ՀՕԿ-ի կիրառական գիտությունների ժամանակավոր հայկական ընկերության բյուրոն, որի կազմի մեջ մտնում էին Ս. Ասլանյանը, Թառայանը (Տարակ), Պ. Մաղաքյանը և Տ. Ասկարյանը:

Բյուրոյի ստեղծման և հետագա գործունեության համար մեծ է պրոֆեսորներ Ա. Քալանթարյանի, Ս. Ասլանյանի, բժիշկներ Մ. Սողմոնյանի, Տեր-Շամվոնյանի, ինժեներ Գ. Գրիգորյանի և ուրիշների դերը:

Ժամանակավոր բյուրոն գովելի աշխատանք կատարեց Հայաստանում մի շարք շրային կարևոր մագսիտրալների և շրհորների կառուցման համար, այդ նպատակով ստեղծվեց հանձնաժողով, որի մեջ մտնում էին Գ. Գյանջունցյանը, Վելիկանովը (Ալաշալով), Տեր-Հարությունյանը, Մաղաքովը և Ղամազյանը¹:

Ժամանակավոր բյուրոն դրական աշխատանք կատարեց էվլիարի ջրանցքի շինարարության գործում: 1924 թվականի հուլիսի 26-ին ջրանցքը հանձնվեց շահագործման, բացմանը

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 314, թ. 1—44:

ներկա էին Մոսկվայի կոմիտեի ներկայացուցիչներ Յ. Խանզադյանը և Պողոս Աբելյանը:

Ժամանակավոր բյուրոն մշակում էր այնպիսի հարցեր, որոնք նպաստում էին կիրառական գիտությունների զարգացմանը ռեսպուբլիկայում, պատրաստում և ակտիվորեն մասնակցում էր այնպիսի ծրագրերի ու նախագծերի քննարկմանն ու հաստատմանը, որոնք վերաբերում էին Հայաստանի տնտեսությանը, արդյունաբերական և բժշկա-սանիտարական գործին: Բացի դրանից, բյուրոն կազմակերպում էր գիտահետազոտական հաստատություններ, էքսպերտ բյուրո, օրինակելի տնտեսություն, լաբորատորիա և այլն, օժանդակում և աջակցում էր հուշարձանների հավաքման ու պահպանման գործին, ուսումնասիրում այն փաստաթղթերը, որոնք վերաբերում էին Հայաստանի կուլտուրային և պատմությանը:

Կիրառական գիտությունների ընկերությունը մշակեց Մոսկվայի ցուցահանդեսում հայկական տաղավար կառուցելու պլանը, ստեղծվեց ցուցահանդեսային հատուկ հանձնաժողով, որի անդամներն էին ինժեներներ Ա. Ուրբեկյանը և Մ. Բունիաթյանը. առաջինը տվեց տաղավարի նախագիծը, երկրորդը նկարեց տաղավարը և գծեց կառուցման պլանը:

Կառուցման աշխատանքները, որտեղ մեծ էր հատկապես Ս. Տեր-Գաբրիելյանի դերը, սկսվեցին 1923 թվականի հուլիսի 23-ին և ավարտվեցին օգոստոսի 15-ին: Տաղավարի կառուցման աշխատանքներն սկսվեցին Հայկական ՍՍՌ կառավարության անմիջական օգնությամբ: Նրա կառուցման վրա ծախսվել է ավելի քան 100000 ռուբլի¹:

Հայկական տաղավարի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1923 թվականի սեպտեմբերի 9-ին: Տաղավարի միջոցով միլոնավոր մարդիկ ծանոթացան Սովետական Հայաստանի աշխատավորների նվաճումների հետ:

1923 թվականին Մոսկվայի տեխնիկական ինտելիգենցիայի մի խումբ նախաձեռնեց և հիմնեց հատուկ բաժնետիրական ընկերություն, որի սկզբնական դրամագումարը նախա-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 32, թ. 44:

տեսված էր 100000 ռուբլի՝ ռուսական ոսկով: Ընկերությունը պարտավորվում է կարճ ժամանակամիջոցում հայթայթել այդ գումարի մի մասը: Շինարարական աշխատանքներ կատարելու համար ընկերությունը Երևանում հիմնեց «Տեխնիկ-շինարար» գրասենյակը, որի միջոցով Հայաստանում մատչելի գներով կառուցվեցին բնակարաններ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն: Ընկերությունը մեծ օժանդակություն է ստացել ՀՍՍՌ կառավարությունից¹:

Ընկերության հիմնադրման նախաձեռնությունը պատկանում է Մոսկվայի հայազգի տեխնիկական ինտելիգենցիային:

Հայաստանի կուլտ-կրթական և շինարարական աշխատանքներին օգնելու համար ՀՕԿ-ի Մոսկվայի կոմիտեն կազմակերպեց մի շարք սեկցիաներ, որոնք աստիճանաբար ըսկըսեցին ընդարձակվել, ընդգրկելով մեծ թվով մասնագետներին: Սեկցիաները ունեին իրենց վարչությունները, որոնք սերտ կապեր հաստատեցին Հայկական ՍՍՌ համապատասխան կուլտ-կրթական և շինարարական կազմակերպությունների հետ:

ՀՕԿ-ի Մոսկվայի կոմիտեն եռանդուն աշխատանք կատարեց նաև որք երեխաներին օգնություն կազմակերպելու գործում, նա դիմեց Ռուսաստանի հայերին և խնդրեց օժանդակել Հայաստանում հավաքված հազարավոր որբ երեխաներին:

1925 թվականի ապրելի 25-ին Մոսկվայում Հայկական ՍՍՌ կուլտուրայի տան դահլիճում կազմակերպվեց երեկոհամերգ, որից հավաքված գումարը անմիջապես հատկացվեց անապատան երեխաներին օգնություն ցույց տալու ֆոնդին: Երեկոյին, բացի տոմսերի արժեքից, եղան նաև որոշ նվիրատրվություններ: Նախագահությունը, միաժամանակ, Մոսկվայում կազմակերպեց իրերի հավաքման կապանիա, որի համար տեղերն էին ուղարկվել համապատասխան կոշեր, այդ ուղղությամբ գովելի աշխատանք կատարեցին Զինաիդա Տեր-Գաբրիելյանը (Հայաստանի անապատան երեխաների բարեկամների ընկերության ներկայացուցիչ), Ա. Գ. Կալինինան, Շախունյանը, Պոպովան և ուրիշներ: Մոսկվայի կա-

նանց նախաձեռնությամբ ՀՕԿ-ի Մոսկվայի կոմիտեի որբերին օգնող ընկերությունը կարողացավ հավաքել և շտապ Հայաստան ուղարկել մեծ քանակությամբ նվիրատվություններ, հագուստեղեն, դեղորայք, գրենական պիտույքներ, դրոշմանիշեր: 1925 թվականի ապրիլին Մոսկվայի հայ կանանց միջոցով հավաքվեց և Մադկաձորում գտնվող որբ աղջիկներին ուղարկվեց 1750 ռուբլի:

Հայաստանի կուլտուրայի տունը Մոսկվայում հայկական կուլտուրայի կարևոր օջախներից էր, որի միջոցով մայրաքաղաքի հայերը շփվում էին Միության ժողովուրդների կուլտուրայի հետ, առաջին հերթին՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ: Այնտեղ հաճախակի կազմակերպում էին դասախոսություններ, զրույցներ և զանազան այլ միջոցառումներ: Մոսկվայի հայ բնակչության առաջ բազմաթիվ անգամ դասախոսություններ են կարդացել պրոֆեսորներ Ա. Մսերյանը և Ա. Արշարունին, Դե. Տեր-Սիմոնյանը, Ա. Քալանթարը, Ա. Քումանյանը, Մ. Սողոմոնյանը, Ա. Ներսիսյանը, Ն. Քարամյանը, Մարիա Զար-Մսերյանը, Մ. Մազմանյանը և շատ ուրիշներ:

Մոսկվայի կոմիտեն կուլտուրայի տանը կից կազմակերպեց մի շարք դասընթացներ, որոնք կարևոր նշանակություն ունեին հայ երիտասարդության մասնագիտական կրթության համար. դրանցից էին՝ բուժականների, բժշկական, իրավաբանական դասընթացները և սեկցիաները: Հատկապես գովելի աշխատանք կատարեց իրավաբանական սեկցիան, որը դեկավարում էր Ի. Բ. Կարախանը:

Իրավաբանական սեկցիան իր աշխատանքները ծավալեց երեք ուղղությամբ: Նախ, կազմակերպեց կոնսուլտացիաներ՝ բացառապես կոմիտեի անդամների համար: Երկրորդ՝ կապ հաստատեց Հայկական ՍՍՌ արդարադատության ժողովուրդների և գերագույն դատարանի հետ՝ աջակցելով նրանց օրենսգրական ակտերի և իրավաբանական բոլոր հարցերի լուծման գործում: Սեկցիայի աշխատանքներում ընդգրկված էին կոմիտեի բոլոր իրավաբան անդամները:

Կոմիտեին կից կազմակերպվել էր և հաջողությամբ էր կատարում իր խնդիրները բժշկական սեկցիան, բժշկական

¹ ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 320, թ. 56:

գիտությունների զոկտոր-պրոֆեսոր Տեր-Շմանովի (Շմանյան) ղեկավարությամբ: Սեկցիայի հիմնական խնդիրն էր միավորել Մոսկվա քաղաքի հայ բժիշկներին՝ Հայաստանի բնակչության առողջության մասին հոգալու համար:

Սեկցիան Հայկական ՍՍՌ աշխատավորության բժշկական օգնության համար կազմակերպեց մի քանի հատուկ «շրջիկ» ջոկատներ: Նրանց խնդիրն էր՝ պայքարել մալարիայի, մոծակների և մորեխի դեմ: Բացի այդ, կազմակերպեց բժշկական թանկարժեք գրականության հավաք-գնումներ և դրանք նվեր ուղարկեց Երևանի պետական համալսարանի գրադարանին:

Մոսկվայում և Ռուսաստանի այլ քաղաքներում սովորող բժիշկ ուսանողներին օգնելու համար սեկցիան կազմակերպեց աշխատանքի բյուրո, որն օգնում էր ՀՍՍՌ առժողովմատին՝ բժշկական թեքում ունեցող հայ ուսանողներինը Հայկական ՍՍՌ-ում աշխատանքի տեղավորելու համար:

Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեն իր գոյության համեմատաբար ոչ երկար տարիներում կատարեց բազմակողմանի աշխատանքներ: Կոմիտեի կազմում ակտիվորեն աշխատել և նրա գործունեությունը ղեկավարել են Կ. Միքայելյանը, Ա. Քալանթարյանը, Դր. Տեր-Սիմոնյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը և շատ ուրիշներ:



1925 թվականին Հայաստանի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը հիմնականում լուծեցին վերականգնուման շրջանի խնդիրները: Էկոնոմիկայի այս գլխավոր ճյուղերի գծով գերակշռող հանդիսացավ սոցիալիստական սեկտորը: Ամրապնդվում էին սոցիալիզմի իշխող դիրքերը ժողովրդական տնտեսության մեջ:

Հայաստանի բազմակողմանի զարգացման հինգ տարվա հանրագումարը տվեց ՀԿ(Բ)Պ IV համագումարը (1925 թ. նոյեմբեր): Համագումարը ամփոփեց նոր տնտեսական քաղաքականության 5 տարվա փայլուն արդյունքները և նշեց զարգացման նոր ուղիներ: Համագումարը հավանություն

տալով գյուղատնտեսության զարգացմանը զուգահեռ երկրի ինդուստրացման վերաբերյալ ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի և ՍՍՌԿ կառավարության քաղաքականությանը, սահմանեց ՀՍՍՌ-ի ինդուստրացման ուղիները:

Ժողովրդական տնտեսության վերականգնման վերջին տարում՝ 1925 թվականին, Ալավերդին երկրին տվեց ավելի քան 40 հազար փութ կարմիր պղինձ, իսկ Ղափանի «Կարմիր նոյեմբեր» գործարանը 1924—1925 տնտեսական տարում ձուլեց 30 հազար փութ կարմիր պղինձ:

Ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը 1924—1925 թթ. հասել էր նախապատերազմյանի 70 տոկոսին, իսկ խոշոր արդյունաբերությունը՝ 60 տոկոսին:

Հայաստանի էկոնոմիկայի և կուլտուրայի արագ վերելքի մասին մեծ հիացմունքով են արտահայտվել այդ տարիներին Հայաստան այցելած Վ. Կուլբիշևը, Ա. Միկոյանը, Գ. Զիչերինը. «...Այն անսովոր վերելքն ու էնտուզիազմը, որ դրսևորվում է ձեզ մոտ՝ Սովետական Հայաստանում,—ասաց Գ. Զիչերինը,— ինքնին ցույց է տալիս, թե որքան մեծ թափով է առաջ գնում սովետական իշխանությունը, որքան խորն են թափանցում նրա արմատները ժողովրդի մեջ...»¹:

Մ. Ի. Կալինինը հայ ժողովրդին հղած իր ջերմագին ողջունում գրում է.

«Հինգ տարի է, ինչ գոյություն ունի ազատ Հայաստանը. հինգ տարի է բաժան-բաժան եղած ուժերը հավաքվում են խորհրդային Միության դրոշի ներքո:

Ապրիր, աճիր ու բարգավաճիր, հայ ժողովուրդ, և բուժիր անցյալում քեզ հասցրած ծանր վերքերը...»²:

Հայ ժողովրդի ձեռք բերած տնտեսական-կուլտուրական նվաճումներում, անշուշտ, իրենց լուծման մտքրին նաև ՀՕԿ-երը:

¹ Տե՛ս Վ. Ներկարայան, «Հայաստանի կոմպարտիայի IV համագումարը», Հայպետհրատ, 1962, էջ 31:

² Տե՛ս «խորհրդային Հայաստան» օրաթերթ, 15 մարտի 1925 թ.:

4. ՀՕԿ-Ը ՈՐՊԵՍ ՇԱՂԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՄՐԱՄԻՆ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

«ՀՕԿ-ը, — գրում է Ս. Տեր-Գաբրիելյանը, — հանդիսանում է գաղութաճաչության մեջ խորհրդային Հայաստանի ամենա-
ջերմ բարեկամը և նրա տնտեսական, քաղաքական, կուլ-
տուրական վերելքի ու բարգավաճման մասին գրեթե առա-
ջին միակ տեղեկատու հասարակական կազմակերպություն-
նր: «ՀՕԿ»-երը եղել են խորհրդային Հայաստանի և գաղու-
թաճաչության շաղկապը»¹:

Իրոք, իր գոյության առաջին իսկ օրից Հայաստանի օգ-
նություն կոմիտեն գլխավոր վարչության միջոցով հանդես
եկավ որպես տեղեկատու և շաղկապող կազմակերպություն
գաղութաճաչ օջախների և Սովետական Հայաստանի միջև:
Այս առումով մեծ դեր խաղացին ՀՕԿ-ի գլխավոր վարչու-
թյան կողմից արտասահման ուղարկված պատվիրակու-
թյունները, որոնք հետապնդում էին հիմնականում մի նպա-
տակ՝ Հայաստանի մասին ճիշտ ինֆորմացիաներ հաղորդել
գաղութաճաչերին, ցույց տալ հայ ժողովրդի սոցիալական,
ազգային նվաճումները, հակահարված տալ դաշնակներին,
ՀՕԿ-երը մաքրել խորթ տարրերից:

ՀՕԿ-ի վարչության կողմից 1922—1937 թվականներին
արտասահման են գնացել 4 պատվիրակություն:

Ինչպես արդեն ասվել է, ՀՕԿ-ի առաջին պատվիրակու-

թյունը՝ Հ. Թումանյանի և Ե. Թադիանոսյանի ղեկավարու-
թյամբ, արտասահման մեկնեց 1921 թվականի վերջերին և
արդյունավետ աշխատանք կատարեց:

ՀՕԿ-ի երկրորդ պատվիրակությունը (1925—1926 թթ.)
գնաց Ֆրանսիա, այնուհետև անցավ Բելգիա, Գերմանիա,
ԱՄՆ: Պատվիրակության մեջ էին՝ Գ. Վարդանյանը, Կ. Մի-
քայելյանը և Ս. Կամսարականը: Երրորդը գնաց (1928—1929
թթ.) Ֆրանսիա, Ամերիկա (Գ. Վարդանյան, Ա. Մուսայել-
յան): Չորրորդ (1932—1933 թթ.)՝ Ֆրանսիա, Հունաստան
(Գ. Վարդանյանի ղեկավարությամբ): ՀՕԿ-ի հատուկ հանձ-
նարարություններով տարբեր ժամանակներում արտասահ-
ման են մեկնել Ա. Երզնկյանը, Գ. Շահվերդյանը, Դր. Տեր-
Սիմոնյանը, Ե. Չուբարը, Ս. Խանոյանը, Ս. Տեր-Գաբրիել-
յանը, Վ. Ալազանը, Մ. Մազմանյանը և ուրիշներ¹:

1924 թվականի վերջերին ՀՕԿ-ի վարչության նախագահ
Ա. Երզնկյանը մեկ ամսով լինում է Գերմանիայում, Ֆրան-
սիայում, Բելգիայում, Անգլիայում² և մոտիկից ծանոթանում
այնտեղի ՀՕԿ-երի աշխատանքներին: Նա մի շարք հասա-
րակական ժողովներում հանդես է գալիս դասախոսությու-
ններով ու զեկուցումներով՝ Հայաստանի սոցիալիստական
շինարարության և ՀՕԿ-ի արդյունավետ աշխատանքի մա-
սին: Ա. Երզնկյանի ուղևորությունը արտասահման դրական
երևույթ էր: Նա շատ տեղին սուր քննադատության ենթարկեց
արտասահմանյան բարեգործական միությունների ղեկա-
վարների աշխատանքի արատավոր կողմերը: Հատկա-
պես անարգանքի սյունին գամեց բարեգործական միության
այն ղեկավարներին, որոնք զբաղվում էին հայ որբերի գերե-
վաճառությամբ: Խոսքը այն 1400 որբերի մասին էր, որոն-
ցից շատերին, հատկապես աղքատներին, Ֆրանսիայից ուղար-
կել էին Կանադա և որպես ընծաներ տվել հարուստներին:

1925 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 1926 թվականի
դեկտեմբերի 1-ը (շուրջ 13 ամիս) արտասահմանում եղավ
ՀՕԿ-ի վարչության երկրորդ պատվիրակությունը, որի կազ-

¹ ՀՍՍՌ ՀՈՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 541, թ. 25:

¹ ՀՍՍՌ ՀՈՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 1, գ. 293, թ. 1:

² Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 9 հունվարի 1926 թ.:

մում էին գտնվում Գ. Վարդանյանը, Կ. Միքայելյանը և Ս. Կամսարականը: Հայաստանի օգնության կոմիտեի վարչության կողմից նրանց տրված մանդատում ասված է. «Պատվիրակության նպատակն է՝ 1) կանոնավորել Եվրոպայի և Ամերիկայի հայ գաղութներում գոյություն ունեցող ՀՕԿ-ի ճյուղերի գործերը. 2) կազմակերպել և ունենալ ՀՕԿ-ի նոր ճյուղեր. 3) միջոցներ հայթայթել Հայաստանի վերաշինության գործին նպաստելու համար. 4) զխավոր վարչության անունից զանազան պայմանագրեր կնքել գաղութահայ հասարակական, բարեգործական, հայրենակցական միությունների կամ այլ կազմակերպությունների և անհատների հետ. 5) կապ հաստատել բանկային հաստատության հետ՝ ՀՕԿ-ի ձեռնարկությունները վարկավորելու նպատակով. 6) ստանալ գույքային և դրամական զանազան նվիրատվություններ, կտակված գումարներ և այլն»¹:

Պատվիրակության անդամները եղան 60 քաղաքներում, կարդացին ավելի քան 120 դասախոսություն: Նրանք արտասահմանյան հայ հասարակությանը ծանոթացրին Սովետական Հայաստանում տիրող իրական վիճակին, բացատրեցին կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության էությունը, սովետական պետության արտաքին ու ներքին քաղաքականությունը:

Պատվիրակությունն ամենուրեք ջերմ ընդունելություն գտավ:

ՀՕԿ-ի պատվիրակությունը արդյունավետ աշխատանք կատարեց նաև Ամերիկայում, որտեղ ՀՕԿ-երը (28 ճյուղ) դեռևս լայն մասնակցություն չունեին Հայաստանում ծավալվող շինարարությանը, որովհետև թույլ էր նրանց նյութական բազան: ՀՕԿ-երը, բաղկացած լինելով աշխատավորական մասսաներից, դեռևս հարկ եղած եկամտի աղբյուրներ չունեին և հանգանակությունների գործը կարգավորված չէր: Այս նպատակով Լոս-Անջելոսում հրավիրվեց մի ժողով, ուր կատարվեց հանգանակություն, որի արդյունքը կազմեց 6500 դոլլար:

Լոս-Անջելոսի հայ գաղութը պարտավորվեց Հայաստանում կառուցել մի տուն՝ 25000 դոլլար արժողությամբ: Այդպիսի մի ժողով հրավիրվեց Ֆրեզնոյում, որտեղ ներկա էին 3000 հոգի: Այստեղ էլ ժողովականները խոստացան տուն կառուցել Հայաստանում՝ 10000 դոլլարի արժողությամբ: Նույնպիսի ժողովներ գումարվեցին Սան-Ֆրանցիսկոյում և այլ քաղաքներում²:

Նոյեմբերի 6-ի պատվիրակությունը 6 օրով գնում է Բեռլին: Բեռլինի հայ գաղութը մեծ չէր՝ 400—500 մարդ, իսկ այնտեղի ՀՕԿ-ի կազմը բաղկացած էր 8 հոգուց (ՀՕԿ-ի նախագահ՝ Սաբո Սահակյան): Այնուհետև պատվիրակությունը գնաց Բեռլին, որտեղ նույնպես ջերմ հանդիպումներ ունեցավ աշխատավորների հետ: Պատվիրակությունը 10 օր մնաց Բրյունսելում և բարեխաղաց այնտեղի ՀՕԿ-ի ճյուղի աշխատանքը:

Պատվիրակությունը դրական գործ կատարեց նաև Ֆրանսիայում: 1926 թվականի հոկտեմբերի 23-ին տեղի ունեցավ ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի անդրանիկ պատգամավորական ժողով, որին մասնակցում էր ՀՕԿ-ի վարչության պատվիրակ Գ. Վարդանյանը: Ողջունելով ժողովի պատգամավորներին, Գ. Վարդանյանն ասաց. «Կենտրոնական կոմիտեն շնորհավորում է ՀՕԿ-ի Ֆրանսիայի ճյուղի անդրանիկ համագումարը, ցանկանալով նրան հաջողություններ և բեղմնավոր աշխատանք»²:

Ֆրանսիայի ՀՕԿ-ն իր անդրանիկ համագումարի բացման պահին արդեն ուներ 32 մասնաճյուղ՝ 2200 անդամներով. նրա վարչությունը սկզբից ևեթ իր ուշադրությունը կենտրոնացնում է կազմակերպական աշխատանքների վրա, ամեն կերպ քաջալերելով այն շարժումները, որոնք ուղղված էին հօգուտ Սովետական Հայաստանի: Ինչքան էլ որ ՀՕԿ-երը թույլ էին, բայց նրանց հասարակական, կուլտուրական և բարոյական արժեքը մեծ էր: Ֆրանսիական մի շարք քաղաքներում (Լիոն, Լանսեյ, Մարսել) ՀՕԿ-երը վայելում էին մեծ հե-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 468, թ. 4:

² Նույն տեղը:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 398, թ. 3:

վինակություն: Նշված քաղաքներում գործում էին լսարան-
ընթերցարաններ և մարմնամարզական խմբակներ, որտեղ
կարգացվում էին զեկուցումներ՝ կապված Սովետական Հա-
յաստանի հետ: Ֆրանսահայ ՀՕԿ-երը հենց սկզբից իրենց
առջև խնդիր դրեցին կարգավորել հարաբերությունները զա-
նազան հասարակական մշակութային հիմնարկների հետ՝ ի
բարօրություն Սովետական Հայաստանի: ՀՕԿ-ը համաձայ-
նության եկավ ՀԲԸՄ (Հայ բարեգործական ընդհանուր միու-
թյան) և Փարիզի հայ տիկնանց միության հետ, նրանց հետ
միասին կազմակերպեց «Խորհրդային Հայաստան» ֆիլմի
ցուցադրումը:

Ֆրանսահայ ՀՕԿ-երի անդրանիկ համագործակցի կողմից
ընդունված որոշումներից մեկում ասված է. «Մեր ՀՕԿ-ի նը-
պատակներեն մեկն ալ տնտեսական, բարոյական և մշակու-
թային փոխադարձ կապ հաստատելն է երկրի ժողովրդի և
զաղութահայերի մեջ»¹:

1928 թվականի ամռանը ՀՕԿ-ի կենտրոնական վարչու-
թյան կողմից արտասահման ուղարկվեց մեկ ուրիշ պատվի-
րակություն հետևյալ կազմով՝ Գ. Վարդանյան և Ա. Մուսա-
յելյան: Պատվիրակությունն արտասահմանում մնաց մեկ
տարի, եղավ Եվրոպայի և Ամերիկայի մի շարք երկրներում:
Պատվիրակությունն իր հետ տարել էր «Խորհրդային Հայաս-
տանն այսօր» դոկումենտալ ֆիլմը, որտեղ պատկերված էին
Սովետական Հայաստանի էկոնոմիկայի ու կուլտուրայի վիթ-
խարի նվաճումները և ազատագրված հայ ժողովրդի ստեղծա-
գործական աշխատանքը:

1928 թվականի նոյեմբերի 29-ին հայ ժողովուրդը մեծ
շուքով տոնեց իր ազատագրման 8-րդ տարեդարձը: Այդ տոնը
մեծ հանդիսավորությամբ տոնեցին նաև արտասահմանի հայ
«զաղութները»: Սակայն արտասահմանում դեռ ոչ բոլորն էին
ճիշտ ըմբռնում սովետական իշխանության փրկարար դերը
հայ ժողովրդի համար: Դաշնակները պրոպագանդում էին, որ
այդ իշխանությունը «սովի, արյան և ազգամիջյան կոիվների
նոր շրջան բացեց հայ ժողովրդի համար»: Այդ կապակցու-

թյամբ ՀՕԿ-ը բաց թողեց կոշ՝ ուղղված գաղութահայ աշխա-
տավորներին: «Խորհրդային Հայաստանի անվերապահ բարե-
կամներ,— ասված է կոշում,— ձեզ համար Հայաստանի ան-
կախության հիմնման օրը 29-ը նոյեմբերն է: Այդ օրն է, որ
Հայաստանի մեջ հաստատվեց բանվորների և գյուղացիների
իշխանություն»:

1928 թվականի դեկտեմբերի 23-ին Փարիզում մեծ շուքով
նշվեց Սովետական Հայաստանի 8-րդ տարեդարձը: Ելույթ
ունեցող ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչության ան-
դամ Պ. Արզումանյանն ասաց. «Դաշնակցություն իր արկա-
ծախնդիր քաղաքականությամբ պատերազմ հայտարարեց
հարևան ժողովուրդների դեմ և «ծովից-ծով» հայ պատրանք-
ներով շլացած՝ երկիրը գցեց անել վիճակի մեջ մք»: Այնու-
հետև ձայն է խնդրում ժողովականներից մեկը և ասում. «Եր-
կար ատենե ի վեր դաշնակցական բարքերու մեջ կգտնվեի,
կարծելով, որ այն ժողովրդի զգացումներուն թարգմանն է,
բայց կտեսնեմ, որ հուսախաբ եղած եմ»: Հոետորը վերջում
խնդրում է, որ իրեն ընդունեն ՀՕԿ-ի մեջ²:

Մ. Քրիշչյանը, դաշնակցական նախկին հայտնի գործիչ,
«Երևան» թերթում գրել է. «Հետադարձ մի ակնարկ ձգելով
ութամյա Խորհրդային Հայաստանի վրա, խոնարհվում եմ որ-
պես երբեմնի գաղափարական հակառակորդ Խորհրդային
հայրենիքի կերտողների քաղաքական այն առողջ բախտի ա-
ռաջ, որոնք նոքա վերջին ժամին հաջողեցան Հայաստանը դը-
նել Խորհրդային զպրօցի փրկարար և կազդուրիչ հովանու
ներքո: Ցավում եմ, որ այդ բնազդն ու մտքի թռիչքը հայ ժո-
ղովրդի մեջ դեռ այն ժամանակ չհաղթեց, երբ դեռ հարյուր
հազարավոր նոր զոհ չէին առնված, Հայրենիքի թանկագին և
անկապտելի մասերը չէինք կորցրել: Թող գեթ այսուհետև ևս
շարունակեն անարգել կերպով հոն բարգավաճել ազգերի
եղբայրական համերաշխությունը, բանվորա-գյուղացիական
նորափոթիթ պետականությունը: Թեպետև իբրև գերմանա-
կան Չ ամսագրերի աշխատակից, ես այսուհետև պիտի շա-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 468, թ. 4:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 449, թ. 33:

² Նույն տեղը, ց. 1, գ. 164, թ. 8:

րունակեմ իմ համեստ ուժերը տրամադրել ոչ դյուրին պայմանների մեջ Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի մասին ճշմարտությունը տարածելուն, այնուամենայնիվ, խոր ամոթ և կսկիծ եմ գգում, որ դեռ առիթ չեմ ունեցել անմիջական տուրք բերել հայրենիքի աշխատավորության և նրա անխոնջ ղեկավարների հերոսական ջանքերին: Թող հավետ ծաղկի համաշխարհային աշխատավորների հայրենիք Խորհրդային Միությունը և անոր կրտսեր անդամ Խորհրդային Հայաստանը»¹:



Գաղութահայ աշխատավորության հայրենասիրության բարձրացման գործում մեծ դեր խաղացին ՀՕԿ-երի և սփյուռքահայ դեմոկրատական պարբերականները, թերթերը, ամսագրերը և մյուս տպագիր օրգանները: 1923 թվականի փետրվարին ՀՍՍՌ Կենտրոնականի որոշմամբ ՀՕԿ-ի գլխավոր վարչության կողմից հրատարակվեցին գեղարվեստական բացիկներ, պլակատներ, ալբոմներ, քարտեզներ: Առանձնապես մեծ էր ՀՕԿ-ի տպագիր օրգանների՝ «Հրավիրակ»-ի և «Լրաբեր»-ի դերը: «Հրավիրակ»-ը լայն ճանաչում գտավ արտասահմանյան հայության մեջ և այն սիրով ընթերցում էին բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում էին հայ ժողովրդի ներկայով ու ապագայով: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև ՀՕԿ-ի օրգան «Տեղեկատու» ամսագիրը, որը հրատարակվեց (1928 թվականին) սփյուռքահայության և ՀՕԿ-երի արտասահմանյան մասնաճյուղերի ցանկությամբ և ունեն 8 բաժին:

Ռուսաստանում բնակվող հայության մեջ լայն տարածում գտան և սիրով էին ընթերցվում ՀՕԿ-ի Մոսկվայի կոմիտեի պարբերականները և ամսագրերը («Вестник Московского комитета помощи Армении», «Возраждающая ся Армения»):

Թիֆլիսի ՀՕԿ-ի կողմից հրատարակվում էին «Օգնիր Հայաստանին» և «Հայրենաշեն» թերթերը:

Բազմաթիվ ամսագրեր, թերթեր և շաբաթաթերթեր էին լույս տեսնում նաև արտասահմանյան ՀՕԿ-երի կողմից: Գրանցից առավել կարևոր էին «Երևան»-ը (Փարիզ) և «Շինարար» հանդեսը (ՀՕԿ-ի Ամերիկայի կենտրոնական օրգան): 1933—1935 թվականներին Փարիզում լույս է տեսել «ՀՕԿ» ամսագիրը՝ որպես ՀՕԿ-ի գաղութահայ ճյուղերի օրգան: Եզրիպտոսում լույս էր տեսնում «ՀՕԿ» ամսագիրը: Արտասահմանում լույս էին տեսնում նաև մի շարք կիրակնօրյա ու տոնական թերթեր:

ՀՕԿ-երի ամսագրերի և թերթերի նկատմամբ եղան բազմաթիվ ռեպրեսիաներ ու մատնություններ, և սակայն դրանք լույս էին տեսնում ու օրեցօր նվաճում նոր ընթերցողներ:

1927 թվականի հունվարի 21-ին ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահության որոշմամբ «Հրավիրակ»-ը վերահրատարակվեց «Երկրի ձայն» անվան տակ: Այդ կապակցությամբ ՀՕԿ-ի նախագահությունը ՀՕԿ-ի վարչության անդամ Ժ. Միրզախանյանին հանձնարարեց կազմակերպել խմբագրություն և ղեկավարել թերթը¹:

¹ «Երևան», 9 դեկտեմբերի 1928 թ., Փարիզ:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 149, թ. 17:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳՈՐԾՈՒՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԳԱՂԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գաղութահայ օջախներից Սովետական Հայաստան ներգաղթի կազմակերպման գործում 204-ի գլխավոր վարչության աշխատանքը հատկապես ուժեղացավ 1923—1931 թվականներին: Այդ ժամանակաշրջանում Սովետական Հայաստանի էկոնոմիկան և կուլտուրան արդեն հսկայական առաջընթաց էին ապրել, զարգանում էին մեծ տեմպերով: Արդեն անցյալի գիրկն էր անցել նախկին հետամնացությունը. ռեսպուբլիկայում անշեղորեն զարգանում էր ծանր արդյունաբերությունը, արագորեն վերափոխվում էր երբեմնի հետամնաց գյուղը:

Հայաստանի էկոնոմիկան համընթաց կերպով առաջ էր գնում ՄՍՈՄ եղբայրական համերաշխ ընտանիքում միավորված մյուս աղքերի ու ժողովուրդների էկոնոմիկայի հետ: Ժողովրդի ձեռք բերած աշխատանքային նվաճումները մեծապես ոգևորում էին սահմանից շատ հեռու ապրող եղբայրակից հայ աշխատավորներին:

Սովետական Հայաստանի ընդհանուր վերելքը է՛լ ավելի է բարձրացնում 204-ի հեղինակությունը գաղութահայ օջախներում:

Պատմական այս կարևոր ժամանակամիջոցում որոշ չափով փոխվել էր 204-ի գործունեությունը: Իր գործունեության երկրորդ էտապում 204-ն սկսեց գերազանցապես զբաղվել ներգաղթի հարցերով, օգնեց արտասահմանից Հայաստան վերադարձող հայ աշխատավորներին, կազմակերպեց և օժանդակեց նրանց ճանապարհորդությանը: Այս շրջանում 204-ի հիմնական խնդիրներից մեկն էլ Սովետական Հայաստանի

հետ գաղութահայ աշխատավորների կապերի ընդարձակման աշխատանքն էր:

Ներգաղթը կազմակերպված բնույթ ստացավ 1923 թվականին, հատկապես Ջենովայի կոնֆերանսից հետո, երբ սովետական կառավարության պատվիրակությունը ի լուր ամբողջ աշխարհի հայտնեց, որ Սովետական Հայաստանը կընդունի հայրենադարձությունը իր հողի վրա:

Սովետական Հայաստանի կառավարությունը սիյուռքահայության համար ստեղծեց բոլոր պայմանները՝ վերադառնալու մայր հայրենիք:

Ժողովրդական տնտեսության հաջող վերականգնումն ու զարգացումը ի սրտե ուրախացնում էին արտասահմանյան հայ աշխատավորներին: Տասնյակ հարյուրավոր հայեր դիմում են 204-ին և խնդրում միջնորդել սովետական կառավարության առաջ՝ հայրենադարձություն կազմակերպելու համար:

204-ի գլխավոր վարչությունն իր արտասահմանյան ճյուղերի կենտրոնական վարչություններին ուղղած շրջաբերականում, 1928 թվականի օգոստոսի 27-ին, գրում էր. «Ներգաղթի խնդիրը պետական կարևոր նշանակություն ունեցող խնդիր է, որին պետք է օգնեն 204-երը: Խորհրդային Հայաստանի հայտնի և անհայտ թշնամիները փորձում են ներգաղթի հարցը ծառայեցնել արտասահմանյան հայ աշխատավորությանը մոլորեցնելու, խորհրդային իշխանությանը զրպարտելու, իրենց համար քաղաքական կապիտալ շահելու համար: Մեր մասնաճյուղերը և անհատ անդամները պիտի ամենաաշխատանք թափեն, որպեսզի արտասահմանյան հայ աշխատավորները զոհ չերթան Խորհրդային Հայաստանի թշնամիների պրովոկացիաներին»¹:

204-ի արտասահմանյան մասնաճյուղերում ոմանք կարծում էին, թե 204-ի անդամ լինելն իրենց իրավունք է տալիս հատուկ արտոնություններ վայելելու և ուղած ժամանակ մեկնելու Սովետական Հայաստան:

Արդեն ասվեց, որ Հայաստանի տնտեսական վիճակն այն

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿՍ, ֆ. 178, ց. 1, գ. 171, թ. 13:

ժամանակ այնպիսին չէր, որ հնարավոր լիներ ավելի մեծ մասշտաբով ներգաղթ կատարել, ուստի ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը իր արտասահմանյան կոմիտեներին հրահանգեց նախապատրաստական լայն աշխատանք տանել առաջիկա ներգաղթի համար. և ՀՕԿ-երն սկսում են հայրենադարձության ենթակա քաղաքացիների հաշվառումը, ցուցակագրում էին առաջին հերթին աշխատավոր խավերին:

Սովետական Հայաստանի կառավարությունը հայրենադարձություն կազմակերպելու գործում հաշվի էր առնում ռեսպուբլիկայի ռեալ կարողություններն ու հնարավորությունները: ՀԿՊ IV համագումարում այդ կապակցությամբ ընդունված որոշման մեջ ասված է. «...երկրի տնտեսական կարիքների և զարգացման հեռանկարների հետ ն զրա համեմատ՝ պետական խիստ պլանաչափություն մտցնել զաղթականության ներառման ու տեղափոխման գործի մեջ»¹:

Գաշնակներն ամեն կերպ աշխատում էին ձախողել ներգաղթը: Նրանք նորից փորձեցին «հայկական հարցի» լուծումը կապել արևմտաեվրոպական պետությունների հետ, սակայն այդ փորձերը արդյունք չուվեցին:

Կային շատ խնդիրներ, որոնք այդ ժամանակ հանդիսանում էին զաղթահալուստյան համար հրատապ և հիմնական: Դրանք էին՝ գաղթականների և որբերի հարցը: Գաղութահալուստյան միակ հույսը սովետական կառավարությունն էր: Գ. Չիչերինը կոզանի կոնֆերանսում մտցրեց այնպիսի առաջարկություն, որը բխում էր ամբողջ հայ ժողովրդի և սփյուռքահալուստյան շահերից: Նա առաջարկեց կազմակերպել ներգաղթ և դժբախտության գիրկը նետված հայ աշխատավորությանը տեղափոխել Սովետական Միություն: Ներգաղթը առաջին հերթին պետք է լիներ Թուրքիայից և Հունաստանից:

Խնդիրն այն էր, որ ՀՕԿ-երը կարողանային տնտեսական օժանդակություն հասցնել ներգաղթի ենթակա բնակչությանը, մտածելին նրանց պարենայի դրության մասին: Մի խոսքով, ՀՕԿ-երի առջև խնդիր դրվեց ռեալիզացիայի ենթարկել գաղութահալուստյան օջախների ունեցվածքը՝ որբերին կերակրելու և գաղթականներին տեղավորելու համար:

Սովետական կառավարության ջանքերով և ՀՕԿ-ի ու առաջադիմական այլ կազմակերպությունների օժանդակությամբ իրականացվեց զգալի թվով սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը:

1922—1927 թվականներին արտասահմանից Հայաստան եկավ 18565 մարդ, որից 1922 թվականին՝ 9192, 1923 թվականին՝ 932, 1924 թվականին՝ 2645, 1925 թվականին՝ 4174 մարդ և այլն¹: Մինչև 1931 թվականը Հայաստան ներգաղթածների թիվը հասնում էր ավելի քան 20 հազարի: 1938 թվականին Սիրիայից, Ֆրանսիայից, Բալկանյան երկրներից Հայկական ՍՍԹ հայրենադարձվեցին 40000 մարդ:

Հայրենադարձները տեղավորվեցին Ն. Սեբաստիայում, Ն. Խարբերդում, Արաբկիրում, Ն. Մալաթիայում, Ն. Արմավիրում, Վեդիի շրջանում, Անիպեմզայում, Դամբալովյան սովխոզում, Իջևանում, Ստեփանավանում: Մեծ թվով հայրենադարձներ տեղավորվեցին Երևանում (իր արվարձաններով), Լենինականում, Կիրովականում, Գիլիջանում և այլ քաղաքներում ու շրջաններում²:

Ներգաղթը լայն թափ ստացավ ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թվականի օգոստոսի 10-ի որոշումից հետո, որտեղ ասված է. «Չնայած բուրժուական կուսակցությունների դավերին՝ արտասահմանում, և դասակարգային թշնամու համառ դիմադրությանը բանվորա-գյուղացիական կառավարության սոցիալիստական ձեռնարկումներին՝ պետության ներսում, երկրի սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք են բերված խոշոր նվաճումներ: Երկրում վերացվել է գործազրկությունը, ինչպես ողջ Խորհրդային Միության մեջ, այնպես էլ Հայաստանում նոր կադրերի ստեղծումը հրամայական անհրաժեշտություն է դարձել:

Նկատի ունենալով վերոհիշյալը, նաև Խորհրդային Միության սահմաններից դուրս ապրող հայ գաղթական աշխատավոր մասսաների ծանր կացությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ իմպերիալիստական երկրներում նրանք տա-

¹ «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Ժողովածու, Երևան, 1926:

² ՀՍՍՌ ՀՈՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 39, թ. 47—48:

¹ ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 1, թ. 339, ց. 5:

ուսարում են գործազրկութիւնից և ենթարկւում անլուր շահագործման, մինչդեռ ԽՍՀՄ-ում բանվորական կադրեր ստեղծելու մեծ պահանջ կա՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Կենտրոնական և Ժողովրդային Երրորդ են՝

1) Արտասահմանի հայ աշխատավորների համար արտոնել նոր, մասսայական ներգաղթ Հայաստանի ՍԽՀ սահմաններում:

2) Այդ նպատակով ՀՍԽՀ Ժողովրդային աուրներ կազմակերպել հատուկ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Ժողովրդային նախագահի տեղակալ Ա. Երզնկյան, անդամներ՝ Ա. Երեմյան (Ֆինժողկոմ), Ա. Գալստյան (հող-ժողկոմ), Վ. Խաչիկոզյան (աշխժողկոմ), Ա. Բալյան (պետքաղվարչութեան նախագահ), Գ. Շահվերդյան (արտաքին առևտրի ժողկոմի Հայաստանի լիազոր), Լ. Ղազարյան (մասակարարման ժողկոմ) և ՀՕԿ-ի նախագահ՝ Ս. Խանոյան:

ՀՍԽՀ Ժողովրդային կից ստեղծվեց ներգաղթի կոմիտե, որը ներգաղթ կազմակերպեց Թուրքիայից, Պարսկաստանից, Եգիպտոսից և եվրոպական մի շարք երկրներից:

1921—1940 թվականներին Սովետական Հայաստան վերադարձան ավելի քան 75 հազար սփյուռքահայեր: Հայրենական մեծ պատերազմից հետո: Այդ կարևոր գործը շարունակվում է առ այսօր և դրան մեծ նշանակություն են տալիս կոմունիստական պարտիան ու սովետական կառավարությունը:

6. ՆՈՐ ԱՎԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԳՐՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀՕԿ-Ի, ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՎԵՐԱՇԻՆԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՄ

Սովետական կառավարությունը հսկայական գումարներ ներդրեց հայրենադարձ հայերի համար ավաններ հիմնադրելու գործում, որոշ օգնություն ու աջակցություն ստանալով ՀՕԿ-ից և հայրենակցական միություններից:

Սովետական Հայաստանի տերիտորիայում նոր ավանների հիմնադրումը հայրենասիրական շնորհակալ գործ էր, որը լայն արձագանք գտավ գաղութահայ օջախներում: Սակայն գաղութահայ օջախների ռեակցիոն տարրերը թշնամաբար վերաբերվեցին ՀՕԿ-ի և հայրենակցականների նախաձեռնութեանը, դաշնակիները ակտիվ պայքար ծավալեցին ՀՕԿ-երի վարչությունների դեմ, սակայն դրական արդյունքի չհասան: 1925 թվականին Հայկական ՍՍՌ կառավարության հասցեով արտասահմանի հայրենակցական և վերաշինաց միություններից ստացվում էին բազմաթիվ նամակներ, որոնցով խրնդրում էին թուլատրել Հայաստանի տերիտորիայում պատերազմների ժամանակ ավերված գյուղերի, քաղաքների, ավանների անուսով կառուցել նոր բնակավայրեր և դրանք կոչել իրենց նախկին անուններով:

Հայաստանում նոր բնակավայրեր կառուցելու համար գաղութահայերի ծավալած շարժման սկիզբը համընկնում է Հայաստանի սովետականացման 5-ամյակի տոնակատարութեան հետ: Եվրոպայի, ԱՄՆ-ի, Ասիայի հայաբնակ կենտրոններում գործող ՀՕԿ-երի միջոցով հայրենակցական և վերաշինաց միությունները հայտնեցին իրենց պատրաստակա-

մովթյունը՝ օժանդակել Հայաստանի կառավարութեան ձեռնարկումներին:

Սովետական Հայաստանի կառավարութունը հարգեց հայրենակցականների և վերաշինացիների առաջարկութունը և հնարավորութուն ստեղծեց, որպեսզի նրանք մասնակցեն ռեսպուբլիկայում հիմնադրվող նոր ավանների կառուցողական աշխատանքներին: Առաջին խոշոր կառուցումներից էր Նոր Արաբկիր ավանի հիմնադրումը Ամերիկայի «Արաբկիր-ցիների հայրենակցական միութեան» կողմից: Ավանի հիմնադրումը սկսվեց 1925 թվականի նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական իշխանութեան հաստատման 5-րդ տարեդարձի օրը: Այդ տարեդարձին արտասահմանից բազմաթիվ հյուրեր էին եկել Հայաստան: Նրանցից շատերը մասնակցեցին ավանի հիմնադրման արարողությանը: Արաբկիրցիների հայրենակցական միութեան ներկայացուցիչը և Մ. Սարյանը դրեցին ավանի առաջին տան շենքի առաջին քարերը: Ողջույնի խոսքերով հանդես եկան Ա. Կարինյանը, Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), Ս. Համբարձումյանը, Ա. Կոստանյանը և ուրիշներ: Հյուրեր էին եկել նաև Վրաստանից ու Ադրբեջանից: Ավանի հիմնադրման արարողությանը ներկա էին Երևանի պարտիական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Սովետական իշխանութեան ամենօրյա ուշադրութեան շընորհիվ Արաբկիր ավանը կարճ ժամանակամիջոցում աճեց և դարձավ Երևանի կուլտուրական, տնտեսական կարևոր արվարձաններից մեկը: Հայրենադարձների համար կառուցվեց Նոր Եվդոկիան, որը հիմնադրվեց 1925 թվականին Երևանից 35 կիլոմետր հեռավորության վրա, էջմիածնի գավառի Ղուրդուղուլիի շրջանում: Գյուղի հիմնադիրները եղան Կ. Պուլսից եկած գաղթականների 46 ընտանիք:

1926—1935 թվականներին հիմնադրվեցին Նոր Մալաթիան, Նոր Սեբաստիան, Նոր Կեսարիան, Նոր Տիգրանակերտը, Նոր Թումարզան, Նոր Խարբերզը, Նոր Բուլթանիան, Նոր Կյուրինը, Նուբարաշենը (Սովետաշեն) և այլ ավաններ ու գյուղեր:

Նոր ավանների կառուցումն ու հետագա զարգացումը պա-

հանջում էին հսկայական գումարներ: Սովետական կառավարութունը այդ նպատակով հատկացնում է համապատասխան միջոցներ, հոգալով ավանների բնակչության բազմակողմանի պահանջները: Պարտիայի և կառավարութեան ջերմ հոգատարութեան շնորհիվ նոր ավանները դառնում են ծաղկուն բնակավայրեր:

Այսպես, օրիակ, 1935 թվականին Սովետաշենում կառուցվում է 33 տուն, 1936 թվականին՝ 52: Ավանի բնակչության նյութական ու կուլտուրական բարեկեցութունը ապահովելու համար կազմակերպվում են մի շարք արտելներ: 1935—1936 թվականներին ավանում արդեն կային գորգի արհեստանոց, կոշիկարանոց և դերձակատուն:

Ավանում անասնապահութունը և թռչնաբուծությունը զարգացնելու համար ՀՍՍՌ հողօրկումատի օգնությամբ 1935 թվականին հիմնադրվեց մեկ ինկուբատոր՝ 20000 ձվի տարողությամբ:

Խոշոր ուշադրութուն էր դարձվում բնակչության բնակարանային պայմանների բարելավմանը: 1936—1937 թրվականներին կառավարութեան ծախսերով, հայրենակցական միությունների օժանդակությամբ կառուցվում են մի շարք նոր բարեկարգ տներ: Շահագործման են հանձնվում ավանային սովետի շենքը, դպրոցը, բաղնիքը, հիվանդանոցը, մանկապարտեզը, մանկամսուրը, թատրոնը, կինոն, ակումբը, որոնց համար ծախսվում է 3260000 ռուբլի¹:

1937—1938 թվականներին կառուցվում է Բաշգյառնի—Սովետաշեն ջրմուղը, Երևան-Սովետաշեն ճանապարհը՝ 9 կիլոմետր երկարությամբ: Խոշոր աշխատանք էր էլեկտրահաղորդման գծերի անցկացումը: Սովետական և պարտիական կազմակերպությունների լուրջ ուշադրութեան շնորհիվ ավանում շուտով կարգավորվում է առևտուրը:

Սովետական Հայաստանի կառավարութեան և ՀՕԿ-ի միջոցով, մինչև 1937 թվականը, հայրենադարձ ավաններում շահագործման հանձնվեցին բազմաթիվ բնակելի տներ և արդյունաբերական ու կուլտուրական կառույցներ: Նոր ավան-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 580, թ. 91:

ներում կառուցվող բնակելի շենքերի համար 204-ը հատկացնում է 2892696 ուրբ. 30 կոպեկ: Հայաստանի կառավարությանը Հայաստանում նոր ավաններ կառուցելու հայրենասիրական առաջարկություններ են անում Շապին-Գարահիսարի վերաշինաց միությունը, Կեմերիկի վերաշինաց հայրենակցական միությունը, Զեյթունի վերաշինաց միությունը (Հալեպ), Վասպուրականի հայրենակցական միությունը (Մարսել), Թոքատի հայ կրթասիրաց միությունը (Նյու-Յորք), Սեւյոզի վերաշինաց հայրենակցական միությունը (Ֆրանսիա), Եողզատի վերաշինաց միությունը (Ֆիլադելֆիա), Քիլիսի վերաշինաց միության Հալեպի մասնաճյուղը, Սեվրի-Հիսարի հայրենակցական վերաշինաց միությունը, Մարսելի Բարձր Հայք վերաշինաց միությունը, Փարիզի Բուլանիայի հայրենակցական միությունը, Խոյլա-Թլկատինի վերաշինաց միությունը և այլն:

1934 թվականի հուլիսին Ամերիկայի բալուցիները (5 միություններ) ի մի գալով կազմում են Համաբալուի վերաշինաց միությունը, նպատակ ունենալով Բալու անունով բնակավայր կառուցել Սովետական Հայաստանում:

Հայաստանում նոր Տարոն ավանի կառուցման համար մեծ է կրոնի Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միության դերը: 1935 թվականի փետրվարին միության վարչությունը հատուկ կոչով դիմեց Ֆրանսիայի բոլոր հայրենակցական միություններին, խնդրելով գործոն մասնակցություն ունենալ Հայաստանում հիմնադրվող նոր Տարոն ավանի կառուցման աշխատանքներին: Ավանի կառուցման աշխատանքների համար կազմված էր նոր Տարոն ավանի շինարարական հանձնաժողով, որի նախագահն էր Մ. Սաֆարյանը, քարտուղարը՝ Սողոմոն Տարոնցին¹: Հանձնաժողովը հատուկ կոչով դիմեց կրոնի Տարոն-Տուրուբերանի և Ամերիկայի Տարոն-Տուրուբերանի հայրենակցական միություններին և խնդրեց բարոյական ու նյութական օգնություն ցույց տալ նոր Տարոնի կառուցմանը:

Արտասահմանյան 204-երի, վերաշինացների և հայրենակցականների կյանքում մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի օգնության կոմիտեի Ամերիկայի շրջանի 2-րդ համագումարը, որը գումարվեց 1927 թվականի մայիսի 29—30-ը՝ Բոստոնում:

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին Ամերիկայի 204-ի 50 մասնաճյուղերից 42 պատգամավորներ: Համագումարի հիմնական խնդիրն էր՝ ամրապնդել կապը 204-ի գլխավոր վարչության հետ, նյութական և բարոյական տեսակետից ակտիվ մասնակցություն ունենալ հայրենադարձների համար ավաններ կառուցելուն, օգնել գաղթականներին:

ՀՄՍԹ Ժողկոմսովետի նախագահ Ս. Համբարձումյանը համագումարին հղած իր ողջունում գրել է. «Ամերիկահայ 204-երի ակտիվ աշխատանքն ու անկեղծ վերաբերմունքը դեպի Խորհրդային Հայաստանի շինարար աշխատանքները իրավունք են տալիս ինձ հուսալու, որ կարճ ժամանակի ընթացքում ամերիկահայ 204-երը, ավելի ու ավելի խտացնելով իրենց շարքերը հազարավոր բանվորներով, պիտի դառնան ոչ միայն տնտեսական մի համեստ ջոկատ, այլև բարոյական ու կազմակերպական շաղկապ Խորհրդային հայրենիքի և գաղութահայ ժողովրդական լայն մասսաների միջև»¹:

Համագումարում զեկուցում տրվեց «Ներգաղթի հարցի վերաբերյալ» և նշվեց 204-երի խնդիրները այդ կարևոր հարցում:

Սովետական կառավարության մարդասիրական վերաբերմունքի շնորհիվ պայմանավորվածություն կար Սերբիայի, Բուլղարիայի և Հունաստանի կառավարությունների հետ՝ Հայաստան նոր ներգաղթ կազմակերպելու մասին: Համագումարը որոշեց հնարավոր ամեն բանով օժանդակել ներգաղթին:

Առաջինից մինչև իր 2-րդ համագումարը 204-ի ամերիկյան շրջանը ամրապնդվել էր կազմակերպչական տեսակե-

¹ 204-ի շինարարական հանձնաժողովներում աշխատել են Վ. Նորենցը, Կ. Դեմիրյանը, Օ. Աբրահամյանը, Կ. Խորյանը, Հ. Ժամկոչյանը և շատ ուրիշներ:

¹ ՀՄՍԹ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 413, թ. 1—7:

տից: Այդ ժամանակամիջոցում աճել էին մասնաճյուղերը, իսկ անդամների թիվը հասնում էր 1800-ի:

204-ի Ամերիկայի շրջանի կոմիտեն նյութական-գրամական օգնություն կազմակերպեց 204-ի գլխավոր վարչությունը: Կոմիտեն իր հանգանակիչ մարմնի միջոցով Հայաստան՝ Լենինականի երկրաշարժից տուժածներին ուղարկեց 42 հազար դոլար¹:

Լենինականի երկրաշարժից տուժածներին որոշ օգնություն հասցրեց Լոս-Անջելոսի մասնաճյուղի վարչությունը: 1928 թվականին Լոս-Անջելոսում ապրում էին շուրջ 3000 հայեր, որոնք հավաքում են 5000 դոլար և ուղարկում 204-ին: Հենց այդ ժամանակ էլ 204-ի գլխավոր վարչության անունով ԱՄՆ-ից, հատկապես Կալիֆորնիայից, դիմումներ են ստացվում ներգաղթի համար:

1928 թվականի մայիսին 204-ի գլխավոր վարչությունը դիմում է ՀՍՍՌ ժողկոմսովետին և թուլտվություն խնդրում 600 մարդ Ամերիկայից Հայաստան ներգաղթելու²: Այդ կապակցությամբ կամպանիա է սկսվում աշխատավորների միջև: 1928 թվականի սեպտեմբերի վերջերին Հյուսիսային Ամերիկայի 204-ից ստացվում է 8500 դոլար՝ հայրենադարձների համար տներ կառուցելու նպատակով³: 204-ի գլխավոր վարչության միջոցով Մորիկ գյուղի ուսումնասիրաց ընկերությունը Հայաստանի պետական համալսարանին ուղարկեց 100 դոլար⁴, որը, նվիրատուների ցանկության համաձայն, հատկացվեց ուսանողությանը որպես գրական մրցանակ: Նույն ժամանակ Հյուսիսային Ամերիկայի 204-ի կենտրոնական վարչությունը ՀԱՄՆ-ին, որպես նվեր, ուղարկեց մի ավտոմեքենա, «Զինգեր» սիստեմի կարի 8 մեքենա և լուսանկարչական ապարատներ, ուղարկեց նաև 1500 դոլար, որը հատկացվում է նորակառույց ավանների կուլտուրթական գործին⁵:

204-ի Կենտրոնական վարչությունը բանակցում է Հայաստանի կինոյի վարչության հետ՝ Ամերիկայի 204-ի մասնաճյուղերի համար ավելի նպաստավոր պայմաններով ըստանալու 2 կինոնկար՝ «Նամուս»ը և «Զար ոգին»:

Սփյուռքահայությունը մեծ ուշադրությամբ էր հետևում Սովետական Հայաստանի նվաճումներին: Այդ էր պատճառը, որ 204-երից պահանջում էր ոչ միայն կինոֆիլմեր Հայաստանի նվաճումների մասին, այլև պլակատներ, նկարներ, էքսպոնատներ, քարտեզներ և զանազան տեսակի գրականություն:

204-ի գլխավոր վարչությունը մեծ աշխատանք կատարեց Եվրոպայում 204-ի երկրորդ խոշոր կենտրոն ստեղծելու ուղղությամբ: 204-ի վարչությունը իր եվրոպական կոմիտեներին հղած կոշում 1928 թվականի մարտին գրում էր. «...Մեր կարծիքով, Փարիզից հետո Եվրոպայում պետք է ունենալ 204-ի երկրորդ կենտրոնը՝ կամ Գերմանիայում, կամ Վիեննայում»:

* * *

204-ի վարչությունը մեծ աշխատանք է կատարում նորակառույց ավանների կուլտուրական շինարարության ուղղությամբ:

1934 թվականի մայիսի վերջերին 204-ի գլխավոր վարչության նախաձեռնությամբ ժողովներ են հրավիրվում Նոր Սեբաստիայի, Նոր Թումարզայի, Նոր Մալաթիայի և Նոր Տիգրանակերտի միությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ ժողովներում քննարկվում են տնտեսական ու կուլտուրական կյանքին վերաբերող մի շարք հարցեր: Ժողովը Գ. Վարդանյանի առաջարկությամբ որոշեց 204-ի գլխավոր վարչությանը կից ստեղծել հայրենակցական միությունների մշտական բյուրո, որը պետք է պարբերական զեկուցումներով միությունների աշխատանքների մասին իրավել դարձներ միմյաց և 204-ի գլխավոր վարչությանը, միությունների շինարարական կարիքների համար մշակեր միասնական միջոցառումներ:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 453, թ. 224:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 413, թ. 1—7:

² Նույն տեղը, գ. 453, թ. 75:

³ Նույն տեղը, թ. 25:

⁴ Նույն տեղը, թ. 140:

⁵ Նույն տեղը, թ. 109:

204-ի նախաձեռնութեամբ ստեղծվեցին և դրական աշխատանք կատարեցին Նոր Սեբաստիայի, Նոր Թոմարզայի, Նոր Կեսարիայի, Նոր Տիգրանակերտի և Նոր Մալաթիայի շինարարական հանձնաժողովները:

1931—1932 թթ. գաղութահայ օջախներում լայն շարժում սկսվեց արտելներ կազմակերպելու ուղղութեամբ: Արտելների նշանակութունը մեծ էր ոչ միայն նյութական, այլև բարոյա-քաղաքական տեսակետից: Արտելների կազմակերպման համար սկսված շարժումը լայն տարածում ստացավ նախ՝ ԱՄՆ-ում, ապա՝ Ֆրանսիայում:

Գաղութահայության մեջ արտելներ կազմակերպելու համար սկսած շարժմանը մեծ խթան հանդիսացավ Հայաստանից եվրոպա և ԱՄՆ գնացած պատվիրակությունը Գ. Վարդանյանի գլխավորությամբ¹:

Այդ ժամանակ 204-ի արտասահմանյան մասնաճյուղերը կարոտ էին ճիշտ ցուցումների ու ղեկավարութեան: Այդ ուղղութեամբ կարևոր քայլ էր 204-ի Հարավ-ամերիկյան 2-րդ համագումարը (Բուենոս-Այրես, 1928 թ.), որը կոչ արեց կազմակերպել հասարակական արտելներ և օգնել Հայաստանի շինարարությանը: Նորաստեղծ արտելները դիմեցին գործնական քայլերի: Այսպես, օրինակ, Նոր Նարբերդի կառուցման համար Ամերիկայից ուղարկվեց 26380 դոլլար, Նոր Արարիկիի համար (1924—1928 թթ.)՝ 86134 դոլլար, Նոր Կեսարիայի համար (1936 թ.)՝ 36000 դոլլար: Ստացվեցին նաև մարզատար ու բեռնատար ավտոմեքենաներ, գրամեքենաներ, միկրոսկոպներ, տրակտորներ և այլն:

¹ 1932 թ. հունիսի 22-ին 204-ի ընդհանուր ժողովը Գ. Վարդանյանին նշանակեց 204-ի գլխավոր վարչության նախագահ, ժողովը 204-ի նախկին նախագահ Ս. Նանոյանին ազատեց պաշտոնից՝ հիվանդության պատճառով: Գ. Վարդանյանի բացակայության ժամանակ 204-ի նախագահի պարտականությունը ժամանակավորապես դրվեց Գ. Տեր-Սիմոնյանի վրա: 1935 թ. նոյեմբերի 26-ից 204-ի նախագահ նշանակվեց Ա. Նսալյանը, պատասխանատու քարտուղար՝ Վ. Տարախչյանը: 204-ի վերջին նախագահն էր Ա. Մանուչարյանը: 204-ի վարչության փոխնախագահի և պատասխանատու քարտուղարի պաշտոններում աշխատել են Տիգրան-Ջավենը, Սնար Սնարյանը, Ժիրայր Միրզախանյանը և Գ. Շահվերդյանը (կարճ ժամանակով նաև 204-ի նախագահ):

Հաղթի հայրենակցական միությունից (Ֆրանսիա) Նոր Սեբաստիայի Հաղթ գյուղում կառուցված կուլտուրայի տան համար ստացվեց 2000 դոլլար¹:

1923 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 1928 թվի ապրիլի 1-ը 204-ը իր մասնաճյուղերից ստացել է (իրերով և ապրանքներով) 430336 դոլլարի 23 կոպեկ²:

204-ի գլխավոր վարչությունը մշտական հոգատարություն էր ցուցաբերում ամրապնդելու համար բոլոր կոմիտեների, բարեգործականների, հայրենակցականների, վերաշինացիների և արտելների միջև եղած կապերը:

1931 թվականի հուլիսի 4—5 Բոստոնում տեղի ունեցավ Հայաստանի օգնության կոմիտեի ամերիկյան շրջանի 5-րդ համագումարը, որը լսեց ու քննարկեց կենտրոնական վարչության և վերստուգիչ հանձնախմբի ու մասնաճյուղերի զեկուցումները: Համագումարի կողմից քննարկված հարցերից կարևոր էին՝ Զանգեզուրի աղետյալների օգտին հանգանակություններ ժողովելու հարցը, 204-ը և պետական կարմիր խաչը. հարաբերությունները եղբայրական կազմակերպությունների հետ և այլ հարցեր: Համագումարը անցկացվեց 204-ի ամերիկյան շրջանի և Սովետական Հայաստանի միջև միասնություն ստեղծելու նշանաբանով:

Ամերիկյան 204-երի և Հայաստանի մեջ ավելի սերտ կապ ստեղծելու համար համագումարը որոշեց Հայաստան ուղարկել հատուկ պատվիրակություն, որի կազմում ընտրվեցին այնպիսի մարդիկ, որոնց հետաքրքրում էին հայ ժողովրդի նվաճումները և բարեկամաբար էին տրամադրված Հայաստանի կառավարության նկատմամբ:

Համագումարը որոշում ընդունեց 204-ի և ամերիկահայ շրջաններում կազմակերպված որոշ եղբայրական կազմակերպությունների կապերի ամրապնդման մասին: Համագումարի պատգամավորների զգալի մասը պատրաստակամություն հայտնեց հանգանակություններ հավաքելու Զանգեզուրի աղետյալների համար:

¹ ՀՍՍՌ-ԸՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 27, թ. 9:

² Նույն տեղը, գ. 174, թ. 24—25:

Համագումարը բարեկամական վերաբերմունք ցույց տրվեց ամերիկահայ ուսանողական միությանը, որը տարիներ ի վեր օգնում էր Սովետական Հայաստանի շինարարությանը և իր եկամտի 35 տոկոսը հատկացնում էր Երևանի համալսարանին: Այդ միությունը օգտակար աշխատանք է կատարել Հայաստանի մշակույթի համար, որի համար ՀՊԿ-ի վարչությունը հայտնել է շնորհակալություն: Համագումարը անհրաժեշտ համարեց սերտ հարաբերությունների մեջ մտնել ուսանողական և մյուս բարեկամական կազմակերպությունների հետ: Այդ առթիվ ընդունված բանաձևում ասված է. «Ուրեմն, ՀՊԿ-ը որպես Խորհրդային Հայաստանի անմիջական բարեկամական կազմակերպությունը Ամերիկայի մեջ, կփափազի ավելի մոտ կապեր հաստատել ամերիկահայ ուսանողական միության հետ և քաջալերել եղբայրական բարեկամական վերաբերմունք անոր հանդեպ»¹:

Համագումարը հատուկ որոշում ընդունեց ամերիկահայ ՀՊԿ-ի հրատարակչության մասին, հանձնելով այդ գործը ՀՊԿ-ի պրոպագանդա-հրատարակչական հանձնաժողովին: Պատգամավորներից շատերն առաջարկեցին հատուկ պարբերական լույս ընծայել Սովետական Հայաստանի 11-ամյակի առթիվ: Համագումարը անհրաժեշտ գտավ աշխուժացնել «Բանվոր» շաբաթաթերթը, որն անվերապահորեն նվիրված էր Հայաստանին և ընդհանուր Միության շահերի պաշտպանությանը, ինչպես նաև ՀՊԿ-ի գորացմանը: Համագումարը անհրաժեշտ համարեց բնակչության մեջ տարածել գրականություն, ծանոթացնել Հայաստանի նվաճումներին, դաստիարակել զաղութահայ աշխատավորներին՝ օժանդակելու սոցիալիզմի կառուցմանը Սովետական Հայաստանում:

Համագումարը հատուկ որոշմամբ նշեց ամերիկահայ առաջադիմական կազմակերպությունների և ՀՊԿ-երի կազմակերպական աճի մասին: Այդ ժամանակ Ամերիկայի ՀՊԿ-ն ուներ 38 մասնաճյուղ՝ 1000 անդամով, իսկ 4-րդ համագումարի բացման ժամանակ կար 29 մասնաճյուղ՝ 650 անդամով²:

ՀՊԿ-ի միջոցով ԱՄՆ-ի հայ աշխատավորները ՀՍՍՌ-ին ցույց տվին նաև որոշ տեխնիկական օգնություն¹:

Գաղութահայություն էլ ավելի սերտ կապը ՀՊԿ-ի և վերջինիս միջոցով Սովետական Հայաստանի հետ, ցայտուն կերպով արտահայտվեց Ամերիկայի շրջանի ՀՊԿ-ի 8-րդ համագումարի կողմից, որը կայացավ Նյու-Յորքում, 1934 թվականի օգոստոսի 31-ից սեպտեմբերի 3-ը:

Համագումարի որոշումները պարզ կերպով վկայում են Սովետական Հայաստանի հեղինակության բարձրացման մասին: Տեղին է հիշել Ա. Խանջյանի հետևյալ խոսքերը. «Այնքան պարզ է ու վեհ Խորհրդային Հայաստանի մասին ճշմարտությունը, որ դաշնակցական պրովոկացիաների ըստվերները չեն կարող որևէ շափով նսեմացնել նրան: Սոցիալիստական հայրենիքի հմայքն ու հեղինակությունը զնալով ավելի ու ավելի աճում է արտասահմանյան աշխատավորության մեջ»²:

Հայաստանի հեղինակության բարձրացումը, իհարկե, սերտորեն միահյուսված էր նրա տնտեսության և կուլտուրայի արագ վերելքի հետ: Հայ ժողովուրդը փառահեղ գործեր էր սկսել, հաջողությամբ իրականացնում էր երկրորդ հնգամյակի պլանները: Ամբողջ արդյունաբերության արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ, 1931 թվականին աճեց 43 տոկոսով: Սոցիալիստական ինդուստրացման տեմպերին զուգընթաց, 1931 թվականին բանվոր դասակարգի թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելացավ 41 տոկոսով: 1932 թվականին արդյունաբերության արտադրանքը կազմեց 72 տոկոս, աշխատանքի արտադրողականության աճը՝ 40 տոկոս, աշխատավարձինը՝ 13,5 տոկոս, ինքնարժեքի իջեցմանը՝ 6,2 տոկոս: Կարճ ժամանակամիջոցում շարք են մտնում բազմաթիվ արդյունաբերական ձև-

¹ 1922 թվականին Նյու-Յորքում կազմակերպվեց «Հայաստանի տեխնիկական օգնության ընկերությունը», որն իր միջոցներով ձեռք բերեց 2 տրակտոր և նվիրեց Հայաստանին (տե՛ս «Նոր աշխարհ», № 1, 1922 թ., օգոստոս):

² ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 609, թ. 98:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 499, թ. 15:

² Նույն տեղը, թ. 32:

նարկություններ, ավարտին են մոտենում Չորագէսը, երկրորդ Երգէսը: 1932—1934 թվականներին ավարտվում է Քանաքեռոգէսի շինարարությունը, սկսվում են Գյումուշդէսի շինարարության աշխատանքները: Սոցիալիստական շինարարությունը հաջողությամբ էր ծավալվում նաև գյուղում: Նախկին հետամնաց ու անգրագետ գյուղը դարձել էր առաջավոր ու կուլտուրական:

Հայ ժողովրդի նվաճումները զգալի էին կուլտուրայի և գիտության բնագավառում: Ռեսպուբլիկայում ստեղծվել էր կրթության լայն ցանց. բացվել էին նոր դպրոցներ, տեխնիկումներ և ուսումնարաններ, գործում էին մի շարք բարձրագույն ուսումնական և գիտական հաստատություններ:

Այս բոլոր նվաճումները բարձրացրին սովետական իշխանության հեղինակությունը գաղութահայության մեջ: Միաժամանակ մեծացավ նաև ՀՊԿ-ի նշանակությունն ու ազդեցությունը: Սակայն դաշնակներն ու նրանց կողմնակիցները աշխատում էին շփոթություն առաջ բերել աշխատավորների մեջ, հեղինակազրկել ՀՊԿ-երին: 1934 թվականին Ամբրիկայի մի շարք հայաբնակ քաղաքներում դաշնակների մատնությունների հետևանքով ՀՊԿ-ի շատ անդամներ սպանվեցին և ձերբակալվեցին: ՀՊԿ-ը, ելնելով ստեղծված դրությունից, ուժեղացրեց հակադաշնակցական պայքարը: ՀՊԿ-ի կենտրոնական վարչությունը իր մասնաճյուղերին հրահանգեց կազմել միացյալ ճակատ և պայքարել դաշնակների մատնությունների դեմ:

1935 թվականի նոյեմբերի 23-ին Բուենոս-Այրեսում կայացավ Հարավային Ամերիկայի շրջանի ՀՊԿ-ի 9-րդ համագումարը:

Համագումարը մեծ խանդավառությամբ նշեց Սովետական Հայաստանի ձեռք բերած տնտեսական և կուլտուրական վիթխարի նվաճումները, ընդգծելով, որ նախկին հետամնաց Հայաստանը դարձել է արդյունաբերական գիգանտների, մեքենայացված գյուղատնտեսության և զարգացած կուլտուրայի ռեսպուբլիկա:

Համագումարի պատգամավորները զայրույթով դատա-

պարտեցին դաշնակների ռեսպուբլիկաները «Շիրակ» թերթի խմբագրությունն և կատմամբ:

Սովետական Հայաստանի փառապանծ 15-ամյակի առթիվ «Շիրակ»-ում լույս տեսած հոդվածների առիթով դաշնակները թերթը բռնագրավում են, խմբագրությունը մեղադրելով «հակապետական գործունեության և դավաճանության մեջ»: Թերթը, իհարկե, լույս չտեսավ. դա մեծ զայրույթ է առաջացնում ամբողջ ամերիկահայության և ՀՊԿ-երի մեջ: ՀՊԿ-ի կենտրոնական վարչությունը և թերթի խմբագրությունը ընթերցողներին հաստատ համոզմունք և վստահություն ներշնչեցին, որ անպայման նորից հարություն կառնի «Շիրակ» թերթը: Այդպես էլ եղավ: Համագումարն իր աշխատանքն ավարտեց հետևյալ նշանաբանով՝ թող միշտ բարձր լինի սովետական հայրենասիրության դրոշմը որպես խորհրդանիշ մեր ազգային անկախության և ազատության:

Սփյուռքահայությունը և Սովետական Հայաստանի աշխատավորության միջև սերտ կապեր հաստատելու կարևոր օղակներից մեկն էլ ՀՊԿ-ի արտասահմանյան կոմիտեների կողմից հայրենիք այցի եկած պատվիրակություններն էին: Այդպիսի մի քանի պատվիրակություններ եկան 1935 թվականի հոկտեմբերի վերջերին, մասնակցելու Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակի տոնակատարությանը և ծանոթանալու այն մեծ նվաճումներին, որոնք ձեռք էին բերվել Հայաստանում և ընդհանրապես Սովետական Միությունում:

Թողնելով Հայաստանի տերիտորիան, գաղութահայ պատվիրակությունները իրենց շնորհակալությունն էին հայտնում պարտիային և սովետական կառավարությանը, որոնց ուշադրության և հոգատարության շնորհիվ Հայաստանը կարճ ժամկետում դարձել էր անձանաչելի՝ իր հոյակապ նվաճումներով հանդերձ:

Արտասահմանի հայ աշխատավորությունը խանդավառությամբ դիմավորեց Սովետական Հայաստանից վերադարձող պատվիրակություններին:

Մեծ հիացմունքով նշելով Սովետական Հայաստանի պանծալի տոնը՝ 15-ամյակը, սփյուռքահայ աշխատավորները

ՀՉԿ-երի միջոցով ստանձնում են նոր պարտավորություններ, ուժեղացնելով օժանդակությունը Հայաստանում կառուցվող նոր ավաններին ու գյուղերին:

1935 թվականին Սեբաստիայի Այգ միությունը ձեռնարկում է 10000 դոլար հանգանակություն՝ նոր Սեբաստիայի շինարարության, մասնավորապես խմելու ջրի խողովակներ անցկացնելու համար:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Երևանի կլինիկական ինստիտուտի ուսանողների բաժանմունքին նվիրում է ճառագայթման էկրաններ՝ 5 հատ, ուժեղացնող էկրաններ՝ 4 հատ, ուսանողների խողովակներ՝ 2 հատ¹:

Հայաստանում կառուցվող նոր ավանների շինարարության համար դրական դեր խաղաց Փարիզի հայ տեխնիկական ընկերությունը (նախագահ՝ Պ. Զախրյան), որը կազմակերպվեց 1934 թվականին, փարիզաբնակ մի խումբ հայ գիտնականների, ճարտարապետների և տեխնիկների ընդհանուր ժողովում²:

1934 թվականի աշնանը ՀՉԿ-ին որոշ օգնություն ցույց տվեց Վասպուրականի հայրենակցական միությունը, որը Երևանի համալսարանի աշխարհագրության կաբինետին ուղարկեց գործիքներ, դիդակտիկ նյութեր:

Հայաստանի ընդհանուր շինարարությանը օգնեցին նաև Հունաստանի ՀՉԿ-երը:

Սովետական Հայաստանի նվաճումներին արտասահմանի հայությունը ծանոթացնելու գործում նշանակալի դեր խաղացին սփյուռքահայ մի շարք հրատարակություններ: Այսպես, օրինակ, Ամերիկայի ՀՉԿ-ը լույս է ընծայում «Խորհրդային երկիրը» նկարների ալբոմը, «Վերելքի տարեգիրք» ալբոմը՝ նվիրված Ամերիկայի ՀՉԿ-ի 10-րդ տարեդարձին, գրող Կ. Սիտալի «Գլուղն իմ հեռավոր» պոեմը, «Խորհրդային սահմանադրություն»-ը: Հրատարակվում են նաև «Նոր ուղի», «Նոր աշխարհ» և «Բանվոր» օրաթերթերը:

ա) ՀՉԿ-ի ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայրենակցական միությունները գործել են ՀՉԿ-ից անկախ, բայց իրենց ներքին կանոնադրությունների, սակայն նրանց և ՀՉԿ-ի միջև եղել են նորմալ փոխհարաբերություններ:

Հայրենակցական միությունները, վերաշինացիները, բարեգործականները, կրթասիրականները որպես աշխատավորական կազմակերպություններ չէին կարող բարեկամաբար տրամադրված չլինել դեպի Սովետական Հայաստանը և նրա կառավարությունը:

Այդ կազմակերպություններից շատերը, հատկապես առաջադիմականները, դաշնակների կողմից երկար ժամանակ ենթարկվել են հալածանքի, սակայն Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո դրանք հանդես եկան սովետական իշխանության պաշտպանությամբ և ջանք չխնայեցին նոր ավանների կառուցման ու իրենց համաքաղաքացիների ներգաղթի կազմակերպման համար:

Հայաստանի օգնության կոմիտեն լուրջ աշխատանք կատարեց արտասահմանյան հայ գաղութներում գործող առաջադիմական կազմակերպությունների ուշադրությունը Հայաստանի տնտեսական ու կուլտուրական շինարարությանը բեռնելու ուղղությամբ: Իհարկե, այդ գործում դժվարությունները մեծ էին, քանի որ հասարակական, բարեգործական կազմակերպություններում աշխատում էին քաղաքական տարբեր հայացքների տեր մարդիկ: Սակայն, ինչպես վկայում են փաստերը, հայրենիքի ջերմ սիրով ու կարոտով էին համակված սփյուռքահայերի շքանում գործող կազմակերպությունների զգալի մասը, դեպի հայրենի երկիրը տաժաժ սերը դրանց համախմբում էր ՀՉԿ-ի շուրջը: ՀՉԿ-ի վարչությունը դիմեց հնարավոր ամեն մի միջոցի, որպեսզի հայրենիքի հետ կապեր բոլոր հասարակական կազմակերպություններին և նրանց դուրս բերել՝ դաշնակների ազդեցությունից:

ՀՉԿ-ի վարչությունը այդ առթիվ կոչով դիմեց բոլոր բարեգործական և հայրենակցական ընկերություններին. «Ըն-

¹ ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 306, թ. 1:

² Նույն տեղը, գ. 74, թ. 1:

կերներ, հրամայական անհրաժեշտություն է, որ հայրենակցական միությունները իրենց գործոն աջակցությունը բերեն մեր կառավարությանը և ՀՊԿ-ին՝ նոր ավանների զարգացման ու բարգավաճման համար»¹:

Բայց քնած չէին նաև դաշնակները, նրանց հաջողվեց մի շարք տեղերում դատ բացել ՀՊԿ-երի դեմ: Դատավարությունների ժամանակ դաշնակները ճգնում էին ապացուցել, որ իբր թև. ՀՊԿ-երի հավաքած դրամները գնում են կոմունիստների պրոպագանդայի համար, նրանց նպատակներին: Սակայն այդ բոլորից հետո էլ ՀՊԿ-երի և հայրենակցական միությունների կապերը չխզվեցին: Բազմաթիվ հայրենակցական միություններ շնորհակալ աշխատանք կատարեցին հօգուտ հայ ժողովրդի: Այսպես, օրինակ, 1934—1935 թվականներին Սեբաստիայի, Տիրանիայի, Արաբկիրի, Մալաթիայի, Թոմար-զայի միությունները կենտրոնական գրասենյակի միջոցով կատարեցին ավելի քան 6500 դրամների և դրանք փոխադրեցին Հայաստան:

Հայրենակցական և վերաշինաց միությունները Հայաստանի շինարարության հետ կապելու համար ՀՊԿ-երը աշխատավորության շրջանում կատարեցին մասսայական բացատրական արդյունավետ աշխատանքներ: Այդ ուղղությամբ գովելի է ամերիկյան ՀՊԿ-ի աշխատանքը, որի համար 1933 թվականին այն արժանացավ Սովետական Հայաստանի կառավարության պարգևին:

Հայաստանի շինարարական աշխատանքներին որոշ մասնակցություն ունեցավ Եգիպտոսի հայկական բարեգործական ընկերությունը, որը հայ ժողովրդին, նրա դժվարին օրերին, ուղարկեց խինին, բժշկական գրականություն, դրամ և այլն: 1923 թվականին ընկերությունը Հայաստան ուղարկեց 70 հազար կիլոգրամ գարի՝ գարնանացանի համար:

Հայրենակցական միությունները անկեղծ օգնություն ցույց տվին հայ ժողովրդին՝ Լենինականի 1926 և 1931 թթ. տեղի ունեցած երկրաշարժերի ժամանակ: ՀՊԿ-ի Լոնդոնի մասնաճյուղը 1926 թվականի նոյեմբերի 19-ին Հայաստան ուղար-

կեց 300 ֆունտ ստեռլինգ¹, Պարսկաստանի ՀՊԿ-ի Ռեշտի և Բանտարգեզի ճյուղերը՝ 8200 ուրբի, ՀՊԿ-ի ամերիկյան ճյուղը՝ 1500 դոլար²: Լենինականի բնակչությանը մեծ օգնություն ցույց տվեցին ՀՊԿ-ի սովետական մասնաճյուղերը:

Մեկ տարում Լենինականի վերաշինության ֆոնդի օգտին ՀՊԿ-երից և այլ միություններից հավաքվեց բավական մեծ գումար: 1927 թվականին ՀՊԿ-ի զխավոր վարչության տրամադրության տակ կար 146000 ուրբի³:

Լենինականի բնակչությանն օգնելու, քաղաքը բարեկարգելու նպատակով ստեղծվեց «ՀՍԽՀ Լենինականի վերաշինության հանրապետական կոմիտե»-ն, որը հաստատվեց ժողովրդավար կոմիտեի կողմից: Կոմիտեն իր գործունեությունն սկսեց Շիրակի աղետալ բնակչության համար տներ կառուցելու աշխատանքով: Այդ նպատակով ՀՊԿ-ի զխավոր վարչությունը 1927 թվականի դեկտեմբերին հատուկ կոչով դիմեց Հնդկաստանի, Եգիպտոսի, Միջին Եվրոպայի, Բալկանների և Միջագետքի շրջանների գաղթահայերին և օգնություն խնդրեց նրանցից:

Հայրենակցական միությունները օգտակար աշխատանք են կատարել ոչ միայն Հայաստանում նոր ավաններ կառուցելու գործում, այլև գաղթաբազայ օջախների աշխատավորների համար, նրանց նյութական ու կուլտուրական կարիքների բավարարման, բազմաթիվ մշակութային հիմնարկների կառուցման ուղղությամբ: Այդ տեսակետից հիշատակության արժանի են ազգային հետևյալ կուլտուրական հիմնարկները՝ Ազգային տունը (Փարիզ), Դպրոցասեր տիկնանց վարժարանը (կազմակերպվեց 1923 թվականին Ստամբուլում և այնուհետև փոխադրվեց Ֆրանսիա), Մուրադյան երրորդական վարժարանը, Մարի Նուպարյան ուսանողական տունը (կառուցվեց 1930 թվականին Նուպար փաշայի միջոցներով), ՀԲԸՄ Նուպարյան մատենադարանը (հիմնադրվել է 1929 թվականին Կ. Պոլսում):

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 71, թ. 1—5:

² Նույն տեղը, ց. 2, գ. 167, թ. 36—37:

³ Նույն տեղը, թ. 27:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, գ. 541, թ. 61—62:

Այժմ բազմաթիվ առաջադիմական հաստատություններ, կուլտուրական հիմնարկություններ և հայրենակցական միություններ գոյություն ունեն գաղութահայ օջախներում: Այդ միություններից շատերը՝ առաջադիմականները, ազնվորեն ծառայում են գաղութահայ ժողովրդին և բարեկամական ջերմ սիրով են խոսում Սովետական Հայաստանի նվաճումների մասին:

7. ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՔԱՅՔԱՅԻՉ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՕԿ-ԵՐԻ ԴԵՄ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵ Է

Սփյուռքի աշխատավորության բախտը անխզելիորեն կապված է միջազգային ռևոլյուցիայի հաղթանակի հետ:

«Տրված լինելով աշխարհի այս ու այն կողմերը, հայ բանվորները և գյուղացիները, — ինչպես նշել է Ալ. Մյասնիկյանը, — շնչում են ամերիկյան, ֆրանսիական և այլ պրոլետարների ոգով: Հայ աշխատավորները ապրում են եվրոպական զանազան երկրների և Ամերիկայի բանվորների հետ կողք-կողքի: Նրանք ցրված են Ասիայի և Աֆրիկայի աշխատավորների ծալքերում: Բուրժուական երկրների պրոլետարիատն ու աշխատավորությունն իրերի ընթացքով գնում են դեպի միջազգային հեղափոխություն: Եվ այդ տեղերի հայ աշխատավորությունը չէ, որ հեռու պիտի մնա հեղափոխություններից»¹:

Սփյուռքահայության ազգային և ինտերնացիոնալ շահերի միասնությունը քայքայելու համար դաշնակիները, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ ճգնում են սփյուռքահայ աշխատավորներին կտրել ռևոլյուցիոն շարժումներից, նրանց հեռու պահել կապիտալի դեմ մղվող դասակարգային պայքարից, խանգարել նրանց մերձեցմանը Սովետական Հայաստանին: Իրենց այդ նպատակին հասնելու համար դաշնակիները կանգ չեն առնում ոչ մի միջոցի առջև: Սակայն զուր ջանքեր:

¹ Ալ. Մյասնիկյան, «Կուսակցությունները գաղութահայության մեջ», Թիֆլիս, 1924, էջ 7:

ինչպես արդեն ասվել է, գաղութահայ աշխատավորները ջերմ սիրով և ամուր թելերով են կապված Սովետական Հայաստանի հետ: «Թող գոռան ու սարսափեն դաշնակցականները, — գրել է Ալ. Մյասնիկյանը, — թող շարունակեն հորինել իրենց ստերը: Մենք ու գաղութահայ աշխատավորները իրար հետ կապված ենք և ավելի ևս պիտի սեղմենք մեր շարքերը»¹:

204-երը, որպես աշխատավորական կազմակերպություններ, մեծ դեր խաղացին գաղութահայությանը Սովետական Հայաստանում ծավալվող սոցիալիստական շինարարության հետ կապելու գործում: 204-երի միջոցով սփյուռքի հայ աշխատավորները լայն ինֆորմացիաներ էին ստանում ամբողջ Սովետական Միությունում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Սփյուռքահայ լայն զանգվածները գործնականում տեսան կոմունիստական պարտիայի ու սովետական կառավարության հոգատարությունը և բարձր գնահատեցին զբաղված ենք և անշահակությունը ամբողջ հայ ժողովրդի ճակատագրի համար:

Դաշնակները մեծ ճիգեր են թափում և այժմ էլ թափում են, որպեսզի սփյուռքի հայությանը կապեն արևմուտքի մեծ պետությունների հետ: Այսպես, օրինակ, դաշնակներն իրենց մի ընդհանուր ժողովում (1924 թ.) այդ կապակցությամբ հայտարարել են հետևյալը. «Եվրոպական տերություններից յուրաքանչյուրը փորձեր է անում սեղմ շղթայի մեջ առնել Սովետական Միությանը, հետևաբար... քաղաքական աններելի հիմարություն կլինի խզել մեր կապերն այդ տերությունների հետ... Հայաստանը կապված է եղել, կապված է մնում և կապված էլ պիտի մնա այդ պետությունների հետ»²:

Գժվար չէ կռահել, որ դաշնակները փորձում են մոլորություն մեջ գցել սփյուռքի հայ աշխատավորներին, բխացնել նրանց դասակարգային գիտակցությունը, թուլացնել նրանց պայքարը կապիտալի դեմ և, վերջապես, կտրել արտասահ-

մանի հայ աշխատավորությանը Սովետական Միությունից:

204-երի դեմ դաշնակների քայքայիչ աշխատանքը ընթացել է գանազան ձևերով ու մեթոդներով: Դրանցից էին՝ 204-երի դեմ պրոպագանդան (գրավոր, բանավոր), պրովոկացիաները, մատնությունները, սպանությունները և այլն: Բերենք փաստեր դաշնակների այդ պառակտիչ գործունեության մասին: Միայն 1936 թվականին դաշնակների տեղորին գոհ են դարձել (Միրիա, Եգիպտոս, Հարավային Ամերիկա) 204-ի 8 ակտիվ գործիչներ¹:

Այն ժամանակ, երբ Հայաստանից արտասահման մեկնած 204-ի պատվիրակությունները ջերմ ընդունելություն էին գտնում Եվրոպայի աշխատավորության կողմից, գաղութահայ օջախներում դաշնակցականները սկսում էին 204-երի դեմ նոր մատնություններ: Դա, իհարկե, խիստ զայրույթ էր առաջ բերում սփյուռքահայ աշխատավորների մեջ: Գաղութահայ աշխատավորները ավելի ու ավելի էին համախմբվում 204-երում:

Դաշնակների կողմից 204-երի դեմ հակասովետական պրոպագանդան հատկապես ուժեղանում էր, երբ 204-ը պատվիրակություններ էր ուղարկում Եվրոպա և Ամերիկա: Այդ օրերին նրանք հրեշավոր ստեր էին տարածում Հայաստանի նվաճումների և առհասարակ կոմունիստների վարած ազգային քաղաքականության մասին: Սակայն գաղութահայ աշխատավորները հակահարված էին տալիս դաշնակներին²:

204-ի կողմից արտասահման մեկնած պատվիրակությունները ամենուրեք ջերմ ընդունելություններ են գտել: Այդ մասին են վկայում «Հայաստանի կոչնակ» թերթում ղեկավարած հետևյալ տողերը.

«Հուլիսի 18-ին Նյու-Յորքից դեպի Եվրոպա մեկնեցան հայ պատվիրակության անդամ բժ. Ս. Կամսարականը և Կարեն Միքայելյանը: Գ. Վարդանյանը պիտի մեկնի առաջիկա շաբթուն: Պատվելին Միացյալ Նահանգներուն մեջ մնաց 4 ամիս: Նա Ատլանտյանեն մինչև Խաղաղականի ափերը, բո-

¹ Ալ. Մյասնիկյան, «Կուսակցությունները գաղութահայության մեջ», էջ 7:

² Տե՛ս «Սովետական Հայաստան», հասարակական պատկերազարդ ամսագիր, 1962 թ., № 11, էջ 26:

¹ ՀՍՍՌ ՀՌՄՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 251, թ. 10—11:

² Նույն տեղը, գ. 155, թ. 2:

իրո հայաբնակ կենտրոններում ազդեցութիւնը թողնելով, իր պաշտօնը կատարեց պատշաճորեն: Անիկա Ամերիկահայ գաղութի առջև պատկերացուց մայր Հայաստանը դարավոր շղթաներէն ազատված...:

Կրնանք անվերապահորեն ըսել, թե պատվիրակութեան անդամները ամենուրեք հաճելի տպավորութիւնը թողեցին ոչ միայն իրենց ավետաբեր պատգամին բերումով, այլև իրենց անձնավորութեան հրապույրովը... Ասոնք խոսեցան շքեղազարդ և խոհական շեշտերով և անոնց բրբազանդին շնորհիվ ամերիկահայ գաղութն այսօր ավելի քաջ կճանչնա իր պատմական հայրենիքը, հրճվանք կզգա հոն կատարված առաջադիմութեան համար և մեծապես կզնահատե Մոսկվայի կողմէն ընծայված աջակցութիւնը»¹:

Պատվիրակութիւնը ջերմ ընդունելութեան արժանացավ նաև Նվրոպայում: Այս փաստերը խոսում են ՀՊԿ-երի հեղինակութեան մասին:

Հակառակ դաշնակիցների ստոր պրոպագանդայի, արտասահմանյան, մասնավորապես, ամերիկյան ՀՊԿ-երը միանգամայն բարեկամական էին տրամադրված դեպի Հայկական ՍՍՌ-ն: 1928 թվականին ամերիկյան ՀՊԿ-երի 35 մասնաճյուղեր ընտրեցին իրենց կենտրոնական վարչութիւնները: Սկսվեցին ավելի լայն կազմակերպչական աշխատանքներ՝ հանգանակութիւնների գծով: Հայ գաղթօջախներում առաջ եկան հանգանակիչ մարմիններ, որոնք հիմնականում զբաղվում էին նվիրատվութիւնների և հանգանակութիւնների աշխատանքներով:

«Այսօր, — ասված է հանգանակիչ մարմիններից մեկի կողմ, — հազիվ թե դաշնակցական գործիչները կրնան պարծենալ, որ իրենց ջանքերը հաջողութեամբ են պսակվել: Ճշմարիտ ու անաչառ խոսքը Խորհրդային Հայաստանի մասին Ամերիկայի մեջ ալ ըսված է, ու ըսված է ոչ միայն առանց ունէ հասցեագրութեան, այլև մեծ հավատով ու ոգևորութեամբ...»²:

¹ ՀՍՍՌ ՀՌՍԾՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 152, թ. 1—4:

² Նույն տեղը, գ. 155, թ. 2:

ՀՊԿ-ի գլխավոր վարչութեան լավ աշխատանքի շնորհիվ, գաղութահայ որոշ հարուստներ և բարեգործներ նույնպես սկսեցին օգնութիւն ցույց տալ Սովետական Հայաստանին: Նույնիսկ դաշնակցութեան մի շարք անդամներ, տեսնելով Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական հաջողութիւնները, լքեցին «դաշնակցութիւն» կոչված պարտիան և հակվեցին դեպի ՀՊԿ-երը:

Այսպիսով, ՀՊԿ-երը հզոր ուժ հանդիսացան գաղութահայ աշխատավորներին կապելու Սովետական Հայաստանում ծախվելով սոցիալիստական շինարարութեան հետ: ՀՊԿ-երի այդ ազնիվ, հայրենանվեր աշխատանքը դրական ազդեցութիւն թողեց գաղութահայ օջախներում գործող բազմաթիվ հասարակական կազմակերպութիւնների վրա: Շուտով մի շարք հասարակական կազմակերպութիւններ, հայրենակցական և վերաշինաց միութիւններ, երես թեքեցին դաշնակիցներից և համախմբվեցին ՀՊԿ-երի շուրջը:

Տեսնելով այդ, դաշնակիցները դիմեցին մի շարք ստոր մեթոդներին: Նրանք ՀՊԿ-երի ակտիվ գործիչներին հաճախ ամբաստանում էին կառավարութիւնների առաջ, մեղադրելով հակակառավարական գործունեութեան մեջ: Այդ եղանակով նրանց հաջողում էր մի շարք ՀՊԿ-երի ղեկավարների դատի տալ և վարկաբեկել:

Դաշնակիցները բաց չէին թողնում ոչ մի հարմար առիթ ՀՊԿ-երի, հայրենակցական և վերաշինաց միութիւնների շարքերը թուլացնելու համար:

1928—1930 թվականներին ՀՊԿ-ի եվրոպական, հատկապես բալկանյան մասնաճյուղերի մի շարք աշխատակիցներ հանդես եկան վտանգավոր առաջարկութիւններով, որոնց իրականացումը խիստ կվնասեր ՀՊԿ-երին և կօգներ դաշնակիցների պրոպագանդային: Կարծիքներ եղան ՀՊԿ-երը քաղաքական կազմակերպութիւնների վերածելու մասին: Այդպիսի սխալ կարծիքներ եղան 1927—1928 թվականներին ԱՄՆ-ում և Ֆրանսիայում:

ՀՊԿ-ի վարչութեան կողմից արտասահման մեկնած ներկայացուցիչները դրական աշխատանք կատարեցին ՀՊԿ-երի գործունեութիւնն ուժեղացնելու և եղած սխալները վերացնե-

լու համար: Ավելի զգույշ և ուշադիր վերաբերմունք մշակվեց ամերիկահայ զաղութներում, որոնք դաշնակցութեան դրամական բազան էին: Առանց ամերիկյան իմպերիալիստների դրամական օգնութեան դաշնակցականները չէին կարող իրենց կազմակերպութիւնները պահպանել ոչ մի երկրում:

Ափյուռքահայ աշխատավորների վրա ՀՊԿ-երի ազդեցութիւնը թուլացնելու, ինչպես և մասսաների աչքում նրանց հեղինակազրկելու համար դաշնակները դիմեցին պայքարի այլ ձևերի: Այսպես, օրինակ, ՀՊԿ-երի դեմ իրենց պայքարը դաշնակները հաճախ տեղափոխում էին կարմիր խաչի հրապարակային ժողովները: Դա հասկանալի է, քանի որ կարմիր խաչերի կենտրոնական ապարատներում խցկվել էին մեծ թիվով դաշնակներ, այդ իսկ պատճառով կարմիր խաչի ժողովները հաճախ ստանում էին հակասովետական բնույթ: Այդ ժողովներում դաշնակները զրպարտում էին Սովետական Միութեանը, փորձում էին նսեմացնել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեւոլյուցիայի փրկարար դերն ու նշանակութիւնը նախկինում ճնշված ժողովուրդների ազատութեան և վերածնութեան գործում: Այսպես, օրինակ, Զիկագոյում գումարված կարմիր խաչի մասնաճյուղերի հրապարակային մի ժողովում տեղի ատենապետը հայտարարել է. «Խորհրդային կարգերը ժամանակավորապես փաթաթված են հայ ժողովրդի վզին և այդ երկար շի տևի»¹:

ՀՊԿ-երը քայքայելու նպատակով դաշնակները դիմեցին նաև մեկ ուրիշ խորամանկութեան: Հանդես գալով կարմիր խաչի ժողովներում, նրանք առաջարկում էին ՀՊԿ-երը ձուլել կարմիր խաչերի հետ: Սա նույնպես սխալ էր և վրտանգավոր. այն ձեռնտու էր միայն ՀՊԿ-ի թշնամիներին: ՀՊԿ-ի կենտրոնական վարչութիւնը դաշնակների այդ առաջարկութեանը հակադրեց իր պլանը, բոլոր ՀՊԿ-երին հրահանգեց սերտ կապ ու համագործակցութիւն ստեղծել կարմիր խաչերի և առհասարակ բոլոր առաջադիմական կազմակերպութիւնների հետ:

Դաշնակների քայքայիչ աշխատանքը ՀՊԿ-երի դեմ ա-

ռավել ուժեղ է արտահայտվել արաբական երկրներում՝ Եգիպտոսում, Միջագետքում, Սիրիայում, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայում՝ Ալժիրում, Թունիսում, Մարոկկոյում: Որպեսզի պառակտեն Հյուսիսային Աֆրիկայի հայ աշխատավորների միասնութիւնը ՀՊԿ-ի հետ, դաշնակները այնտեղ էին ուղարկում իրենց մոլի ագիտատորներին: Դաշնակներին հաջողվեց թուլացնել և մի որոշ ժամանակ անգործութեան մատնել Ալժիրի ՀՊԿ-ը, որը կազմակերպվել էր 1923 թվականին:

Դաշնակները քայքայիչ աշխատանք էին տանում նաև հնդկահայ «զաղութում»: Հնդկաստանում ՀՊԿ-եր շատեղծվեցին, որովհետև այնտեղ աշխատավորական տարրերը ավելի փոքր թիվ էին կազմում, քան հարուստները, որոնք հեշտութեամբ ենթարկվեցին դաշնակների պրոպագանդային:

Ինչպես հայտնի է, սովետական իշխանութեան ազգային բաղաբանութիւնը և ՀՊԿ-երը պառակտելու համար դաշնակները օգտագործում էին թե՛ իրենց և թե՛ բուրժուական երկրների թերթերը: Դաշնակների հակասովետական պրոպագանդան հատկապես ուժեղ էր Ֆրանսիայում, Հունաստանում և Գերմանիայում: Այսպես, օրինակ, 1935 թվականի դեկտեմբերի սկզբներին ֆաշիստական թերթերից մեկում հոդվածներ են տպագրվել այն մասին, որ իբր թե Անդրկովկասում 1920—1921 թվականներին «ռեւոլյուցիոն իրադարձութիւն չի եղել և այնտեղ սովետական կարգերի հաղթանակը ձեռք է բերվել կարմիր բանակի ուժի միջոցով»¹: Այդ հոդվածը մեծ զայրույթ է առաջացնում եվրոպական հայ զաղութներում, որի դեմ նույն թվի դեկտեմբերի 26-ին բողոքով հանդես են գալիս Ֆրանսիայի Առլ քաղաքի մի խումբ բանվորներ, նրանք գրում են. «Մենք՝ հայ բանվորներս, վճռականորեն բողոքում ենք հիտլերյան այն պրոպագանդայի դեմ, որն ուղղված է Սովետական Հայաստանի և Վրաստանի ռեսպուբլիկաների դեմ: Մենք՝ հայ բանվորներս, հաստատում ենք, որ այդ կեղծիքը ուղղված է այդ ռեսպուբլիկաների դեմ: Մենք հաստատում ենք, որ ոչ թե ռուսական բանակն է վճռել դաշնակցա-

¹ ՀՍՍՌ ՀՌՍԾՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 379, թ. 9:

¹ ՀՍՍՌ ՀՌՍԾՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 251, թ. 29:

կան բանդիտներին և նրանց առաջնորդներին Հայաստանից, այլ ինքը՝ աշխատավոր ժողովուրդին է ապստամբել ընդդեմ կեղեքիչ ռեժիմի:

Հիտլերը շարամոտորեն պնդում է, որ Սովետական Հայաստանը իբր թե նեղվում է սովետների ճնշման տակ: Այդ բոլորը կեղծիք ու զրպարտութուն է Հիտլերի ու դաշնակների կողմից:

...Մենք հայտնում ենք, որ պատրաստ ենք հարվածով պատասխանել ֆաշիստական ռեժիմին...»¹:

1935 թվականի նոյեմբերին Սովետական Հայաստանի աշխատավորները հանդիսավոր կերպով տոնեցին Հայաստանում սովետական իշխանության հաստատման պանծալի 15-ամյակը: Այդ օրը մեծ շուքով նշեցին նաև արտասահմանի հայ աշխատավորները: Բայց դաշնակցական մամուլը բազմաթիվ ստեր ու հերյուրանքներ շարտեց սովետական իշխանության հասցեին: Այդ ուղղությամբ հատկապես մեծ ջանքեր գործադրեց «Արմենիա» շաբաթաթերթը²:

Մերկացնելով «Արմենիա»-յի զրպարտիչ հոդվածագիրներին, «Շիրակ»-ը գրել է.

«Դուք թշնամի եք մեզի և ձեր զրպարտությունը միայն «Արմենիա»-ի ամենաաղտոտ սյունակներուն մեջ տեղ կգտնի: Դաշնակ շեֆերեն դուրս ուրիշ մարդիկ ամոթ կզգան ձեր ճեմակի վրա սեռությունները ձեռքով բռնելը: Ահա թե ինչ կըսեն՝ «ձեզ չի հաջողվի»»³:

1935 թվականին դաշնակներին հաջողվում է որոշ խլրտումներ առաջ բերել 204-ի «Արարատ» և «Մարտունի» մասնաճյուղերում (Հունաստան):

Դաշնակների հակա204յան պրոպագանդան 1930 թվականին ուժեղացավ նաև բալկանյան երկրներում: Այն ժամանակ Բալկանյան երկրներում (Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա) բնակվում էին ավելի քան 100 հազար հայեր (այժմ՝ 47 հազար): Գլխավորապես հայաշատ էին Աթենքը, Սալոնիկը,

¹ ՆՍՍՌ ՀՌՍԵՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 251, թ. 29:

² Նույն տեղը, գ. 538, թ. 1:

³ «Շիրակ», 22 փետրվարի 1936 թ., Փարիզ:

Պլովդիվը, Սոֆիան, Վառնան, Կոնստանդան և Բուխարեստը:

Դաշնակները այդ շրջաններում ուժեղ ազդեցություն ունեին հատկապես «Հայ մարմնամարզական ընկերության» վրա, որի ղեկավարների զգալի մասը դաշնակցական պարտիայի անդամներ էին: Նրանք ունեին իրենց մամուլը և ամսագրերը: Այսպես, օրինակ, Աթենքում լույս էր տեսնում «Նոր օր» օրաթերթը, Սալոնիկում՝ «Հորիզոն»-ը, Սոֆիայում՝ «Ալիք»-ը, Բուխարեստում՝ «Հայաստան» շաբաթաթերթը, «Նոր արշալույս» և «Երկիր» երկշաբաթաթերթերը:

Դաշնակները, խցկվելով 204-ի Բուլղարիայի վարչության մեջ, խլրտումներ էին առաջ բերում Վառնայի, Պուրկազի ու Ռուսնուկի մասնաճյուղերում և դրանք լարում մեկը մյուսի դեմ: Նրանք օգտագործեցին նաև այն հանգամանքը, որ Վառնա քաղաքում գործում էին 204-ի երկու ճյուղեր, որոնց միջև համաձայնություն չկար շատ հարցերում:

1935 թվականի սկզբին 204-ի գլխավոր վարչության մանրատով Բուլղարիա մեկնեց Գ. Վարդանյանը: Նա տեղում պարզեց 204-երի ներսում եղած խլրտումների պատճառները, բացահայտեց դաշնակների պառակտիչ գործողությունների էությունը 204-երի դեմ և օգնեց 204-ի բուլղարական վարչությանը՝ համալրելու 204-երը աշխատավորական տարրերով:

Դաշնակների պառակտիչ գործողությունները երևացին մինչև անգամ Բուենոս-Այրեսի 204-ի վարչությունում: 1936 թվականի ապրիլի 26-ին Բուենոս-Այրեսում հրավիրվեց այդ շրջանի 204-ի մասնաճյուղերի երկու կոնֆերանս: Կենտրոնական վարչության հրավերով առաջին կոնֆերանսին մասնակցում էին ավելի մեծ թվով ներկայացուցիչներ: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էր և ցիբիկ ճառով հանդես եկավ Ս. Վրացյանը, նա ճգնում էր «ապացուցել», թե 204-երը քայքայիչ աշխատանք են տանում:

Սակայն կոնֆերանսը դատապարտեց Ս. Վրացյանի ճառը, ընդգծելով 204-երի խոշոր դերը Հայաստանի նվաճումներին գաղութահայությունը ծանոթացնելու գործում և հատուկ որոշումով հավանություն տվեց Բուենոս-Այրեսի 204-ի վարչության գործունեությանը: Այդ հարցի շուրջը ընդունված որոշ-

ման մեջ ասված է. «Խորհրդային Հայաստանի լուսապայծառ իրականությունը գաղութահայերին ծանոթացնելու գործում մեծ է ՀՕԿ-երի պրոպագանդայի դերը, որն այսուհետև պետք է կատարվի ավելի մեծ հավաքությունների մեջ, մամուլում և այլն: Պետք է գաղութահայությանը ավելի սերտորեն կապել Հայրենիքի պանծալի վերելքին, ՀՕԿ-ի և այլ բարեկամական կազմակերպությունների հետ»¹:

Գաշնակները զանազան միջոցներով փորձում էին հայրենակցական և վերաշինաց միությունները դուրս բերել ՀՕԿ-երի դեմ և քայքայել նրանց համագործակցությունը՝ Հայաստանի շինարարությունը օժանդակություն ցույց տալու գործում:

Հակառակ դաշնակներին, ՀՕԿ-երին հաջողվում է իրենց շուրջը համախմբել գաղութահայ օջախներում գործող բազմաթիվ առաջադիմական կազմակերպությունների, որոնք ուժեղացրին իրենց հայրենանվեր աշխատանքը և օժանդակեցին Սովետական Հայաստանում ծավալված շինարարությանը:

Գաղութահայ աշխատավորները հպարտանում էին Սովետական Հայաստանի այն բոլոր հաջողություններով, որոնք ձեռք էին բերվում աշխատավորների ստեղծագործ աշխատանքի շնորհիվ: Հայաստանի կառավարության ձեռնարկումներին սփյուռքի հայ աշխատավորները անտարբեր չմնացին: Այսպես, օրինակ, Հայաստանում մասնավորապես Երևանում, զգացված բնակարանային խիստ կարիքի ժամանակ արտասահմանի հայ գաղութներում սկսվեց լայն շարժում՝ զուամարներ հավաքել և ՀՕԿ-ի կենտրոնական վարչության միջոցով, համապատասխան երկրի գաղութահայության անունով, կառուցել մի շարք բնակելի շենքեր: Հայաստանի կառավարությունն ընդառաջեց, օրինակ, «ամերիկահայ տան» կառուցմանը, Երևանի գավառային գործկոմը հողամաս տրամադրեց քաղաքի ճիշտ կենտրոնում: Հայաստանում բնակելի շենքեր կառուցելու ուղղությամբ ամերիկահայ աշխատավորների նախաձեռնությունը լայն արձագանք գտավ նաև Ֆրանսիայի, Արգենտինայի, Հունաստանի հայ աշխատավորների մեջ:

Այդ ժամանակ բազմաթիվ հայրենասերներ ՀՕԿ-երի միջոցով դիմում են Սովետական Հայաստանի կառավարությանը և խնդրում թույլատրել մասնակցելու Հայաստանում ծավալվող բնակարանային շինարարությանը:

Այն կառուցումները, որ սկսվեցին ՀՕԿ-ի կողմից, իհարկե, մեծ բան չէին այն հսկա շինարարության կողքին, որ կատարվում էր պետության կողմից: Սակայն ՀՕԿ-ի ձեռնարկած գործի նշանակությունը մեծ էր բարոյա-քաղաքական տեսակետից:

1930—1935 թվականներին ՀՕԿ-ի լավ աշխատանքի շնորհիվ մի շարք հարուստներ, որոնք բարյացկամ էին տրամադրված դեպի Սովետական Հայաստանը, երես թեքեցին դաշնակներից և պատրաստակամություն հայտնեցին մասնակցելու ՀՕԿ-երի շինարարական աշխատանքներին:

Սովետական Հայաստանի նվաճումները, նրա հեղինակությունը գաղութահայ աշխատավորներին և բոլոր դեմոկրատական ուժերին համախմբում էր մեկ ընդհանուր հոսանքի մեջ:

«Սոցիալիստական հայրենիքի հմայքն ու հեղինակությունը,— գրել է Ա. Խանջյանը 1934 թվականին,— գնալով ավելի ու ավելի է աճում արտասահմանյան աշխատավորների մեջ: Սովորանում են ՀՕԿ-երի՝ Խորհրդային Հայաստանի բարեկամների այդ մասսայական կազմակերպությունների շարքերը արտասահմանի բոլոր գաղութներում: Անհրաժեշտ է, որ գաղութահայ աշխատավորներն է՛լ ավելի մեծ զանգվածներով խմբվեն ՀՕԿ-ի շուրջը, որպես մի կազմակերպության, որն անկեղծորեն ցանկանում է նյութապես և բարոյապես օգնել Խորհրդային Հայաստանի կառուցման գործին, ուժեղացնելու համար նրա դիրքերը»¹:

Սովետական Միությունում և Հայաստանում ձեռք բերված տնտեսական և կուլտուրական նվաճումները ոգևորում են սփյուռքի հայ աշխատավորներին: Գնալով ավելի է ամրապնդվում սփյուռքահայության կապերը սովետական կառավարության, մայր հայրենիքի հետ:

Այսպիսով, Հայաստանում սովետական կարգեր հաստատ-

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 588, թ. 8:

վելուց հետո արմատապես փոխվեց սփյուռքահայութեան վիճակը: Հայաստանը դարձավ հայ ժողովրդի վերածնունդի կենտրոնը, նրա նյութական ու հոգևոր կուլտուրայի ժառանգորդը: Ահա թե ինչու Սովետական Հայաստանը մագնիսի նման սկսեց է դեպի իրեն քաշել աշխարհով մեկ ցրված հայերին:

Հայաստանի աշխատավորները սիրով ընդունում են օտար երկրներից հայրենիք վերադարձած իրենց եղբայրներին ու բույրերին:

Հայրենագարծությունը հայ ժողովրդի երջանկության նկատմամբ կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության վառ դրսևորումներից մեկն է: Սովետական կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում հայրենագարծությանը: Հարկ չենք համարում այստեղ անդրադառնալ այն իրական օգնությանը, որ ցույց է տալիս պետությունը հայրենագարծ քաղաքացիներին՝ նրանց նյութական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար: Նշենք միայն հետևյալը, որ պետությունը հայրենագարծներին տալիս է վարկ՝ անհատական բնակարանային շինարարության համար, բացի դրանից, գյուղական վայրերում հայրենագարծներն ազատվում են պետական հանձնումից ու հարկերից: Մեծ ուշադրություն է դարձվում հայրենագարծներին կենսաթոշակ նշանակելու գործին, ինչպես նաև նրանց ավանների, գյուղերի, թաղերի բարեկարգմանը: Երևանի ծայրամասերում աճել են հայրենագարծներով բնակեցված բազմաթիվ ավաններ՝ Զեյթուն, Կիլիկիա, Նոր Արեշ, Մալաթիա, Կիրզա: Գեղեցիկ են այդ ավանները, բարեկարգ ու կուլտուրական, որտեղ ապրելու համար ստեղծվել են բոլոր պայմանները: Շատ ուրախ են հայրենագարծ քաղաքացիները, քանի որ օգտվում են հարազատ հայրենիքի բարիքներից, ծառայում են իրենց հայրենի երկրի բարօրությանը:

Սովետական իշխանությունը հայրենագարծների համար ստեղծում է բոլոր պայմանները, անմիջականորեն նրանց հաղորդակից դարձնելով ինչպես ռեսպուբլիկայի, այնպես էլ Միության տնտեսական, կուլտուրական և քաղաքական կյան-

քին: Հայրենագարծները դարձել են կոմունիստական շինարարության ակտիվ մասնակիցներ: **Նրանցից շատ-շատերը աշխատանքային փառաբանված հերոսներ են, շատերը՝ արդյունաբերության առաջավորներ են, գյուտարարներ, ռացիոնալիզատորներ, տեխնիկական պրոգրեսի դրոշակակիրներ:** Հայրենագարծները իրենց խոսքն են ասում կուլտուրայի, գիտության և արվեստի բնագավառներում: Նրանցից շատերը դարձել են արվեստի անվանի գործիչներ և հիացմունք են պատճառում ո՛չ միայն սովետական ժողովրդին: Հայրենիքը բարձր է գնահատում հայրենագարծ քաղաքացիների աշխատանքը: Նրանցից ոմանք ընտրվել են ՀՍՍՌ Գերագույն սովետի, աշխատավորների դեպուտատների քաղաքային ու շրջանային սովետների դեպուտատ:

Այսպիսով, պանդխտության մեջ երկար թափառելուց հետո, տասնյակ հազարավոր հայեր վերադարձան իրենց հայրենիքը՝ Սովետական Հայաստան: Սակայն մեծ թվով հայեր գեռևս գտնվում են օտարրության մեջ, նրանք նույնպես շարունակում են գալ իրենց նվիրական հայրենիքը:

Սփյուռքահայ աշխատավորության հայրենիքը Սովետական Հայաստանն է, որի հետ վաղուց ի վեր նրանք կապված են անկեղծ սիրով:

Հայաստանի օգնության կոմիտեն (204) լուծարքի ենթարկվեց Հայկական ՍՍՌ ժողովրդասովետի 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ: Մինչև այդ, 1925 թվականին լուծարքի էին ենթարկվել 204-ի Անդրկովկասյան, իսկ 1926 թվականին՝ սովետական մյուս ճյուղերը: 204-երի լիկվիդացումը պայմանավորված էր Հայաստանի և Սովետական Միության այն ժամանակվա ռեալ վիճակով: 204-ի կազմակերպումից՝ 1921 թ., մինչև լուծարքը՝ 1937 թ., Սովետական Հայաստանում տեղի էին ունեցել մեծ փոփոխություններ: ՀՍՍՌ-ը վերածվել էր առաջավոր, զարգացած ռեսպուբլիկայի, երկիրը հարստացել էր և դրսի օգնության կարիք չէր զգում: 204-ը

ժողովրդական տնտեսության վերականգնման ավարտման պահից սկսած դարձել էր սփյուռքահայ աշխատավորության և Սովետական Հայաստանի միջև կապի հիմնական օղակ: Այնուհետև այդ պատվավոր գործի համար ՀՍՍՌ Մինիստրների սովետին կից ստեղծվեց մի նոր պետական օրգան՝ Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերությունը, որը հաջողությամբ իրականացնում է այն բոլոր խնդիրները, որոնք վերաբերում են սփյուռքահայությանը:

Հավելվածներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՏԱՏՈՒՏԸ

Ա. Նպատակն ու խնդիրները

1. ՀՕԿ-ի անմիջական նպատակն է օգնության հասնել Հայաստանի սովյալ ազգաբնակչությանը և իր այդ գործունեության ընթացքում նաև օժանդակել երկրի ընդհանուր շինարարության գործին:
2. Հողված առաջինում առաջադրված նպատակին հասնելու համար կոմիտեն՝
 - ա) գանձում և հավաքում է դրամական, թե՛ իրերով և հատկապես մթերքներով նվիրատվությունները, ինչպես Հայաստանում, նույնպես և արտասահմանում, առանձնապես, արտասահմանյան հայ գաղութներում.
 - բ) փոխադրում և բախշում է այս ամենը թե՛ կառավարական և թե՛ իր մարմինների միջոցով.
 - գ) գրավոր թե բանավոր պրոպագանդա է մղում (հրատարակություններով, հրապարակային ժողովներով և այլն), և հատուկ նվիրակներ ու պատգամավորներ է ուղարկում արտասահման և հարաբերություն պահպանում արտասահմանի հասարակական այն օրգանների հետ, որոնք կարող են այդ նպատակի համար օգտակար լինել.
 - դ) ընդհանրապես ձեռք է առնում այն բոլոր օրինական միջոցները, որոնք անհրաժեշտ են համարվում ներկա ստատուտով նախատեսված նպատակներին հասնելու համար, առանձին ուղարկության առնելով հայ գաղութների աջակցությունը:

Բ. Միջոցներ

204-ի միջոցներն են կազմում.

ա) ընդհանրապես նվիրատվությունները և մասնավորապես հայ գաղութներից ստանալիք դրամական, թե՛ իրերով և թե՛ մթերքներով օգնությունը.

բ) հրատարակություններից, հավաքություններից և այլ տեղերից ստացած մասնակի մուտքերը:

Գ. Կազմակերպությունը

4. 204-ի կազմն է՝

ա) ընդհանուր ժողով,

բ) նախագահություն

գ) վերստուգիչ հանձնաժողով:

5. Նախագահությունը հանդիսանում է կոմիտեի բարձրագույն գործադիր մարմինը, որը գործում է ներկա ստատուտի շրջանակներում և ընդհանուր ժողովների որոշումների ու հրահանգների համաձայն:

Կ. Իրավական դրությունը

6. 204-ն իր նպատակներով և թե իր կազմակերպական սխեմանով, անկախ իր անդամների քաղաքական դավանանքից և կուսակցական հանգամանքից, հասարակական մարմին է և, իբրև այդպիսին, նա իրեն հայտարարում է շեզոք՝ քաղաքական և կուսակցական պայքարի հանդեպ:

7. 204-ը ենթակա է բացառապես ժողկոմների խորհրդի հսկողությանը և ազատ է առանձին ժողկոմների, ինչպես նաև տեղական իշխանությունների իրավասությունից:

8. Կոմիտեի անդամները իրենց գործունեության միջոցին և այդ գործունեության առթիվ կատարած հանցանքների համար պատասխանատու են անհատականորեն և ոչ թե հավաքականորեն և միաժամանակ ընդդատյա են միմիայն ժողովրդական դատարաններին:

9. 204-ն իրավաբանական անձ է և ունի իր սեփական կնիքը: Կոմիտեի հասցեով ուղարկված դրամները, իրերը և ընդհանրապես ամբողջ գույքը ազատ են պետականացումից,

բռնագրավումից և այլ սահմանափակիչ օրենքներից և միաժամանակ ներքին թե արտաքին փոխադրությունների ընթացքում օգտվում են պետական գույքերի վերապահված արտոնություններով:

10. Կոմիտեն իր տրամադրության տակ եղած դրամները, ընդհանրապես գույքը գործադրում է սույն ստատուտով նախատեսված նպատակների սահմաններում ըստ իր հայեցողության, իսկ իր նպատակներին համապատասխան հատուկ նվերները գործադրում է համաձայն նվիրատուի կամքին:

11. Կոմիտեն իրավագոր է գրավոր, թե՛ բանավոր զեկուցումներ ներկայացնել, դիմումներ անել ժողկոմների խորհրդի նախագահին և առանձին ժողկոմներին իր գործունեության հետ կապված և նրանից բխող հարցերի մասին, ստանալով նրանցից, ինչպես և ընդհանրապես խորհրդային իշխանության կենտրոնական թե տեղական մարմինների կողմից լայն աջակցություն:

Կոմիտեի կենտրոնն է Երևանը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ»

1921 թ. սեպտեմբեր¹:

Գ Ե Կ Ի Ե Տ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ» ստեղծելու մասին

15 սեպտեմբերի 1921 թ.

Ի նկատի ունենալով մի շարք հասարակական գործիչների խնդրանքը՝ հաստատել իրենց կազմած «Հայաստանի օգնություն կոմիտեն», որի նպատակն է օգնություն հասնել Հայաստանի սովյալ ազգաբնակչությանը և իր այդ գործունեության ընթացքում նաև օժանդակել երկրի ընդհանուր շինարարության գործին:

¹ ՀՍՍՌ ՀՌՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 5, թ. 1—2:

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը որոշեց ներկայացված ստատուտը հաստատել և թույլատրել կոմիտեին ըսկըսելու իր գործունեությունը հիշված նպատակի սահմաններում:

ՀեՍՀ Ժողկոմխորհի նախագահ՝ Ա. Մյասնիկյան
Քարտուղար՝ Մ. Ղառաբեկյան¹

ՀՕԿ-ի ՃՅՈՒՂԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻՄ

(Հաստատված Հայաստանի օգնության կոմիտեի գլխավոր վարչության կողմից 1925 թ. հունվարի 23-ին):

1. ՀՕԿ-ը իրավունք ունի բանալու իր ճյուղերը Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության սահմաններից դուրս այն բոլոր վայրերում, ուր կան հայկական «գաղութներ»:

2. ՀՕԿ-ի ճյուղերը բացվում են տեղական, բարեգործական, կուլտուրական և հասարակական մարմինների կամ գործիչների ու լիազորների նախաձեռնությամբ:

3. ՀՕԿ-ի ճյուղերը իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են ՀՕԿ-ի կենտրոնական կոմիտեի ստատուտով և ՀՕԿ-ի համագումարների որոշումներով²:

¹ ՀՍՍՌ ՀՈՍՇՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 5, թ. 1:

² Նույն տեղը. գ. 335, թ. 44:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|------------|
| Երկու խոսք | 3 |
| 1. Սովետական Ռուսաստանի և Հայաստանի պարենային վիճակը 1921—1922 թվականներին | 6 |
| 2. Հայաստանի օգնության կոմիտեի հիմնադրումը, նպատակը և խնդիրները | 33 |
| 3. ՀՕԿ-երի մասնակցությունը Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման աշխատանքին | 59 |
| ա) Հայաստանի օգնության Մոսկվայի կոմիտեի գործունեությունը | 63 |
| 4. ՀՕԿ-ը որպես շաղկապ ու տեղեկատու հասարակական մարմին սփյուռքահայության և Սովետական Հայաստանի միջև | 74 |
| 5. Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը ներգաղթի իրականացման համար | 82 |
| 6. Նոր ավանների հիմնադրումը Սովետական Հայաստանում և ՀՕԿ-ի, հայրենակցական ու վերաշինաց միությունների դերը այդ գործում | 87 |
| ա) ՀՕԿ-ի և հայրենակցական միությունների փոխհարաբերությունները | 101 |
| 7. Գաշնակների քայքայիչ աշխատանքը ՀՕԿ-երի դեմ Սփյուռքահայության հայրենիքը Սովետական Հայաստանն է Հավելվածներ | 105 119 |

Հայաստանի օգնության կոմիտե

Խմբագիր՝ Հ. Ա. Կնյազյան
Նկարիչ՝ Ա. Բ. Ջաֆարյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Տ. Դաֆեսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ն. Դշխոյան

Հանձնված է արտադրության 3/V 1966 թ.:
Ստորագրված է տպագրության 6/X1966 թ.:
Թուղթ՝ տպագրական № 1, $84 \times 108^{1/32}$,
տպ. 7,75 մամ. = 6,35 պայմ. մամ., հրատ. 5,4 մամ. Գինը՝ 17
ՎՖ 06871, պատվեր 1154, տիրած 3000.
«Հայաստան» հրատարակչություն, Երևան, 9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր մամուլի կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության
պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91: